Լուսաւոր

1971

Հ

Аж 146

ԻԸ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1971



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՌԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՆՈՐԻՆ
ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝
ՆՐԱ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Սոֆիա

Հանուն հայ առաքելական եկեղեցու մեծ ուրախությամբ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը և աղոթում, որ Տերը Ձեզ պարգևի հովվապետական առաքելության շատ երկար տարիներ փայլուն արդյունքներով՝ ի փառս բուլղար ժողովրդի քրիստոնեական հավատքի ու մշակույթի:

Ընդունեցեք նաև անկեղծ համակրանքը և սերը ամբողջ հայ հոգևորականության և ժողովրդի, որոնք պատմականորեն և այնքան անկեղծորեն եղբայրացած են ձեր եկեղեցու և ձեր ազնիվ ժողովրդի զավակների հետ:

Թող միշտ պայծառ մնա մեր եկեղեցիների և ժողովուրդների պատմական բարեկամությունը:

Ձեր հարազատ Եղբայրը ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

31-ը հուլիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԺՆԵՎՈՒՄ

Հուլիսի 9—25 օրերին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի վերաբերյալ մի շարք գործնական հարցերով անձամբ զբաղվելու և կարգավորելու համար, ոչ պաշտոնական այցելությամբ լինում է Ժնևում:

Այս առթիվ Հայոց Հայրապետը մի անգամ ևս անձամբ Իր օրհնություններն ու ողջույններն է բերում Ժնևի հայ համայնքին և ունկնդրություն է շնորհում մի շարք ազգայինների, որոնք փութացել էին Ժնև Ֆրանսիայից, Իտալիայից և Անգլիայից՝ ողջունելու Նորին Սրբությանը և բարի գալուստ մաղթելու:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը:

Հուլիսի 9-ին, ուրբաթ օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից մեկնում է Ժնև, ուր Նրան դիմավորում են հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, գաղութի վարչության անդամները՝ վարչության նախագահ Շարլ Փիլիպոսյանի, և եկեղեցական վարչության անդամները՝ ատենապետ Կարպիս Ղազարյանի գլխավորությամբ:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են նաև օդանավակայանում Ժնևի հայոց նորակերտ ս. Հակոբ եկեղեցու շինության բարերար Հակոբ Թոփալյանը, ազգայիններ Էժեն Փափազյանը, Կրոնիկ Փափազյանը և գաղութի այլ անդամներ և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ են մաղթում նաև տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքճյանները (Լոնդոն), Մուշեղ Ճիերճյանը (Մոնակո), Ստեփան Սրապյանը (Միլանո), Մկրտիչ Ճիլեֆյանը (Ստամբուլ):

Հուլիսի 11-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը ս. պատարագ է մատուցում Ժնևի հայոց ս. Հակոբ եկեղեցում:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Բանին կենաց քարոզությամբ միսիթարում է Ժնևի Իր հոգևոր զավակներին՝ բաշխելով Իր օրհնությունը և տալով հայրապետական Իր պատգամը:

Նորին Սրբությունը քարոզի վերջում հայրապետական Իր բարձր գնահատությանն ու ուշադրությանն է արժանացնում Ժնևի հայոց գաղութային և եկեղեցական վարչությունների եկեղեցաշեն գործունեությանը և օրհնում անունն ու գործը եկեղեցու շինության բարերար Հակոբ Թոփալյանի. «Երանի՜ եկեղեցի շինողաց»:

Ժամը 16.30-ին հյուրանոցի Իր հարկաբաժնում Հայոց Հայրապետը ընդունում է այցելությունը ս. Ղազարի Մխիթարյան միաբանության նորընտիր աբբահոր՝ հայր Պողոս վրդ. Անանյանի, որ այս առթիվ հատկապես ժամանել էր Ժնև՝ ողջունելու Նորին Սրբությանը՝ ընկերակցությամբ հայր

Ներսես վրդ. Տեր-Ներսիսյանի և հայր Հովսեփ վրդ. Պեհեսնիլյանի:

Հուլիսի 13-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը այցելում է Ժենևում Միացյալ ազգերի կազմակերպության մոտ Սովետական Միության մշտական ներկայացուցիչ տիկին Մոտալովային:

Նույն օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը ոչ պաշտոնական այցելություն է տալիս Ժենևում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին: Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկը ջերմորեն ու եղբայրական սիրով ողջունում է Հայոց Հայրապետին ու բարի գալուստ մաղթում:

Հայոց Հայրապետի և դոկտ. Է. Կ. Բլեյկի միջև տեղի է ունենում բարեկամական զրույց՝ մտերմիկ մթնոլորտում:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է օրհնել տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքճյանների սեղանը: Այս առթիվ Ժորժ և Մոնի Քյուրքճյան եղբայրները ուրախացնում են Նորին Սրբությանը իրենց 20000 դոլլարի նվիրատվությամբ՝ Հայաստանում մի պատմական եկեղեցու վերանորոգման համար:

Հուլիսի 13-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը ժամանում է Ժենև՝ ողջունելու համար Հայոց Հայրապետին և բարի գալուստ մաղթելու:

Հուլիսի 14-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը նախագահում է Ժենևի եկեղեցական վարչության ատենապետ Կարպիս Ղազարյանի կազմակերպած ճաշկերույթին, Ժենևի «Օթել դը լա Պե»-ի մեջ:

Հուլիսի 16—20 օրերին Վեհափառ Հայրապետը տ. Սերովբե արքեպիսկոպոսի և տ. Գևորգ ծ. վարդապետի հետ մասնավոր հյուրն է լինում տիար Երվանդ Հյուսիսյանի, Ինտերլակենյում:

Հուլիսի 21-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Ինտերլակենյից վերադառնում է Ժենև:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը նախագահում է Ժենևի գաղութային վարչության նախագահ տիար Շարլ Փիլիպոսյանի կազմակերպած ճաշկերույթին:

Հուլիսի 22-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ժենև է ժամանում Լոնդոնի հայրապետական պատվիրակ տ. Պասակ արքեպ. Թումանյանը՝ ողջունելու և բարի գալուստ մաղթելու Հայոց Հայրապետին:

Հուլիսի 22—25 օրերին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է մի շարք ազգայինների և Ժենևում եկեղեցական հարանվանությունների ներկայացուցիչների և թղթակիցների այցելությունները:

Հուլիսի 25-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ժենևի հայոց համայնքից:

Դեպի Մոսկվա Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին տ. Ներսես և տ. Գևորգ ծ. վարդապետները:

Մոսկվայի Դոմոդեդովի օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հայոց առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Հուլիսի 26-ին, երկուշաբթի օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը այցելում է համայն Ռուսաստանի և Մոսկվայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին:

Երկու եկեղեցիների հոգևոր պետերի միջև տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

Տ. Պիմեն Պատրիարքը Հայոց Հայրապետի պատվին տալիս է ճաշկերույթ, որն անցնում է շատ ջերմ մթնոլորտում:

Հուլիսի 27-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ՝ ընկերակցությամբ տ. Գևորգ, տ. Ներսես և տ. Արսեն վարդապետների:

Մոսկվայի օդանավակայանում Հայոց Հայրապետին անձամբ ճանապարհում է համայն Ռուսաստանի և Մոսկվայի Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը՝ շրջապատված միտրոպոլիտներով:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև տ. Պարգև եպիսկոպոսը:

Մոսկվայի Դոմոդեդովի օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

1970 թվականի հոկտեմբերի 12-ին վախճանվում էր Եթովպիայի քույր եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Աբունա Բասիլիոսը:

1971 թվականի ապրիլին կատարվում էր նորընտիր Պատրիարքի ընտրությունը, ըստ Եթովպիայի եկեղեցու սահմանադրության: Պատրիարք էր ընտրվում Պատրիարքի պաշտոնակատար Թեոֆիլոս միտրոպոլիտը: Նորին Վեհափառություն Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի նախագահությամբ նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությունը որոշվում էր կատարել մայիսի 9-ին Ադիս-Աբեբայի ս. Երրորդություն Մայր տաճարում:

Այս առթիվ Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեն ապրիլ 22 թվակիր հետևյալ հրավերն էր ուղարկում Հայոց Հայրապետին, որպես հայ եկեղեցու գերագույն պետի՝ մասնակցելու նորընտիր Պատրիարքի՝ Նորին Սրբություն Աբունա Թեոֆիլոսի գահակալության հանդիսությանը՝ բաժանելու Եթովպիայի քույր եկեղեցու և ժողովրդի ուրախությունը.

«Եթովպիայի ուղղափառ եկեղեցու նորընտիր Պատրիարքի՝ Նորին Սրբություն Աբունա Թեոֆիլոսի գահակալության հանդիսությունը տեղի է ունենալու Ադիս-Աբեբայում, 1971 թվականի մայիսի 9-ին:

Մեծ հաճույքով է, որ այս հրավերը հղում ենք Ձերդ Սրբությանը՝ ներկա լինելու այս բարեբաստիկ հանդիսությանը: Ձեր ներկայությունն անկասկած առավել պիտի զորացնի մեր երկու քույր եկեղեցիների միջև գոյություն ունեցող հարաբերությունները:

Ձեր աղոթքներում հիշեցեք նաև Մեզ:

ԿԱՅՍՐ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ»

Հայոց Հայրապետը, գոհունակությամբ ընդունելով կայսերական հրավերը, նշանակում էր հայրապետական մասնավոր պատվիրակություն Հայաստանյայց եկեղեցու և Իր անունից մասնակցելու նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությանը: Հայրապետական պատվիրակության կազմի մեջ էին մտնում Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և վրաթայոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, եգիպտահայ թեմի առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը և Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը:

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը մայիսի 4-ին մեկնում էր Մայր Աթոռից և մայիսի 6-ին ժամանում Կահիրե և մայիսի 7-ին եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանի հետ միասին՝ որպես անդամ պատրիարքական գահակալության հանդիսության հայ եկեղեցին ներկայացնելով պատվիրակության, ժամանում են Ադիս-Աբեբա:

Հայ եկեղեցու բարձրաստիճան երկու ներկայացուցիչները օդանավակայանում դիմավորվում են եթովպիական եկեղեցու բարձ-

ԵԹՈՎՊԻԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՒՆԱ ԹԵՈՖԻԼՈՍ ՆՈՐԸՆՏԻՐ
ՊԱՏՐԻԱՐՔԸ

բաստիճան հոգևորականների, կայսերական Տան նախարարի և հայ համայնքի ազգային-եկեղեցական մարմինների կողմից, գլխավորությամբ հոգևոր հովիվ տ. Շնորհք վրդ. Գասպարյանի, որը նույնպես ի պաշտոնե դառնում է մեր եկեղեցին և Մայր Աթոռը ներկայացնող եկեղեցական պատվիրակության անդամը:

Մայիսի 8-ին, շաբաթ օրը, հյուրանոցում մեր պատվիրակության անդամները ընդունում են այցելությունը քույր եկեղեցու ներկայացուցիչների: Երեկոյան մեր սրբազանները, հանուն Հայոց Հայրապետի, իրենց առաջին այցելությունն են տալիս նորընտիր Աբունա Թեոֆիլոս Սրբազան Պատրիարքին, նրա պատրիարքական դահլիճում, և հաղորդում Հայոց Հայրապետի եղբայրական ողջույններն ու շնորհավորանքը:

Մայիսի 9-ին, կիրակի օրը, Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի ներկայությամբ Ադիս-Աբեբայի ս. Երրորդություն Մայր տաճարում տեղի է ունենում հանդիսավոր ս. պատարագ և նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությունը, որին մասնակցում են նաև տ. Կոմիտաս, տ. Զավեն եպիսկոպոսները՝ եկեղեցական լրիվ զգեստավորման մեջ՝ ի շարս քույր եկեղեցիների այլ ներկայացուցիչների:

Գահակալության հանդիսության որոշ մի պահի և ըստ ծրագրի մեր պատվիրակ սրբազանները «Հրաշափառ»-ով և հանդիսավորությամբ ս. Սեղան են բարձրացնում Ամենայն Հայոց Հայրապետի ապրիլ 29 թվակիր շնորհավորական կոնդակը («Էջմիածին», 1971, ապրիլ, էջ 3), որը գրված էր Եթովպիայի եկեղեցու նորընտիր Պատրիարքի ընտրության ուրախ առիթով:

Ս. Սեղանից տ. Զավեն եպիսկոպոսը ի լուր ժողովրդյան ընթերցում է Հայոց Հայրապետի շնորհավորական կոնդակը, որի ամհարերեն լեզվով թարգմանությունը ընտիր և գեղեցիկ տպագրությամբ նախապես կատարված Ադիս-Աբեբայի ազգային-եկեղեցական իշխանությունների կողմից՝ ներկայացվում է կայսրին, գահաժառանգ իշխանին, պալատականներին, քույր եկեղեցու ներկայացուցիչներին:

Այնուհետև մեր երկու սրբազանները կատարում են «Հայրապետական մաղթանք»՝ «յերկարակեցութիւն և յարնշատութիւն» նորընտիր Պատրիարքի, «ի հաստատութիւն ուղղափառ եկեղեցւոյ, յերկիր խաղաղութիւն, և ի բարօրութիւն հայրենեաց Եթովպիոյ և յանսասանութիւն գահին կայսերական»:

Հավարտ ս. պատարագի նորընտիր Պատրիարքին շնորհավորում են կայսրը, քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հույն օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Տ. Նիկողայոս Զ-ը, ռումին եկեղեցու Տ. Ժուստինիան Պատրիարքը, ղպտի եկեղեցու Պատրիարքի պաշտոնակատար եպիսկոպոսը, Կ. Պոլսի հունաց տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչը, Մոսկվայի և համայն Ռուսաց պատրիարքության անունից՝ տ. Նիկոդիմ միտրոպոլիտը, Երուսաղեմի հունաց Պատրիարքի ներկայացուցիչը, Հռոմի Սրբազան Պապի նվիրակը, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Կիպրոսի, Հունաստանի Աթոռների ներկայացուցիչներ և այլն:

Վերջում շնորհակալության ջերմ խոսք է ասում նորընտիր Աբունա Թեոֆիլոս Պատրիարքը:

Աբունա Թեոֆիլոսի ընտրությամբ և գահակալությամբ եթովպիական քույր եկեղեցին դարձավ ինքնագլուխ և անկախ, ղպտի և եթովպիական եկեղեցիների եղբայրական համաձայնությամբ և կանոնական որոշումով:

Ինչպես հայտնի է, մինչ այդ Եթովպիայի եկեղեցու Պատրիարքի ընտրությունը ենթակա էր ղպտի եկեղեցու պատրիարքության հաստատման:

Մայիսի 11-ին մեր եկեղեցու պատվիրակությունը այցելում է նորընտիր Պատրիարքին, որի հետ ունենում է մտերիմ զրույց՝ էկումենիկ ոգով:

Այս առթիվ Աբունա Թեոֆիլոսին է հանձնվում Ամենայն Հայոց Հայրապետի նվերը՝ ձույլ ոսկի, հայկական եկեղեցական արվեստի ոճով Մայր Աթոռում պատրաստված ս. Աստվածածնի քանդակ-սրբապատկերը:

Մայիսի 12-ին, չորեքշաբթի օրը, հայ եկեղեցու պատվիրակությունը արժանանում է կայսերական ընդունելության:

Հանուն Հայոց Հայրապետի տ. Կոմիտաս եպիսկոպոսը, ողջունելով Նորին կայսերական վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ին, ասում է.

«Ուրախ ենք ու երջանիկ, որ ընդառաջելով Ձերդ օգոստափառ կայսերական վեհափառության հրավերին, մենք նշանակվեցինք՝ ներկայացնելու Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կողմից: Մայր տաճարում մենք մասնակցեցինք ձեր եկեղեցու արժանընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությանց, մեր աղոթքները միախառնեցինք, որպեսզի ամուր, հաստատուն ու պայծառ լինի Եթովպիո ս. եկեղեցին իր առաջին անկախ պատրիարքի ու Ձերդ կայսերական վեհափառության հովանիին տակ:

Այսօր ձեզ բերում ենք Ամենայն Հայոց Հայրապետի սրտագին շնորհավորանքներն ու անկեղծ ուրախությունը, ինչպես նաև Հայաստանյայց եկեղեցու հոգևոր դասի, այն մասին, որ վերջերս թափուր մնացած Եթովպիո պատրիարքական Աթոռը իր արժանավոր գահակալը ունեցավ հանձին Նորին Ամենապատվություն Աբունա Թեոֆիլոսի:

Հանուն մեր եկեղեցու, նրա գերագույն պետի ու բոլոր հայ հավատացյալների, աղոթում ենք, որպեսզի Ձեր օգոստափառ իշխանության տարիներին՝ գեղեցիկ Եթովպիան միշտ ապրի խաղաղ ու բարգավաճ. պայծառանան թող ձեր ս. եկեղեցիներն ու վանքերը և առավել ամրապնդվի խաղաղությունը ժողովուրդների միջև:

Խնդրում ենք Ձերդ կայսերական վեհափառությունից ընդունել Ամենայն Հայոց Հայրապետի ձոնագրյալ «Հայկական եկեղեցիներ» ալբոմը»:

Նորին վեհափառություն կայսրը, խորապես զգացված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններից և բարեմաղթություններից, սրտագին շնորհակալություն է հայտնում, որ Նորին Սրբությունը բարեհաճել է ս. Էջմիածնից մասնավոր եկեղեցական պատվիրակություն ուղարկել Ադիս-Աբեբա՝ ներկա լինելու պատրիարքական գահակալության հանդիսություններին, բաժանելու եթովպական գահի, եկեղեցու և հավատացյալ ժողովրդի այս պատմական ուրախությունը:

Այնուհետև շարունակելով իր խոսքը կայսրը շեշտում է, որ իր սրտի բարի ցանկությունն է եղել միշտ, որ եղբայրական, սրտագին հարաբերություններ գոյություն ունենան քույր եկեղեցիների միջև, այդ թվում նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու և եթովպական եկեղեցու միջև, որոնք միմյանց հետ պատմականորեն և ներկայիս էլ կապվել են դարավոր բարեկամությամբ և եղբայրական սիրով:

Իր խոսքի վերջում Նորին Վեհափառությունը խնդրում է իր սերն ու հարգանքը, երախտագիտությունն ու բարեմաղթությունները ներկայացնել Հայոց Հայրապետին, հայ եկեղեցու հոգևորականությանը և հավատացյալ ժողովրդին:

Հայ և եթովպական քույր եկեղեցիներն ու ժողովուրդները միմյանց հետ կապված են սուրբ Ավետարանի լույսի ներքո՝ ի Քրիստոս դարավոր ու անխախտ եղբայրությամբ:

Մեր օրերին, էկումենիկ շարժման այս ժամանակաշրջանում, քրիստոնեական սիրո և եղբայրության այս կապերն է՛լ ավելի են ամրապնդվում փոխադարձ այցելություններով, երկու եկեղեցիների միջև, մասնավոր բաջալերությամբ քրիստոնեական հավատքի պաշտպան՝ քրիստոսապսակ Հայլե Սելասիե Ա կայսրին, որ մեծ բարեկամն է Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու և հայ ժողովրդի:

Եթովպիայի քույր եկեղեցու նորընտիր Պատրիարք Աբունա Թեոֆիլոսը բազմակողմանիորեն պատրաստված, հավատավոր ու հայրենասեր հոգևորական է, մեր օրերի քրիստոնյա աշխարհի հոգևոր առաջնորդներից մեկը, միաժամանակ նաև ազնիվ բարեկամը հայ եկեղեցու և հայ ժողովրդի:

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ՄԻ ՊԱՀ



ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

1971 թվականի մարտի 7-ին վախճանվում էր բուլղար օրթոդոքս եկեղեցու Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքը (1901—1971), որի 18-ամյա պատրիարքական գահակալությամբ բուլղար օրթոդոքս եկեղեցին ապրեց իր հոգևոր ու եկեղեցական զարթոնքի փառավոր շրջաններից մեկը:

Ըստ բուլղար եկեղեցու սահմանադրության, չորսամսյա սգի կանոնական շրջանից հետո կատարվում է նորընտիր պատրիարքի ընտրությունը:

Տ. Կիրիլ Սրբազան Պատրիարքի վախճանումից հետո, տեղապահության պաշտոնը վարում է Սինոդի կողմից ընտրված տ. Պիմեն միտրոպոլիտը:

Սրբազանը Սինոդի 19 մայիս թվակիր նիստի որոշումով նոր պատրիարքի ընտրությունը նշանակվում է հուլիսի 4-ին, կիրակի օրը:

Հուլիսի 4-ին, առավոտյան ժամը 9-ին, Սոֆիայի ս. Ալեքսանդր Նևսկու անվան Մայր տաճարում պաշտվում է ս. պատարագ: Ապա 8.45—10-ը գումարվում է ս. Բորիս թագավորի անվան սինոդական պալատի շքեղ դահլիճում պատրիարքական ընտրական նիստը, ուր, աստվածային տնօրինությամբ և ս. Հոգու առաջնորդությամբ, բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք և Սոֆիայի միտրոպոլիտ է ընտրվում Լովեչի Ն. Ս. Տ. Մաքսիմ միտրոպոլիտը:

Նորընտիր Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքի գահակալության պաշտոնական հանդիսությունը նույն օրը, ժամը 11-ին, դարձյալ կատարվում է Սոֆիայում, ս. Ալեքսանդր Նևսկու անվան փառավոր Մայր տաճարում:

Բուլղար օրթոդոքս եկեղեցու ուրախությունը բաժանելու և գահակալության հանդիսությանց մասնակցելու համար Սոֆիա էին ժամանել քույր եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ ու պատվիրակություններ:

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը անձամբ էր գլխավորում ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանը:

Ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանն անձամբ գլխավորում էր Ն. Ս. Տ. Ժուստինիան Սրբազան Պատրիարքը:

Նորին Սրբություն Տ. Եփրեմ Բ Պատրիարք-կաթողիկոսը գլխավորում էր վրաց պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանը:

Կ. Պոլսի տիեզերական, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Սերբիայի օրթոդոքս պատրիարքությունները, Կիպրոսի, Աթենքի արքեպիսկոպոսությունները, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ֆինլանդիայի, Նյու-Յորքի, Ճապոնիայի օրթոդոքս եկեղեցիները, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԺԵՆ) ուղարկել էին, միտրոպոլիտների արքեպիսկոպոսների գլխավորությամբ, պաշտոնական պատվիրակություններ, ինչպես

նաև խաղաղության պաշտպանության քրիստոնեական գանազան կազմակերպությունները:

Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Բուլղարիայի նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսությանը Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու Հայաստանյայց առաքելական եկեղեցին ներկայացնում էին՝ Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ պրն. Օննիկ Ասլանյանը:

Հուլիսի 3-ին Ամենայն Հայոց Հայրապետը մասնավոր գրությամբ շնորհավորում էր նորընտիր Սրբազան Պատրիարքին: Հայոց Հայրապետի շնորհավորական գիրը տպվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Գահակալության հանդիսության եկեղեցական մասի ավարտից հետո ս. Ալեքսանդր Նևսկու անվան Մայր տաճարում նորընտիր Պատրիարքն ընդունում է շնորհավորանքներ՝ հանդիսությանը ներկա հոգևոր պետերի, պատվիրակությունների, ինչպես նաև պետական անձնավորությունների:

Հանդիսության ընթացքում, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Բուլղարիայի նորընտիր Պատրիարքին շնորհավորում է նաև, ի պաշտոնե, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և հանդիսավորապես նրան է հանձնում Հայոց Հայրապետի թանկագին նվերը՝ Աստվածամոր ոսկե քանդակ-նկարը՝ պատրաստված Երևանի վարպետ ոսկերիչների կողմից:

Պատրիարքական ընտրության և գահակալության հանդիսությունները տևում են հուլիսի 4—9 օրերը:

Հայ եկեղեցու պատվիրակությունը, մյուս եկեղեցիների պատվիրակությունների հետ միասին, մասնակցում է գահակալության առթիվ կազմակերպված ուխտագնացություններին և ընդունելություններին:

Հուլիսի 5-ին ուխտագնացություն է կատարվում դեպի Ռիլայի վանքը, հուլիսի 7-ին՝ Պլովդիվի Պաչկովոյի վանքը, որ ամփոփված է Տ. Կիրիլ հանգուցյալ Պատրիարքի անյունը: Այստեղ, հանգուցյալ Պատրիարքի գերեզմանի վրա, կատարվում է հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ մասնակցությամբ բոլոր հյուրերի և պատգամավորների:

Հուլիսի 5-ին, ի պատիվ հյուրերի և պատգամավորների, «Բալկան» մեծ հաշարանում տրվում է հրաժեշտի պաշտոնական ընդունելություն, որին մասնակցում են նաև Մայր Աթոռի ներկայացուցիչ տ. Տիրայր եպս. Մարտիկյանն ու պրն. Օննիկ Ասլանյանը:

Ընդունելության ժամանակ Բուլղարիայի թեմական խորհրդի ատենապետ պրն. Օննիկ Ասլանյանը, հանուն բուլղարահայ թեմի ազգային-եկեղեցական իշխանությանց և ժողովրդի, ընթերցում է հետևյալ ողջույնի ջերմ խոսքը.

«Ձերդ Սրբություն,

Հարգելի սեղանակիցներ,

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո արժանավոր գահակալ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն Վազգեն Ա-ը մեզի պարտականություն հանձնեց ողջունել Ձերդ Սրբությունը՝ բուլղար օրթոդոքս սուրբ եկեղեցվո նորընտիր գահակալը, ու ես կկատարեմ սույն հանձնարարությունը այն ուրախությունով, որ կպատճառե բուլղար եկեղեցվո և բուլղար ժողովուրդի կյանքին մեջ տեղի ունեցող այս խոշոր դեպքը:

Տեղին է վեր առնել ու ընդգծել, որ բուլղար ժողովուրդը և բուլղար եկեղեցին թանկագին են հայ եկեղեցվո ու անոր առաքելական եկեղեցվո պատմական հուշին մեջ:

Հայտնի է Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի տածած մասնավոր հարգանքը բուլղար ժողովուրդի և բուլղար կղերին նկատմամբ, որոնք բուլղարական հողին վրա ընդունած են, հոգածություն և եղբայրական սեր ցույց տված են հայերուն՝ ծանր տառապանքներու տարիներուն:

Հանուն այս զգացումներուն և եղբայրության ու խաղաղության, բարօրության և տեվական վերելքի հանդեպ երկու ժողովուրդներու միասնական ձգտումներուն, Նորին Սրբություն կաթողիկոս Վազգեն Ա-ի անունով, հանուն հայ ժողովուրդին ու անոր սուրբ եկեղեցվույն, Ձերդ Սրբության կմաղթեմ երջանիկ ծառայություն՝ հանդեպ բուլղար եկեղեցվո ու եղբայրական բուլղար ժողովուրդին, ինչպես նաև աշխարհի ժողովուրդներուն միջև եղբայրության ու խաղաղության վսեմ իդեալներուն:

Թող Աստված Իր շնորհքը պարգևե Ձեր բարձրագույն ծառայության մեջ»:

Ապա Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, ողջունելով և շնորհավորելով նորընտիր Տ. Մաթսիմ Սրբազան Պատրիարքին, հուլիսի 5-ի պաշտոնական ընդունելության ժամանակ ասում է.

«Ձերդ Սրբություն,

Հարգելի սեղանակիցներ,

Հայ առաքելական սուրբ եկեղեցին և նրա

ԲՈՒԼՂԱՐ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՄԱՔՍԻՄ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ

արժանավոր գահակալը՝ Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը, ինձ վրա պարտք է դրել ողջունել Ձերդ Սրբությանը բուլղար սուրբ եկեղեցու նորընտիր գահակալիդ: Ես սույն հայրապետական հանձնարարությունը կատարում եմ այն ուրախությամբ, որ այս խոշոր դեպքը նշանակալից է բուլղար եկեղեցու և բուլղար ժողովրդի կյանքի մեջ:

Տեղին է վեր հանել ու ընդգծել, թե բուլղար ժողովուրդը և բուլղար եկեղեցին թանկագին են հայ ժողովրդի ու նրա առաքելական եկեղեցու համար պատմական հուշերի մեջ:

Հայտնի է Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա-ի մասնավոր հարգանքը հանդեպ բուլղար ժողովրդին և բուլղար հոգևորականությանը, որոնք բուլղար հողի վրա հայերին ասպնջականություն, հոգածություն և եղբայրական սեր են ցույց տվել ծանր տառապանքի տարիներին:

Հանուն սույն հարգանքի և եղբայրական զգացմունքի, ինչպես նաև հանուն երկու ժողովուրդների բարօրության, հանուն Նորին Սրբություն Վազգեն Ա-ի, հանուն հայ ժողովրդի ու նրա սուրբ եկեղեցու, Ձերդ Սրբությանը մաղթում ենք երջանիկ հովվապետություն ի պայծառություն բուլղար եկեղեցու, ինչպես նաև աշխարհի ժողովուրդների միջև եղբայրության վեհ իդեալների հաղթանակի:

Թող Տերը Ձեզ շնորհի Իր օրհնությունը՝ Ձեր նոր սրբազան ու վեհ ծառայության մեջ»:

Հուլիսի 9-ին, առավոտյան, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և թեմականի ատենապետ պրն. Օննիկ Ասլանյանը պատրիարքարանի հանդիսությանց դահլիճում հրաժեշտի այցելություն են տալիս Նորընտիր Պատրիարք Սրբազանին, որը, շրջապատված Սինոդի սրբազան անդամներով, ջերմորեն ընդունում է Հայոց Հայրապետի պաշտոնական ներկայացուցիչներին:

Նորին Սրբությունը, ողջունելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու ներկայացուցիչներին, արտագին շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին, որ բարեհաճել էր գահակալության հանդիսություններին ուղարկել մասնավոր պատվիրակություն, և խնդրում՝ իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթությունները հաղորդել Ն. Ս. Օծությանը, որը բուլղար եկեղեցու և ժողովրդի մեծ ու անկեղծ բարեկամն է:

Սրբազան Պատրիարքը թանկագին, հուզիչ տպավորություններ է պատմում 1958 թվականին հանգուցյալ Տ. Կիրիլ Պատրիարքի հետ ս. Էջմիածին իր այցելությունից:

Նորընտիր Պատրիարքի այս ջերմ արտահայտությունների վրա բոլոր ներկաները ոտքի են կանգնում և աղոթում Հայոց Հայրապետի կյանքի արևշատության համար և միաբերան երգում՝ «Երկար տարիներ Հայոց Հայրապետին» («Многое лето») օրհներգը:

Այս առթիվ տ. Տիրայր եպիսկոպոսը, հանուն բուլղարահայ թեմի ազգային-եկեղեցական իշխանությանց և հայ հավատացյալ ժողովրդի, նորընտիր Սրբազան Պատրիարքին է նվիրում ոսկե խաչ՝ ի նշան հայ ժողովրդի՝ դեպի հյուրընկալ Բուլղարիան ունեցած սիրո և երախտագիտության:

Հուլիսի 11-ին, կիրակի օրը, Բուլղարիայի բոլոր հայկական եկեղեցիներում կատարվում է գոհաբանական մաղթանք՝ ի պայծառություն բուլղար օրթոդոքս եկեղեցու և հարևշատություն նորընտիր Պատրիարք Նորին Սրբություն Մաքսիմի, որպես սրտագին արտահայտություն հայ և բուլղար եկեղեցիների, ի Քրիստոս սիրո, հյամագործակցության և եղբայրության:

Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքը ծնվել է 1914 թվականի հոկտեմբերի 29-ին: Ավարտել է Սոֆիայի հոգևոր ճեմարանը և բարձրագույն ակադեմիան:

1941 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել և հրավիրվել է դասախոսելու Սոֆիայի հոգևոր ճեմարանում: Ապա հինգ տարի վարել է Բուլղարիայի կրոնական ներկայացուցչության նախագահի պաշտոնը և, հուսկ ուրեմն, ընտրվել է ս. Սինոդի գլխավոր քարտուղար:

1956 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվել: 1960 թվականին ընտրվել է Լովեչի միտրոպոլիտ: 1971 թվականի հուլիսի 4-ին ընտրվում է բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք և Սոֆիայի միտրոպոլիտ:

Նորընտիր Տ. Մաքսիմ Պատրիարքը բազմակողմանիորեն պատրաստված, զարգացած ու հայրենասեր հոգևորական է, մեր ժամանակի բուլղար եկեղեցու տիպական ու կարևորագույն դեմքերից մեկը, խաղաղության ու էկումենիկ շարժման անձնվեր ղեկավարը, միաժամանակ հայ եկեղեցու և հայ ժողովրդի ազնիվ ու անկեղծ բարեկամը, այնքան ջերմ, եղբայրական սիրով կապված Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի հետ:



ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՅՈՒՄ

Եթովպիայի քույր եկեղեցու նորընտիր Պատրիարքի գահակալության հանդիսություններից հետո, տ. Կոմիտաս, տ. Զավեն եպիսկոպոսները, սիրալիր հրավերով Ադիս-Աբեբայի գաղութային վարչության, հովվական այցելություն են տալիս այդ համայնքին և հանգամանորեն հետաքրքրվում նրա եկեղեցական-մշակութային և ազգային-հայրենասիրական կյանքով ու գործունեությամբ:

Մայիսի 16-ին, կիրակի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը պատարագում է Ադիս-Աբեբայի հայոց ս. Գևորգ եկեղեցում և, հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, Բանին կենաց քարոզությամբ մխիթարում ժողովրդին:

Մայիսի 17-ին, երկուշաբթի օրը, երեկոյան, եթովպահայ համայնքի ազգային-եկեղեցական մարմինները, ի պատիվ տ. Կոմիտաս և տ. Զավեն եպիսկոպոսների, «Հիլտոն» հյուրանոցի հաշարանում ընդունելություն են կազմակերպում, որի ընթացքում գործադրության է դրվում նաև գեղարվեստական մի ծրագիր:

Ընդունելության ժամանակ ջերմ, եկեղեցանվեր ու հայրենասիրական ելույթներ են ունենում տ. Կոմիտաս, տ. Զավեն եպիսկոպոսները, տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և գաղութային վարչության կողմից Հայկազուն Ուզունյանը:

Մայիսի 18-ին, երեքշաբթի օրը, սրբազանները այցելում են Ադիս-Աբեբայի հայոց Գևորգով ազգային վարժարանը և հետաքրքրվում հանգամանորեն դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներով, այցելում են դասարանները, զրույց ունենում տեսչական, դասախոսական կազմի և աշակերտության հետ և թելադրում լինել հարազատ զավակները Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ուսման մեջ լինել առաջադեմ, լավագույնս տիրապետել հայոց լեզվին և գրականությանը և միշտ կենդանի կապի մեջ լինել մայր հայրենիքի հետ:

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, մեր սրբազանները նախագահում են «Արարատ» մարզական երիտասարդաց միության՝ Ապրիլյան եղեռնի հիշատակին կազմակերպած ագո հիատին և ոգեկոչելով օրհնում հիշատակը մեր բյուրավոր նահատակների:

Մայիսի 21-ին, երեկոյան ժամը 17-ին, հայ եկեղեցու պատվիրակությունը հրաժեշտի այցելություն է տալիս նորընտիր Պատրիարք Աբունա Թեոֆիլոսին և Նորին Սրբության հետ ունենում ջերմ զրույց՝ հայ և եթովպական եկեղեցիները շահագրգռող մի շարք հարցերի շուրջ, էկումենիկ ոգով:

Նույն օրը, երեկոյան, Ադիս-Աբեբայի ազգային-եկեղեցական մարմինները տ. Կոմիտաս և տ. Զավեն եպիսկոպոսների պատվին կազմակերպում է հրաժեշտի ընդունելություն, որն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում:

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎ ԻՐԱՔԻ ԹԵՄԵՐԻՆ ԵՎ ՍՈՒԴԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Մասնավոր հրավերով Սուդանի հայ համայնքի, Եգիպտոսի և Իրաքի եկեղեցական-տեղական իշխանությունների, տ. Կոմիտաս եպիսկոպոսը այցելություն է տալիս այդ համայնքներին:

Սուդանում: Մայիսի 22-ին, շաբաթ օրը, տ. Կոմիտաս և տ. Զավեն եպիսկոպոսները, ավարտած լինելով իրենց առաքելությունը Ադիս-Աբեբայում, հովվական այցելության են մեկնում Սուդանի մայրաքաղաք Խարթում՝ համայնքի վարչության մասնավոր հրավերով: Օդանավակայանում երկու սրբազաններին դիմավորում և բարի գալուստ է մաղթում գաղութային մարմնի ատենապետ Երվանդ Ջիերջյանը:

Մայիսի 23-ին, կիրակի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը Խարթումի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում պատարագ է մատուցում և քարոզում՝ հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Խարթումում ապրում են շուրջ 350 հայեր, որոնք բարեկեցիկ վիճակ ունեն, զբաղվում են ընդհանրապես առևտրով և արհեստներով:

Խարթումում ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն առընթեր գործում է նաև ազգային վարժարանը:

Տ. Կոմիտաս, տ. Զավեն եպիսկոպոսները Խարթումում գտնված օրերին հանգամանորեն հետաքրքրվում են համայնքի ազգային-եկեղեցական կյանքով, դպրոցի հարցով և հանդիպումներ ունենում գաղութի պատասխանատու անձնավորությունների և երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների հետ:

Եգիպտոսում: Մայիսի 28-ին, ուրբաթ օրը, երկու սրբազանները, հրաժեշտ առնելով Սուդանի հայ համայնքից, վերադառնում են Կահիրե:

Մայիսի 30-ին, կիրակի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը ս. պատարագ է մատուցում Կահիրեի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ Հոգեգալստյան մեծ տոնի առիթով, և, իր քարոզի մեջ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, խոսում է ս. Հոգու Իջման խորհրդի հոգևոր ու եկեղեցական նշանակության մասին:

Հունիսի 3-ին, հինգշաբթի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը այցելության է մեկնում Ալեքսանդրիա:

Հունիսի 6-ին, կիրակի օրը, ս. պատարագ է մատուցում Ալեքսանդրիայի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցում և, իր քարոզի մեջ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, խոսում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո Հայաստանյայց առաքելական եկեղեցու կատարած պատմական ու փրկարար առաքելության մասին, հայ ժողովրդի եկեղեցական միասնականության և ազգային միության պահպանման նվիրական գործում:

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը Կահիրե և Ալեքսանդրիա գտնված միջոցին եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպիսկոպոսի հետ այցելում է ազգային վարժարանները, հանդիպումներ ունենում համայնքի ազգային-եկեղեցական իշխանությանց ղեկավար անձնավորությանց, մշակութային, մարզական և այլ կազմակերպությանց ներկայացուցիչների հետ՝ ամեն տեղ և ամեն պարագայում ականատես լինելով անվերապահ հարգանքի, սիրո և որդիական հավատարմություն դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը և դեպի նրա արժանընտիր Գահակալը:

Հանդիսությունների և հանդիպումների ընթացքում տ. Կոմիտաս եպիսկոպոսը ոգեվորիչ ելույթ է ունենում հայոց աշխարհի և հայրենաբնակ հայ ժողովրդի հոգևոր, մշակութային, ազգային վերածննդյան մասին:

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը մինչև հունիսի 11-ը հովվական այցելությամբ մնում է Կահիրե և ապա, հրաժեշտ առնելով, մեկնում Իրաք:

Իրաքում: Հունիսի 11-ին, ուրբաթ օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը հովվական այցելության համար ժամանում է Բաղդադ, ուր ընդունվում է Իրաքի թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպս. Ղազարյանի և թեմական իշխանությանց ներկայացուցիչների՝ Հովհաննես Սեմերջյանի և Հովհաննես Տոնիկյանի կողմից:

Հունիսի 13-ին, կիրակի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը կաթուղիկե ս. Էջմիածնի տոնի առիթով հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Բաղդադի հայոց առաջնորդանիստ եկեղեցում և, իր քարոզի մեջ հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները, քարոզում է հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր, հայրենասիրական, մշակութային առաքելության մասին անցյալում և մանավանդ այսօր, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության բարեբաստիկ տարիներին:

Հավարտ ս. պատարագի, առաջնորդ տ. Ասողիկ սրբազանի նախագահությամբ, կատարվում է ս. Էջմիածնի մաղթանք՝ Մայր Աթոռի տոնի առիթով:

Բաղդադում գտնված օրերին տ. Կոմիտաս եպիսկոպոսն այցելում է տեղի ազգային միացյալ վարժարանը, նորակառույց հայկական ծերանոցը, հանդիպումներ ունենում տ. Ասողիկ սրբազանի և ազգային իշխանության ներկայացուցիչների հետ՝ թեմական մի շարք հարցերի շուրջ, և այցելություններ է տալիս Բաղդադի բույր եկեղեցիների պետերին:

Այնուհետև տ. Կոմիտաս սրբազանը հունիսի 17—20 օրերին հովվական այցելությամբ լինում է Բասրա քաղաքում, ուր ս. պատարագի մատուցմամբ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում է ժողովրդին և նախագահում նաև մի շարք երիտասարդական կազմակերպությունների հանդիպության, ուր ունենում է հայրենասիրական ելույթներ:

Հունիսի 23—25 օրերին տ. Կոմիտաս եպիսկոպոսը հովվական այցելությամբ լինում է Մուսուլ և Զախո քաղաքներում, ուր ապրում են մանավանդ բրդախոս հայեր, որոնց համար ս. պատարագ է մատուցում և հոգեպես մխիթարում նրանց՝ վայելելով նաև այդ բարի և հավատավոր հոգիների սրտագին, ավանդական հյուրասիրությունը:

Հունիսի 25-ին, ուրբաթ օրը, երեկոյան, տ. Կոմիտաս եպիսկոպոսը այցելում է Քերքուկ:

Հունիսի 26-ին, շաբաթ օրը, ս. պատարագի մատուցմամբ և Բանին կենաց քարոզությամբ սրբազանը հոգեպես մխիթարում է տեղի հայ համայնքի անդամներին և հանդիպումներ ունենում գաղութի ազգային իշխանությանց ներկայացուցիչների հետ:

Նույն օրը տ. Կոմիտաս եպիսկոպոսը վերադառնում է Բաղդադ և հունիսի 27-ին, կիրակի օրը, ս. պատարագ մատուցում տեղի հայոց եկեղեցում և խոսում հրաժեշտի իր քարոզը:

Նույն օրը, երեկոյան, նախագահում է Բաղդադի հայոց ազգային միացյալ վարժարանի ամավերջի հանդիսությանց: Սույն վարժարանում սովորում է 1500 երկսեռ աշակերտություն:

Հուլիսի 2-ին Բաղդադի հայոց թեմի առաջնորդ տ. Ասողիկ եպիսկոպոսը և ազգային իշխանությունները հրաժեշտի ճաշկերույթով պատվում են Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակ տ. Կոմիտաս եպիսկոպոսին:

Ընդունելության ժամանակ փոխանակվում են ողջերթի և հրաժեշտի ճառեր, դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա արժանընտիր գահակալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդեպ հավատարմության, սիրո և որդիական երախտագիտության ջերմ զգացումներով զեղուն:

Այժմ Իրաքում ապրում են շուրջ 15 հազար հայեր: Տիրախնամ այս թեմում կան 8 եկեղեցիներ և 6 դպրոցներ: Իրաքի հայությունը նույնպես հավատարմորեն կապված է Մայր Աթոռ ս. Էջմիածնին և հպարտ ու խանդավառ՝ մայր հայրենիքի և հայրենաբնակ հայ ժողովրդի ազգային-հոգևոր ու մշակութային վերազարթոնքով:

Հուլիսի 4-ին, կիրակի օրը, տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Հայոց Հայրապետի կողմից իրեն վստահված հովվական առաքելությունը կատարելով բարեխղճորեն և ձեռնհասությամբ, վերադառնում է Մայր Աթոռ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի լրացավ Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայ եկեղեցու երիտասարդաց կազմակերպության հիմնադրման 25-ամյակը: Այս առթիվ Հայոց Հայրապետը հունիս 17 թվակիր Իր սրբատառ կոնդակում գրում է՝ խոսքն ուղղելով հայ երիտասարդությանը. **«Դուք մեր ուրախությունն եք, դուք մեր լույսն եք, դուք մեր ապագան եք, դուք մեր պարծանքն եք»:**

Վեհափառ Հայրապետը մեծ տեսիլքներ է գտնում հայ երիտասարդների համընդհանուր հայրենասիրական ձգտումների մեջ և, որպես հոգևոր հայր և «լուսաւոր վերակացու», միշտ արթնամիտ և հետևողական հսկում է Իր բազմացրիվ հոտը սփյուռքի ողջ տարածքի վրա: Վեհափառ Հայրապետը Իր սույն կոնդակում նշում է. **«Մեր պարտականությունն է պատվեր տալ ձեզի, սիրելի երիտասարդներ, որ ձեր սիրտն ու միտքը բանաք հավիտենական ճշմարտություններուն և մնայուն արժեքներուն, որոնց աղբյուրներն են՝ Քրիստոսի Ավետարանը, մեր սուրբ եկեղեցվո ժառանգությունը և մեր ժողովրդի ազգային մշակույթի գանձարանը:**

Քրիստոս՝ տևական հեղափոխություն է մարդկային կյանքին ու պատմության»:

Երիտասարդությունը կյանքի պատկեր փոխողն է, երիտասարդությունը կյանքի խոստումնալից շրջանն է, որն ընդունակ է ուրախության և մեծագործության:

Ամերիկահայ երիտասարդաց եկեղեցասիրաց կազմակերպությունը այն միությունն է, որն իրեն է ձգում ամերիկածին ամեն հայ երիտասարդի, նրա սրտի մեջ նվիրական պահելու համար ս. Էջմիածնի և մայր հայրենիքի ոգեկան կապը:

Ս. Էջմիածինն ամբողջությամբ մի ավազան է Հայաստանի մեջ երկնքից իջած, ուր ամեն հայ վերստին ծնվում է աստվածային անբացատրելի խորհրդով, «կենաց բանիւ վերստին ծննդեամբ»: Լուսապսակ նախնիքի խորհրդապսակ գահից Վեհափառ Հայրապետը Իր կոնդակով հայրաբար խնդակից է լինում ամերիկահայ եկեղեցասիրաց կազմակերպության 25-ամյակի առթիվ և գրում է. **«Այսօր, ձեր կազմակերպության կյանքի այս հանդիսավոր հանգրվանին, Մենք՝ ձեր Հայրապետը և ձեր հոգևոր Հայրը, ս. Էջմիածնեն, անհուն սիրով ու կարոտով, ձեր բարեջան առաջնորդ գեր. տ. Թորգոմ արքեպիսկոպոսի միջնորդությամբ, ձեզի բոլորիդ կբերենք Մեր ողջույնը և օրհ-**

նությունը, հայցելով ձեզի՝ օգնականություն Աստուծո և շնորհները ս. Հոգվույն, որպեսզի՝ բաջառողջ ապրիք և զորանաք հոգվով ու մարմնով, որպեսզի ձեր կյանքը վարեք ու գործեք՝ ձեր հայացքները սևեռած հավիտենական ճշմարտություններուն և արժեքներուն, որպեսզի մնաք արժանավոր զավակները ձեր հայրերուն, միշտ ամուր կանգնած հայ ազգային ոգեկանության բարձունքներուն վրա»:

Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը մանանեխի հատիկի նման մեծացավ և արմատացավ ամեն հայ երիտասարդի սրտի և մտքի մեջ:

Այս առթիվ ամերիկահայ երիտասարդաց կազմակերպությունը մտածումն էր ունեցել, իրենց կազմակերպության հիմնադրման 25-ամյակի առիթով մեծ խմբով ուխտագնացություն կազմակերպել դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին և մայր հայրենիք: Անցյալ տարի սույն կազմակերպության 25 անդամներ գալով մայր հայրենիք, հետևեցին հայոց լեզվի, երգի և պարի դասընթացներին: Վերադառնալով նրանք իրենց խանդավառությունը փոխանցեցին ընկերներին, շրջապատին և հետաքրքրություն ստեղծեցին դեպի հայ հավատքի կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու դեպի մայր հայրենիքի ճշմարիտ իրականությունը: Եվ այս տարի ես, հուլիսի սկզբներին, 22 հոգուց բաղկացած հայրենադարավ երիտասարդության մի խումբ ժամանեց Մայր Աթոռ՝ գլխավորությամբ ամերիկահայ թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի: Վերոհիշյալ խումբը սիրո և կարոտի ընդունելություն գտավ ս. Էջմիածնում և հայրենիքում: Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ամեն դյուրություն և աջակցություն ընձեռեց, որպեսզի ծրագրված և հաջողությամբ ընթանան ամերիկահայ երիտասարդության հայոց լեզվի, երգի, պարի ուսուցման ու շրջագայության ծրագրերը: Երիտասարդները հնարավորություն ունեցան շրջագայելու հայրենիքում, ծանոթանալու հայրենիքի ու նրա մարդկանց հետ:

Վեհափառ Հայրապետի՝ Մայր Աթոռից բացակայության պատճառով միայն օգոստոսի 2-ին սույն կազմակերպության 22 անդամ-անդամուհիներ Հյուսիսային Ամերիկայի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի գլխավորությամբ ժամանեցին Մայր Աթոռ: Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը անելուց հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել կազմակերպության անդամ-անդամուհիներին, որոնք աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը: Վեհափառ Հայրապետը մեծավ ուրախությամբ ողջունում է Իր հոգևոր զավակներին և բաջալերում նրանց ու պատվիրում՝ խրախույս հանդիսանալ մյուսներին ուխտի գալու Մայր Աթոռ ս. Էջմիածին և նորոգվելու հայրենի հողի ջրով, արևով ու ոգով: Նորին Սրբությունը, հայրաբար օրհնելով բոլորին, տալիս է Իր պատգամները ամերիկահայ նոր սերընդին և ասում, որ Ինքն անդադար աղոթող կմնա Իր հոգևոր զավակների արևշատության և իմաստության համար:

Հանուն ներկաների որդիական երախտագիտական սրտագին խոսք է արտասանում խմբի ղեկավարուհի Վարվառա Զամենիկյանը: Նա հայտնում է այն մեծ սերն ու կարոտը, որ ունեն մայր հայրենիքի, ս. Էջմիածնի հանդեպ. «Եկանք Երևան և ս. Էջմիածին և մեր աչքերով տեսանք մեր պապական մասունքները և ավելի կարևորը՝ տեսանք մեր ժողովրդի հավատքը, գյուղերում ու եկեղեցիներում մեջ: Ասիկա ավելի զորացուց մեր գիտակցությունը և գնահատանքը, մեր ժողովրդի մասին, և այն բոլորին մասին, որոնց համար կոված է մեր ժողովուրդը պատմության ընթացքին: Այս փորձությունը օգնեց մեզի, տեսնելու համար, թե արդարև թանկագին բան մը կա մեր ժողովրդին հավատքին մեջ, որ մեզի պահած է ավելի քան երկու հազար տարի:

Մենք շնորհակալ ենք Ձերդ Սրբությունեն, որովհետև, եթե մեզի պատեհություն տված ըլլայիք հայրենիք գալու և սովորելու, մենք պիտի չունենայինք փորձառությունը նոր հայրենիքի այս զգացումներուն:

Կալիֆոռնիայեն եկած անդամները կը խոստանան Ձերդ Վեհափառության, որ մենք պիտի նվիրվինք մեր կազմակերպության նպատակներուն:

Մեր վերադարձին մենք մեր լավագույնը պիտի ընենք բաջալերելու համար մեր ընկերները, սովորելու համար մեր մայրենի լեզուն և պատմությունը և ուխտի գալու համար մայր հայրենիք և ս. Էջմիածին:

Վեհափառ Տեր,

Նորեն Ձեզի շնորհակալություն կհայտնենք և ընկերներուս կողմե Ձեր սուրբ Աջը կհամբուրեմ»:

Վեհափառ Հայրապետը մեծ ուրախություն և գոհունակություն է հայտնում ողջույնի այս խոսքերի համար:

Այնուհետև խոսք է վերցնում հոգևոր հեմարանի նախկին ուսանող Պարույր Մելքոնյանը, որը մեկ տարի ուսանել էր հոգևոր հեմարանում և այժմ բավականին վարժ տիրապետում է հայերեն լեզվին: Նա ասում է.

«Անհավանիկ այսօր, այս նվիրական վայրում և մանավանդ այս պատմական պահուն

մենք բնավ մոռանալու չենք մեր ողջ կյանքում, որ 22 երիտասարդ բաբախուն սրտեր իրենց կարոտով զեղուն հայացքները Ձեզ են ուղղել: Մենք հուզված ենք Ձեր ներկայության ջերմությունից: Ինչպես անցյալ տարի, այս տարի ևս Դուք քաջալերեցիք և հովանավորեցիք մեզ առավելագույն չափով այցելել մեր հայրենիք: Ես իմ ուղեկից ընկերների և Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության վարչության կողմից, պարտականություն ունեմ Ձեզ շնորհակալություն հայտնելու, մի շնորհակալություն, որ զեղուն է որդիական ամենաջերմ, ամենանուրբ զգացումներով:

Վեհափառ Տեր, Դուք Ձեր այս հայրենանվեր գործունեությամբ մեր մեջ արմատավորեցիք հայության գաղափարը: Մենք Ձեզ լրիվ կերպով հավատում ենք. այժմ իսկական հպարտ հայեր ենք, հայ քրիստոնյա երիտասարդներ, որոնք հավատում են այն Քրիստոսին, որն իջավ այս նվիրական վայրում և հիմք դրավ հայոց գոյատևման փարոսին՝ ս. Էջմիածնին, նման Մովսեսի՝ անապատում բարձրացրած օձով խաչափայտին. «Զի ով հայեսցի նմա, ունիցի կեանս յաւիտենականս»:

Մենք հեռվում հայ մնալու համար այդ լուսաշող փարոսին՝ ս. Էջմիածնին նայելով ու չմոռանալով միայն չբավականացանք, այլ, ինչպես տեսնում եք, ուխտավորաբար եկանք այստեղ, ուր տակավին արձագանքում են մեր հայրերի ոգեշունչ խոսքերը, ոգին, որոնք մեր ականջին փսփսում են, ապրեք, երիտասարդներ, և մեզ պես ապրեք:

Այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրելու Ձեր հայրական սուրբ Աջը համբուրելու իմ ընկերների անունից: Մենք Ձեր հարազատ հայ զավակներն ենք, որ հայ ծնվեցինք, հայ ենք ապրում և մեռնելու ենք հայորեն»:

Իր անկեղծ զգացումներն արտահայտեց նաև Ադրինե Գրիգորյանը, որն առաջին անգամ էր լինում ս. Էջմիածնում և մայր հայրենիքում, ուստի դժվարանում էր վարժ խոսել, արտահայտելու համար իր հոգեկան ապրումներն ու բերկրանքը մայր հողից և ս. Էջմիածնի մասին:

Վերջում տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ հայրական ու ջերմիկ այս ընդունելության համար և հայ երիտասարդների անունից մեկ անգամ ևս հաստատում իրենց սերն ու նվիրվածությունը Մայր Աթոռին, Հայոց Հայրապետին, մայր Հայրենիքին և մեր հոգևոր-ազգային սրբություններին:

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը հավատիացնում է Հայոց Հայրապետին. «Ուրախ եմ վկայելու, որ Ամերիկա ծնած երիտասարդ սերունդը, հատկապես վերջին տարիներում, հայրական Ձեր հոգածության, պատգամներու և հովվապետական այցելություններու շնորհիվ հոգեկան զարթոնք մը կապրի, հոգեպես հայ է, խանդավառությամբ հայ է և կգիտակցի, որ իր ազգային դիմագիծը պահելու և զորացնելու համար պետք ունի ս. Էջմիածնի օրհնության, Ձեր անմիջական ղեկավարության և հոգածության կապվելու համար իր հավատքին, իր սրբություններուն, ինչպես նաև մայր հողի, իր վերածնված հայրենիքի հետ»:

Ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության սույն սրտառուչ հանդիպմանը Հայոց Հայրապետի հետ ներկա են լինում նաև Մայր Աթոռի երիտասարդ վարդապետներն ու սարկավագները: Հանդիպումն ավարտվում է հայրապետական պատգամով և օրհնությամբ:

Բոլոր երիտասարդները ծնրադիր, աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը՝ արտահայտելով միաժամանակ իրենց որդիական սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու նրա արժանընտիր գահակալը, որը մեծ հույսեր է կապել ամերիկահայ նոր սերընդի հոգևոր, եկեղեցանվեր ու հայրենասիրական ապագա գործունեության հետ:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանի այգու զովաշունչ տաղավարի տակ մրգասեղանի սեղանակից դարձնել տ. Թորգոմ արքեպիսկոպոսին, Մայր Աթոռի միաբան երիտասարդ վարդապետներին և սարկավագներին, ինչպես նաև երիտասարդաց կազմակերպության անդամներին:

Բոլոր ներկաները հյուրասիրվում են Վեհարանի աւոու քաղցրահամ մրգերով: «Ահա, ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած»:

Վերջում լավագույն տպավորություններով և անմոռաց հուշերով Հայոց Հայրապետից հրաժեշտ են առնում տ. Թորգոմ արքեպիսկոպոսը և երիտասարդաց կազմակերպության անդամ-անդամուհիները:

ԱՐՏԱՇԵՍ ՍԲԿ. ՄՈՒՇԵՂՅԱՆ



Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՆԵՐԲՈՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Ա

Եվ արդ, այսքան հուսահատությունների և անարկու սրտաբեկության,
Անաբեկիչ սատկությամբ աստվածային բարկության ենթարկվելուց հետո,
Թախծալից ոգով, իսպառ տագնապած՝
Քեզ եմ աղաչում, սուրբ Աստվածածին,
Հրեշտակ մարդկանց մեջ, մարմնատեսիլ բերովրե,
Երկնավոր արքայուհի,
Անիատն, ինչպես օդ, մաքուր, ինչպես լույս,
Անշաղախ՝ նման բարձր արուսյակի պատկերին պայծառ,
Գերազանց, քան սրբությունների բնակարան անկոխելի,
Խոստացված դու վայր երանավետ, Եդեմ շնչավոր,
Անմահ կենաց ծառ՝ բոցեղեն սրով պարունակված,
Բարձրյալ Հորից զորացած և հովանավորված,
Հանգստությամբ Հոգու պատրաստված և մաքրագործված,
Բնակությամբ Որդու հարդարված և տաղավարված,
Հոր համար միածին և քեզ՝ անդրանիկ,
Որդիդ՝ ծնունդով և տերդ՝ արարչությամբ,
Անաղտ մաքրությանդ հետ և՝ անբիծ բարի,
Անարատ սրբությանդ հետ և՝ բարեխոս խնամակալ,
Ընդունի՛ր աղոթքն այս աղերսալից քեզ դավանողիս,
Եվ այն ընծայիր Աստծուն իբրև պաղատանքը քո,
Խառնելով նրան՝ մեծիդ մատուցված իմ պաղատալից ներբողն առաջին.
Հյուսիր, միացրու դառն հեծությունն իմ մեղավորի
Քո երանելի և նվիրական ի Հոգվածքի հետ,

Կյանքի տունկդ դու օրհնված պտղի,
Որպեսզի քեզնից միշտ բարերարված
Եվ ապավինած մաքուր մայրությանդ ու լուսավորված՝
Ապրեմ ես Քրիստոս որդուդ միածին և տիրոջդ համար:

Բ

Օգնի՛ր թևավոր քո աղոթքներով, ո՜վ խոստովանված մայրդ ողջերի,
Որ երբ դուրս ելնեմ այս երկրի հովտից,
Առանց տանջալից չարչարանքների գնամ դեպի կյանք,
Դեպի պատրաստված օթևաններդ:
Թող թեթև լինի վախճանն իմ, զի ես ծանրացել եմ խիստ անօրենությամբ,
Օրն իմ տագնապի դարձրու ինձ համար տոն ուրախության,
Դու, որ բուժեցիր երկունքն Եվայի:
Խնդրի՛ր, աղաչիր ու բարեխոսիր,
Զի անհառելի մաքրությանդ համար հավատում եմ ես՝ խոսքդ կընդունվի:
Արցունքով օգնիր դու վտանգվածիս, գովյա՜լդ կանանց մեջ.
Ծնկաչոք խնդրիր հաշտությանս համար, ծնո՜ղդ Աստուծո.
Հոգատար եղիր թշվառիս հանդեպ, խորա՜ն բարձրյալի.
Ձեռք տուր ընկածիս, տանա՜ր երկնային.
Եվ փառավորիր որդուդ քեզանով,
Որ աստվածորեն հրաշագործե ինձ ի քավություն և ողորմություն,
Ո՜վ դու Աստուծո աղախին և մայր.
Բարձրանա պիտի պատիվդ ինձանով
Եվ փրկությունն իմ՝ ցույց տրվի քեզնով՝

Գ

Եթե ինձ գտնես, տիրամա՜յր,
Թե ինձ ողորմես սրբուհի՛,
Թե կորուսյալիս շահես, անարա՛տ,
Եթե խրտնածիս խնամարկես, երջանի՛կ,
Եթե ամոթահարիս առաջ տանես, բարեշնո՛րհ,
Եթե միջնորդես հուսահատվածիս համար, մի՜շտ սուրբ կույս,
Եթե մերժվածիս ընտանեցնես, Աստծո՛ւց մեծարված,
Եթե ցույց տաս ինձ գթությունդ, լուծի՛չդ անեծքների,
Եթե տատանյալիս ամրապնդես, հանգի՜ստ,
Եթե հուզումներս ու խռովքներս հանդարտեցնես, խաղաղարա՛ր,
Եթե մոլորյալիս մի ճար գտնես, գովյա՜լ,
Եթե ինձ համար մտնես ասպարեզ, մահվա՛ն նահանջիչ,
Եթե դառնությունս անուշացնես, քաղցրությո՛ւն,
Եթե բաժանման արգելքը քանդես, հաշտությո՛ւն,
Եթե անմաքրությունս վերացնես, եղծմա՛ն ընդոտնիչ,
Եթե փրկես ինձ՝ մահվան մատնվածիս, կենդանի՜ լույս,
Եթե իմ լացի ձայնը կտրես, բերկրությո՛ւն,
Եթե խորտակվածիս կազդուրես, կյանքի՛ դարման,
Եթե կործանվածիս մի ակնարկ գցես, հոգելի՛ց,
Եթե ողորմությամբ ինձ պատահես, նվիրակա՛ն կտակ,
Օրհնյա՜լդ միայն երջանկալեզու անբիծ շուրթերից,
Ահա՛ կաթիլ մի կուսությանդ կաթից

Մեջս անձրևելով՝ կյանք է տալիս ինձ,
Ո՜վ դու մայր բարձրյալ Տիրոջդ-Հիսուսի,
Երկնի և համայն երկրի արարչի, որին ծնեցիր դու աննառորեն,
Բովանդակ մարմնով և ամբողջովին իր աստվածությամբ,
Որ փառավորված է Հոր և սուրբ Հոգու հետ
Էությամբ համակ և անքննությամբ մեր բնության հետ միացած,
Ամենայն է նա և ամեն ինչում, Երրորդությունից մեկը,
Նրան փա՜ռք հավիտյանս հավիտենից. ամեն:

(«Մատյան ողբերգության», Երևան, 1960, էջ 343—346):



ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Անթառամ ծաղիկ անդատապարտ շառաւիղ,
Վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ.
Զքեզ Եսայիաս կանխաւ վերակոչեաց
Եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ.
Աստուածածին եւ կոյս, զքեզ մեծացուցանեմք:

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ,
Յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն
Անսպառ յուրախութիւն տրտմեցելոց
Ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան.
Սրբուհի անարատ, ամենեքեան զքեզ մեծացուցանեմք:

Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք.
Այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբն
Վերափոխեցար յարքայութիւն Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ,
Բարեխօս խոստովանողացս. զքեզ մեծացուցանեմք:

*
* *

Լեառն վիմածին աղբիւր հորդառատ.
Բարունակ ծաղկեալ այգի վայելուչ՝
Սրովբէ հողեղէն. դաբունւոյ Բանին տուն տնօրէնութեան
Տաղաւար Հոգւոյն.
Առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա
Անդադար հայցմամբ,
Շնորհել զթողութիւն
Մեր ննջեցելոց:

Փափկութեան դրախտին բացող բանալի.
Քրիստոսի բարձող նմանող երկնից.
Սափոր ոսկեղէն լի մանանայիւ,
Գաւազան ծաղկեալ՝ յարմատոյն Յեսսեայ
Տաճար լուսոյ մայր.
Առ ծնեալն ի քէն...

Ցօդ քաղցրաձայալ ցանկալի զուարթնոցն.
Նիւթեղէն սրովբէ, գեղ մարգարտափայլ,
Հիմն եկեղեցւոյ. մաքուր աղտանի,
Ամպ հովանաւոր սուրբ կոյս Մարիամ.
Առ ծնեալն ի քէն...

*

* *

Աստուածածին պայծառ քան զերկինս,
Որ ի մեզ ծագեցեր զլոյսն մեծ եւ գերազանց,
Որով խաւարն անգիտութեան հալածեցաւ.
Սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք,
Եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:
Ամպ թեթեւ եւ լուսաւոր,
Որ զանձրեւն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովէն,
Զոր հոսեցեր ի յերկիր ծարաւուտ.
Սրովբէական ձայնիւ զքեզ...
Պարտէզ փակեալ աստուածատունկ եղեմ,
Որ և ծառն կենաց ի մէջ դրախտի քո ի Հոգւոյն տնկեալ,
Անմահական պտղովն ելից զտիեզերս.
Սրովբէական ձայնիւ զքեզ բարեբանեմք,
Եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐԸ

Ս. Կուսին անձը, իբրև գերազանց միջոց փրկագործության, անբաժան է Հիսուսի փրկական տնօրինություններեն: Այս պատճառավ, ուղղափառ եկեղեցին սկիզբեն երկյուղած մեծարանք ունեցավ անոր հիշատակին հանդեպ, մանավանդ Ե դարեն հետո, երբ Եփեսոսի ժողովին մեջ դատապարտվեցավ Նեստորի մոլորությունը և վարդապետականորեն հաստատվեցավ և ընդունվեցավ անոր **ծնող** և **մայր Աստուծո** լինելու իրողությունը, այսինքն **Աստվածածին** և **Աստվածամայր** կոչումը:

Աստվածածնի կյանքին պատմութենեն Ավետարանի մեջ կհիշվին այն մասերը կամ կետերը միայն, որոնք ուղղակի առնչություն ունին Հիսուսի կյանքին և փրկական տնօրինությանց հետ. անոր կենսագրության մնացյալ այսինքն մեծագույն մասը կամբողջացվի այն ավանդություններով զորս բոլոր հին եկեղեցիներն հասարակաբար ունին, և որոնք, այդ կերպով, այլևս տարրացած են եկեղեցական հնագույն գրականության հետ:

Ըստ այդմ, Մարիամ Դավթի ցեղեն էր. իր ծնողքն էին **Հովակիմ** և **Աննա** բեթղեհեմցիներ կամ նազարեթցիներ: Աննա ամուլ էր և ուխտով և աղոթքով հղացավ իր միամայր զավակը, որ կոչվեցավ **Մարիամ:** Թեև ծնավ բնության օրինաց համեմատ, այսինքն ի հորե և ի մորե, բայց բարոյապես զերծ՝ սկիզբեն իսկ՝ հասարակ մահկանացվաց ադամական արատավորութենեն: Այս պատճառավ, եկեղեցվո մեջ տոնելի եղավ ոչ միայն իր **ծնունդը** այլ նաև **հղությունը,** զոր մենք և հույնք կկատարենք դեկտեմբեր 9-ին, իսկ լատինք՝ 8-ին: Աստվածածնի **անարատության** գաղափարը հետ ժամանակաց ծնունդ տվավ **անարատ հղության** հարցի մը, զոր լատին եկեղեցին 1854-ին ընդունեց իբր հավատո վարդապետություն, որ սակայն մեր եկեղեցիին համար անընդունելի է: —**Հղության տոնը,** թեև ս. Կույսին կյանքի ժամանակագրության տեսակետով առաջին՝ բայց հին չէ իբրև եկեղեցական տնօրինություն, և սեփական շարական ալ չունի մեր մեջ:

Աստվածածնի երկրորդ տոնն է **ծնունդը,** զոր բոլոր եկեղեցիներ անփոփոխ կերպով կկատարեն սեպտ. 8-ին: Պատմական մանրամասնություններ չունինք անոր ծնունդին պարագաներուն մասին. կարելի չէ ճշտել նույնիսկ թե ո՞ւր ծնավ անիկա. Բեթղեհե՞մ թե Նազարեթ, և ո՞ր թվականին: Կկարծվի —նկատի առնելով հրեից մեջ այդ թվականին ի զորու եղած սովորությունները—թե 14—18 տարեկան էր անիկա, երբ ընդունեց հրեշտակին ավետիսը:

Երրորդ տոնն է **«Երից ամաց ընծայումն ի տաճարն»**, որ բոլոր եկեղեցիներեն հաստատուն կերպով կկատարվի նոյեմբեր 21-ին: Այս տոնին իմաստն այն է թե որովհետև ուխտի զավակ էր Մարիամ, իր ծնողքը տաճարին նվիրեցին զայն իր այն հասակին մեջ, երբ այլևս կարող էր ծնողքեն անջատ ապրիլ: Ըստ ավանդության, ժամանակ մը մնաց նա հոն, և հետո վերատին դառնալով հոն, յոթնամյա հասակին, խառնվեցավ այրիներե և կույսերե բաղկացյալ նվիրյալ կանանց այն խումբին, որոնք բարեպաշտական կյանք կապրեին տաճարին հովանիին տակ, և որոնցմե էր Աննա մարգարեուհին: Յոթը տարիներ ևս մնալե վերջ անդ, խոսեցյալը եղավ հյուսն Հովսեփին:

Աստվածածնի կյանքեն հիշված մյուս դիպվածները, զորս Ավետարանի պատմությունը կարձանագրե, հավասարապես և նույնիսկ առավելապես կպատկանին Հիսուսի կենաց, իբրև մասն փրկագործական տնօրենության: Ասոնք են. **Ավետումը,** որ մեկ կողմե Քրիստոսի տնօրենությունն է, և մյուս կողմե Մարիամի կյանքին գլխավոր պարագաներեն. **Եղիսաբեթի այցելության երթալը,** զոր լատինք առանձին կտոնեն հուլիս 2-ին. **Աստվածահայտնությունը,** որ Մարիամի մայրության տոնն է. Քրիստոսի քառասնօրյա **ի տաճարն ընծայումը** որ ուրիշներեն կկոչվի նաև **Սրբություն Մարիամու,** վասնզի ծննդյան քառասներորդ օրը մայրերու սրբության օրենքը կկատարվեր: Իր կյանքին ավետարանական մյուս մանրամասնություններն են. Հիսուսի տասներկու տարեկան եղած ատեն Երուսաղեմի մեջ անհետացած ատեն զայն փնտրելն ու գտնելը, Կանայի հարսանիքին ատեն՝ գինիի համար իր մոտ միջնորդելը, Կափառնաումի մեջ զայն փնտրելը, Գողգոթայի վրա խաչին ոտքը լինելը, համբարձումն վերջ միշտ առաքելոց խումբին հետ լինելը: Ասոնցմե և ոչ մին սակայն առանձին տոնական հիշատակություն ունի. ամենքն ալ խառնված են Քրիստոսի տնօրինական հիշատակներուն: Իր աստվածային որդվույն համբարձումեն վերջ Մարիամի ունեցած կյանքին մասին ավանդությունը միայն կիսոսի. ըստ այդմ, անիկա Երուսաղեմի մեջ ապրած է միշտ իբր 15 տարիներ, Հովհաննես Ավետարանչի որդիական խնամքներեն շրջապատված. հոն մեռած, և թաղված՝ Գեթսեմանիի իրենց ընտանեկան դամբարանի մեջ, Հիսուսի մահեն շուրջ 15 տարիներ ետքը: Մյուս այն ավանդությունը թե Մարիամու մահը պատահած է Եփեսոսի մեջ, մեծ արժեք մը չի ներկայացներ, և հավանաբար հետևանք է Հովհաննես Ավետարանչի հետո երկար ատեն անդ բնակած լինելու իրողության միայն:—Այնուամենայնիվ, եկեղեցվո կողմե Աստվածածնի վերաբերմամբ հարգանքի ամենեն հանդիսավոր արտահայտությունը կկատարվի անոր **մահվան հիշատակին** առիթով, որուն տոնը հավանաբար հնագույնն է նաև Աստվածածնի տոներուն, և բոլոր եկեղեցիներեն կկատարվի օգոստոս 15-ին անփոփոխ: Իսկ մենք հավանաբար Շնորհալիի ժամանակեն է որ, եթե ոչ դեռ ավելի ետքը, 15-ի մերձավորագույն կիրակին տոնվորություն ըրած ենք կատարել զայն, ոչ միայն երեք՝ ինչպես եղած է առաջ, այլ ինն օրեր երկարաձգելով տոնին շարունակությունը:—Աստվածածնի մահվան վերաբերմամբ եղած ավանդությունը, զոր բոլոր հին եկեղեցիները գրեթե նույնությամբ կընդունին, և որ համառոտված է Կիրակոս վարդապետի հորինած «Արևելք գերարփին» շարականին մեջ, հետևյալն է: Ս. Կույսը 15 տարիներ Երուսաղեմ ապրելե վերջ անդ կկնքե իր մահկանացու կյանքը: Բոլոր առաքյալները, բացի Բարթողիմեոսե, որ բացակա էր այդ ատեն, մեծ հանդիսավորությամբ և ջանալույց թափորով կկատարեն հուղարկավորությունը և կթաղեն զայն **Գեթսեմանիի ձորակին** կշտին. իր թաղումեն վերջ երեք ցերեկ և երեք գիշեր հրեշտակային երգեր կլսվին անոր գերեզմանին վրա: Հիշ վերջ կհասնի Բարթողիմեոս, որուն՝ Տիրամայրը վերջին անգամ մը տեսնելու փափագին գոհացում տալ ստիպվելով, առաքյալք կբանան գերեզմանը, ուր չեն գտներ սակայն անոր մարմինը. որմե կհետևցնեն թե անիկա չէր մեռած, այլ ի քուն էր լոկ, թե հրեշտակներու երգարանությունը զայն միայն կնշանակեր, թե Հիսուս իր մորը խոստացած էր արդեն վաղուց երկինք փոխադրել զինքը, և թե ս. Կույսին մարմնույն անգոյությունը իր գերեզմանին մեջ՝ այդ խոստումին կատարումը միայն կրնա նշանակել, և այլն: Ա՛յս է պատճառը որ ավելի **ննջում** բառով կորակվի անոր երկրավոր կյանքին վախճանը, և ոչ թե **մահ** բառով: Գալով անոր հերկինս փոխման գաղափարին, թեև ամենահին ժամանակներեն կար անոր մտածումը՝ ս. Կույսին ձոնված բանաստեղծական և խորհրդաբանական գրվածքներուն մեջ, բայց անոր իբր վարդապետություն ընդունվիլը առնվազն Թ և առ առավելն ԺԲ դարուն էր միայն որ կատարվեցավ, տոնը ևս կոչվելով այդ մտոք՝ **Վերափոխում:**

Աստվածածնի մահվան պատմության կից էր իր **պատկերին հիշատակը:** Կավանդվի թե ի մխիթարություն Բարթողիմեոսի՝ որ ներկա չէր գտնված Տիրամոր թաղման, ի-



ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆ
(Գործ՝ Հ. Հակոբյան, 1971 թ.)

րեն տրվեցավ նաև այն կենդանագիր **պատկերը,** զոր ս. Կույսը հետ օրհնության հանձներ էր Հովհ. Ավետարանչի: Բարթողիմեոս, ըստ հայկական զրույցներուն, զայն բերավ Հայաստան և դրավ Անձևացյաց գավառի **Դարբնաց քար** կոչված տեղը, ուր կուսաստան մը կանգնվեցավ իսկույն, այսինքն հավատավոր կույսերու միաբանություն մը՝ ի պահպանություն և ի պատիվ Աստվածածնի պատկերին: Այդ կույսերու մեջ իբր գլխավորներ կհիշվին Հուսիկ, Որմզդատ և Մաքովտուր անուն անձերու քույրերը: Այս իսկ է **Հոգվոց** կամ **Հոգյաց** վանք ըսվածը, ուր մինչև վերջը կշարունակվեր պատկերին ուխտավորությունը, հակառակ որ չկար ան ի միջի. զի կավանդեին թե հալածողաց երեսեն պահելու համար զայն՝ հյուսած էին պատին մեջ:

Տիրամոր մարմնական մասունքներու չը-գոյությունը հավատացյալներու երկյուղածությունը ուղղեց դեպի անոր **սեփական իրեղենները,** որոնք հալածանքի դարերուն թաքուցված լինելով հետո երևան եկան: Ատոնցմե առաջինը, **գոտին** կամ **կամարը,** արեվելյան կիներու զգեստին և նույն ատեն արդուզարդին այս կարևոր մեկ մասը, Երուսաղեմի մեջ գտնվեցավ Ե դարուն Արկադեոս կայսեր օրով, և մեծահանդես պատվով փոխադրվելով Կ. Պոլիս, զետեղվեցավ Աստվածածնի նվիրված տաճարին մեջ, ուր լինելն կհիշվի անկե կես դար ետքն այ, Լևոն կայսեր Զոյի թագուհիին բժշկության առթիվ: Երկրորդն է **տուփը,** կամ այն **փոքրիկ արկղը,** որուն մեջ կպահվեր ս. Կուսին **գլխանոցը:** Ասոր համար ևս կպատմվի թե Կ. պոլսեցի երկու ազնվական եղբայրներ, Գալբիաս և Կանտիտաս, որոնք ուխտավորաբար Պաղեստին եկած էին, գալիլիական գյուղի մը մեջ, հավանաբար Նազարեթ, կնկատեն թե մարդիկ ուխտի կերթան հրեա այրի պառավի մը տունը, ուր բժշկություններ կկատարվին Մարիամու վերագրված գլխադիրի մը առջև՝ որ արկղի մը մեջ պահված է. հնարքով մը՝ նմանագործված արկղ մը կդնեն իսկականին տեղ, զոր իսկույն կփոխադրեն Կ. Պոլիս ուր մեծահանդես թափորով կընդունվի Աստվածածնի եկեղեցվույն մեջ:—**Գոտվո** և **տուփի** այս երկու **տոները** մեր մեջ մուտ գտած են Սիմեոն կաթողիկոսի տոնացուցական կարգադրություններեն վերջ միայն. նախասիմեոնյան տոնացույցին մեջ իբր կամավոր դրված էին ասոնք. և կերևի թե Կ. Պոլսո եկեղեցիին միայն հատուկ մնացած էին երկար ատեն. բայց հետո Արևմտյայց մեջ ևս սկսան հանախել ոչ միայն այս այլ նաև ս. Կուսին հատուկ նկատված իրեղեն մասունքներու հարգն ու պաշտոնը, մասնավորաբար ԺԳ դարեն ետքը, երբ խաչակրությանց միջոցին Կ. Պոլիս հաստատված լատին կայսրության ատեն եկեղեցական բազում հնություններ և սրբություններ փոխադրվեցան Բյուզանդիայե Եվրոպա:

(«Սուրբք եւ տօնք», Երուսաղեմ, 1939, էջ 304—313):

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Օգոստոսի 1-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վարդավառի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Արսեն վրդ. Բերբերյանը, քարոզում՝ Ժենի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ «Արդ ո՞վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն, թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ սո՞ւր, որպէս և գրեալ է, վասն քո մեռանեմք զօր հանապազ, համարեցաք որպէս զոչխար ի սպանդ» (Հռովմ. Ը 36) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Տ. Ներսես և տ. Արսեն վարդապետները հուլիսի 17-ին 10 օրով ուխտավորաբար ժամանել էին Մայր Աթոռ: Նրանք իրենց պաշտոնատեղին են վերադառնում օգոստոսի 7-ին:

*
* *

Օգոստոսի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկ ամսով հանգըստանալու համար մեկնում է Կիսլովոդսկի «Կրասնի կամեն» առողջարանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր ս. Գեղարդի վանքի վանահայր տ. Նարեկ վրդ. Շաքարյանը:

*
* *

Օգոստոսի 8-ին, կիրակի.—Բարեկենդան ս. Աստուածածնի պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

*
* *

Օգոստոսի 15-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, կատարվում է խաղողի օրհնության կարգը՝ խուռներամ ուխտավոր բազմության ներկայությամբ:

*
* *

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում, քահանայական զգեստով, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Սարգսեանցը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր

տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Օգոստոսի 23-ին, երկուշաբթի.—Այսօր Կահիրեից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբան և Կահիրեի Գալստյան վարժարանի տնօրեն տ. Ներսեհ ծ. վրդ. Փապուճյանը:

*
* *

Օգոստոսի 26-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի մի խումբ սարկավագներ և ուսանողներ մեկօրյա պտույտի են մեկնում Արագածի լանջերը՝ տեսչի պաշտոնակատար տ. Հովհաննես քհն. Մարուքյանի գլխավորությամբ:

*
* *

Օգոստոսի 28-ին, շաբաթ.—Այսօր Երուսաղեմից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում ս. Հակոբյանց վանքի միաբան տ. Աղան աբեղա Բալիոզյանը:

*
* *

Օգոստոսի 29-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Կիսլովոդսկից Մայր Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը՝ մեկամսյա հանգստից հետո՝ ընկերակցությամբ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, ի գլուխ Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության:

*
* *

Օգոստոսի 29-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Վերափոխման. Տօն գիւտի գոտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:



ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԵՆ

Հարգանքի տուրք մը Հայրապետի ծննդյան 100-ամյակի առիթով

Մեր ժողովուրդը կըսե—Աստված եթե մեկը պատժել ուզե, «նախ յիմարացուցանէ, ապա կորուսանէ»: Իսկ եթե ժողովուրդ մը օրհնել ուզե, իմաստուն և առաքինություններով օժտված մարդիկ կղրկե անոր: Մեր ժողովուրդը այդ օրհնության արժանացավ, երբ Գարեգին կաթողիկոս որոշեց իր կյանքը նվիրել հայ ժողովուրդին ու անոր եկեղեցիին և մշակույթին:

Ուսանող էինք Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի մեջ, 1936-ին Գարեգին սրբազան Մայր Աթոռեն ժամանեց մեր մոտ: Փոքրիկ մարդ մը, մեծ հոգիով մը ու զորավոր մտքով օժտված: Կհիշեմ ուսուցչուհի մորս տպավորությունը իր մասին—«Տղաս Արմեն, ինքզինքիս առջև պզտիկ զգացի, Գարեգին սրբազանի արտաքին երևույթեն դատելով **մարդը**: Հրավեր ստացանք հայկապահայ ուսուցիչներս Քառասուն Մանկանց եկեղեցին երթալ լսելու համար ս. Էջմիածնեն եկող հայրապետական պատվիրակ սրբազանը: Բեմ բարձրացած պահուն նկատեցի որ կարճահասակ ծերուկ մ'է. ինքնիրենս ըսի—Ի՞նչ կակնկալես տարիքը առած այս պզտիկ մարդեն... արդյոք ժամավաճառությո՞ւն պիտի ըլլա մեր հոս գալը: Մեղա, տղաս մեղա, երբ սկսավ խոսիլ, կախվեցանք բերանեն: Ետևները կեցողներ դեպի բեմ մոտեցան. բառ մը չէին ուզեր կորսնցընել: Ժամերով եթե խոսեր առինքնված մտիկ պիտի ընեինք. այդ ի՞նչ վայելք էր լսել զինք: Տղա՛ս, կյանքիս մեջ քիչ առիթներով զոչացած եմ սխալ խոսքի կամ մտածումի և անարդար դատում ընելուս. ասիկա անոնցմե մեկն է որ պիտի չմոռնամ: Ինչու չեմ գիտեր. զինք մտիկ ընելե ետք Գարեգին եպս. Սրվանձտյանը պատկերացավ աչքիս առջև. մեկը իր խոսքով մյուսը իր գրչով մեզի համար **«Համով հոտով»** են»:

Բախտը ունեցա Գարեգին Վեհափառին գավազանակիրը ըլլալու 1945 ապրիլեն մինչև Ամերիկա մեկնումս սեպտ. 6 1946. մի քանի ամիսեն հոր և զավկի հարաբերություն ստեղծվեցավ մեր միջև. այն աստիճան որ՝ սիրտը կբանար երբեմն ինձի... «Էս ինչ բան է Բաբգեն հայր սուրբ, հայերեն ենք խոսում, բայց իրար չենք հասկանում»: Կուզեր ակնարկել զինք չհասկցող, ավելի ճիշտը հասկնալ չուզող մարդոց, ըլլան անոնք եկեղեցական կամ աշխարհական: Օր մը Անթիլիասի Վեհարանի մեջ ճաշի ատեն հարցուց. «Կարծում ես, թե քարոզներս եթե արևմտահայերենով խոսեմ, ավելի հասկանալի՞ կլինի մեր ժողովուր-

դին»: Անմիջապես պատասխանեցի որ. «Խնդրեմ Վեհափառ, պահեցեք արևելահայերենը, մենք մեծ վայելք կունենանք զայն ձեր բերնեն լսելով. վստահ եղեք որ մեր ժողովուրդը թե կհասկնա, և թե ավելի կըսիրե լսել արևելահայերենը»:

Ինչպես իր երիտասարդության, նույնպես իր կաթողիկոսության շրջանին Գարեգին կաթողիկոս ուրախության, անձկության ու տառապանքի պահեր ունեցավ: Մարդիկ՝ որոնցմե կակնկալվեր թե թիկունք ըլլալ Վեհափառին, չգործակցեցան իրեն, ընդհակառակը անոնցմե ապաշնորհներ քար գլորեցին Վեհափառի կառքի անիվներուն տակ... գործակցելով անոր թշնամիներուն: «Աշտարակը իր շուքեն, իսկ մեծ մարդը իր զրպարտիչներեն կչափեն», կըսե առածը: Շարունակ կներեր Վեհափառը. իր այդ տարիքին պահած էր հոգիի մանկունակության շնորհը: Ամենուն հանդեպ իր «մանուկի մը հոգիին սերը» պահած էր, նույնիսկ հանդեպ իրեն հակառակ եղողներուն: Անթիլիասի կաթողիկոսարանը մեր տունն էր, Վեհափառը մեր հայրիկը, սակայն տան մեջ, տան անդամներեն մեկը լրտեսող էր, մյուսը տունեն չհեռացող անառակ մը նոր տեսակի...:

Իբրև ականատես, ականջալուր վկա, ցավոք սրտի կգրեմ այս տողերը: Ցավալի իրողություն մ'է նաև կուսակցական անիմաստ պայքարը: Այդ պատճառով Վեհափառին կարգ մը ծրագիրները ամլության դատապարտվեցան: Երկու կողմերու ծայրահեղներ անիմաստ քննադատություններ կատարած են: Կհիշեր թե գերմանական շոգենավով մը Ատլանտյանը կտրած էր 1936-ի ապրիլի սկիզբը: Ամերիկայի մեջ ոմանք զինք իբր «գերմանասեր» ցույց տալ ուզած են այդ պատճառավ: Ի՜նչ խղճալի մտայնություն: Վեհափառը գերմաներեն գիտնալուն՝ նախընտրած էր այն նավը, որպեսզի համրության չդատապարտվի շվեդական կամ անգլիական շոգենավի մը մեջ: Նման սնամեջ քննադատություններ նետվեցան իր ճակտին Լաթոդիկոսանալե ետք մյուս ճակատի կողմե:

Անցնինք սակայն, մխիթարելով ինքզինքնիս այն իրողությամբ, որ մեծ մասը, ջախջախիչ մեծամասնությունը մեր պատվական ժողովուրդին գիտցավ գնահատել զինք:

Հոգելույս Հայրապետը սրամիտ էր, զըվարճախոս, սրախոս, ինչպես նաև առակախոս: Հաճելի էր իր ընկերակցությունն ու խոսակցությունը, համեմված սրամտություններով, առածներով ու առակներով: «Բան կսորվիս Վեհափառին հետ խոսակցելեդ ետք», դիտել կուտար մտավորական մը:

«Որ ինչ կարեմ, այն առնեմ», կըսեր երբեմն ակնարկելով իբրև եկեղեցի և ժողովուրդ մեր ընելիքներուն մասին: Քանիցս լսած եմ իր բերնեն առակը այն ճնճղուկին որ փոթորիկի մը պահուն կունակին վրա կըպառկի. ոտքերը դեպի վեր, երկինք երկարած. մյուս կենդանիներ կհարցնեն իրեն.

— Էլի էդ ի՞նչ ես անում, այ ճնճղուկ ախպեր:

— Դեհ, չեք տեսնո՞ւմ, երկինքը փուլ է գալիս. կաշխատեմ վեր բռնել, որ տակը չմնանք:

— Պա՛հ, որքան կարող ես էդ քո տոտիկներով երկինքը վեր բռնել:

Ու ճնճղուկը կպատասխանե.

— Որ ամեն մարդ իր չափով օգնի, մի բան կարող ենք անել:

Ասում են.—«Եթե երեսիս ես ծիծաղում, ծիծաղում ես Աստուծո, թե ծիծաղում ես հագուստիս՝ դերձակիս վրա ես ծիծաղում: Բայց թե ծիծաղում ես գործերիս վրա՝ ահա էդ պարագայում իմ վրա ես ծիծաղում»:— Խոսքը ջուրի դիրտ է, գործը ոսկիի կաթիլ»:

Ինքնապաշտպանության մասին հետևյալը պատմեց:

«Բնությունը յուրաքանչյուր ապրող էակի տվել է իրա հատուկ զենք որ ինքն իրան պաշտպանի: Մեր ժողովրդի զենքերն էլ իր մշակույթը, լեզուն, իրա եկեղեցին է եղել իբրև հոգևոր զենքեր:

Լսեք. մի անգամ կենդանիների մեջ պատերազմ է ծագել: Յուրաքանչյուրը իրա զենքը գործածելով կատարել է ինքնապաշտպանություն: Պատերազմը վերջ է գնում: Աղվեսն գալիս է ոզնու մոտ և ասում է—«Ոզնի ախպեր, խաղաղություն է տիրում: Ինչի՞ է էդ զենքերդ՝ փուշերդ, նետերդ, տեգերդ կրում ես: Գցիր մեկ կողմ, ես խղճում եմ քեզ, շատ ես ճնշվում նրանց տակ: Պատահում է որ ախմախ ոզնին հավատում է նենգավոր աղվեսին: Մի կողմ է գցում փուշերը, և մնում է մի կծիկ միս: Գիշերն աղվեսը գալիս է ու լափում է ոզնուն: Չար խրատ են տալիս մեզ, մոռանալ մեր հայրենիքը, ուրանալ մեր լեզուն, մշակույթը, մեկ կողմ գցել մեր հոգևոր զենքերը: Հետո ինչ կպատահի մեզ: Ոզնու ճակատագիրը:

Հայ ժողովուրդի աշխարհացրիվ վիճակը կմտահոգեր Վեհափառը: «Մեր ժողովուրդը այլասերումից փրկելու համար մեր եկեղեցին և մշակույթը պետք է·զորանա», կըսեր, իսկ կատարյալ ապահովությունը հայրենիքի հողի վրա հավաքելու մեջ կտեսներ հայությունը:

«Որքան էլ ջանանք պահել, էլի մի մասը կկորչի: Նմանում է դույլով լիքը ջուր փոխադրելու. ճանապարհին պիտի թափվի մի մասը: Հիշում եմ մեր Վարդան առակագրի սա առակը. սիսեռն հանդիպում է կլուկին (կլուկը լեպլեպին է).

— Բարև քեզ եղբայր սիսեռ, ասում է կլուկը հում սիսեռին:

— Աստուծո բաջին կլուկ. բայց մենք ոնց եղբայր կլինենք. տեսնում ես. մի կոր քիթ ունեմ ես. կոշտ է իմ մարմինը: Երակներս դուրս են ցցվել: Իսկ դու օտարների տապակներում կլորցել ես. կորցրել ես քո հարազատ գծերը: Շաբարը կամ աղը փոխել է քեզ. մենք եղբայր չենք կարող լինել:

— Ուր ես գնում շտապով,—հարց է տալիս կլուկը:

— Գնում եմ Արարատյան դաշտի մի ակոսում քնելու:

— Ես էլ քեզ հետ կգամ, միասին կքնենք, ասում է կլուկը:

— Կգաս եկուր. միասին կարող ես քնելձմեռն կանցնի մեր վրայից, բայց գարնան ես կծլիս, կծաղկիս, սերունդ կուտամ: Բայց դու կմնաս հողի մեջ ու կմեռնես հավետ...

Սա այդ է դաժան ճակատագիրը հայությունից դատարկված մարդկանց. հավետ կկորչին մեզ համար: Առածն ասում է. «Ակդար թագավորի համար, իրա ամբողջ ժողովուրդն է բանակ»:

— Մայրիների հավատարմությունը հայտնըվում է երբ ձյունը ծածկում չորացնում է մյուս ծառերին, մայրին մնում է կանաչ:

— Աղբատ ընտանիքի շունը ասում է,— ասում են,—իր պատկանած տան հավատարիմ է, հարուստին չէ ծառայում նույնիսկ կաշառով»:

Հոգելույս Գարեգին կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, սիրեց իր ժողովուրդը և անոր եկեղեցին, իսպառ սիրեց զայն և իր ամբողջ ունեցածը ու լավագույնը տվավ անոր:

«Նա ետ գոյիր չափ զկեանս իւր»:

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀՆԴԿԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այս տարի, ապրիլի 2-ին, լրացավ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության 150-ամյակը:

Հայ դպրոցի և հայ մանկավարժության պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը, որը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին, մայր հայրենիքից հեռու, Հնդկաստանի հյուրընկալ հողի վրա, Գանգեսի ափերին՝ հայոց հավատքի լույսով, հայ մշակույթի և մեր հոգևոր արժեքների ոգով ու հայ ժողովրդի պատմության շնչով դաստիարակելու համար օտար երկինքների տակ ծնված հայ նոր սերնդի զավակներին. «Քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան»[1] և «Ուսանել զիսուս և զլեզու հայկական»[2]:

Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրումն ու 150-ամյա գործունեությունը խոսուն վկայությունն են մեր ժողովրդի դեպի ուսումն ու առաջդիմությունն ունեցած սիրո և պատասխանատվության զգացմունքներին: Չնայած շատ հաճախ մեր երկրում տիրող տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին, մեր ժողովուրդը հնագույն ժամանակներից սկսած և՛ մայր հայրենիքում, և՛ նրա սահմաններից դուրս, գաղթօջախներում, հիմնել է տարբեր աստիճանի և տիպի բազմաթիվ դպրոցներ: «Այդ դպրոցները շարունակաբար հաջորդել են միմյանց, և մոտ 2000 տարի երբեք չի կտրվել հայոց դպրոցական կյանքի թելը»[3]:

Վեհափառ Հայրապետը Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի 150-ամյակի առթիվ Իր գրած հունիս 14 թվակիր սրբատառ կոնդակում նշում էր այդ կարևոր հանգամանքը՝ շեշտելով.

«Մեր ազգի պատմության մռայլ շրջաններում, հայրենի հողից հեռու, հյուրընկալ ափերի վրա, հաճախ կյանքի են կոչվել ու կազմակերպվել հայ համայնքներ: Հիմնվել են եկեղեցիներ, դպրոցներ ու տպարաններ,

[1] **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1908, էջ 32:

[2] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, գիրք Ա, գլ. ԺԴ:

[3] **Ա. Խ. Մովսիսյան**, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 7:

հրապարակվել են պարբերաթերթեր, կրոնական ու գեղարվեստական գրքեր, և նույնիսկ սկիզբ են առել շարժումներ ի խնդիր մայր երկրի՝ Հայաստանի ազատագրման»:

Այս իմաստով, իր պատմական կարևորությամբ չափազանց հետաքրքրական է և ազգային-եկեղեցական ու մշակութային տեսակետից էլ շահեկան՝ մեր ժողովրդի և մշակույթի պատմության համար հնդկահայ գաղթօջախի ծագման, զարգացման պատմությունը, այդ համայնքի եկեղեցական, կրոնական, մշակութային ու տնտեսական կյանքի ուսումնասիրությունը:

«Հնդկահայոց պատմությունը ամբողջովին արտահայտումն է այս մտածումին: Հնդկահայության պատմությունն ամբողջ, ուր եթե չեն պակսիր արդարև տխուր էջեր, կան նաև, ու բարեբախտաբար թվով շատ, ավելի շքեղագույններ՝ որոնց մեջ ի հանդես կուգան վտանգներու և փորձությանց անարկու այս դաշտին մեջ ապրած ու գործած փոքրիկ ազգի մը սրտին ու տաղանդին ամենեն փայլուն գծերը»[4]:

Պատմական անցյալի և այս դեպքում հնդկահայ գաղթօջախի պատմության ուսումնասիրությունը մեր ժողովրդի հոգևոր, մտավոր ու բարոյական ինքնանանաչման լավագույն միջոցներից մեկն է, հայ հոգին ամբողջապես հասկանալու և ճիշտ գնահատելու համար:

Հնդկահայերը միշտ ապրել են ս. Էջմիածնի պաշտամունքով, ունեցել իրավ հայրենասիրական մտորումներ և մտահոգվել իրենց ժողովրդի և հայրենիքի ճակատագրով: Նրանք արտահայտությունն են եղել հայ ժողովրդի ապրելու և գոյատևելու անհնկուն կամքի:

Չկա այսօր, ի թիվս այլ հայ գաղթօջախների, հնդկահայ մեծ ու փառավոր համայնքը (փոքրաթիվ հայություն է ապրում այսօր միայն Կալկաթայում և Բոմբեյում), բայց կա նրա պատմությունը, որով կարող ենք լրիվ պատկերացում կազմել երբեմնի բարգավաճ այդ համայնքի գոյության, փառավոր գործունեության մասին, որպես թանկագին ու կարևոր մեկ էջը հայ ժողովրդի պատմության:

Հնդկահայ գաղութից մեզ հասել են ազգային-եկեղեցական, կրոնական ու մշակութային հիշատակարաններ, եկեղեցիներ, խաչքարեր, տապանաքարեր, մամուլ, նյութական արժեքներ, հայ արվեստի չքնաղ մասունքներ, որոնցով ամբողջական գաղափար ենք կազմում այդ փառավոր ու շքեղ, երբեմնի մարդաշատ և այսօր փոքրաթիվ համայնքի մասին: Ազգային-եկեղեցական այդ հիշատակարանները ու բարձրարժեք պատմական այդ հուշարձանները, կանգուն թե կիսավեր վիճակում, ներկայացնում են մեր ժողովրդի բազմադարյան մշակույթի իրավ նվաճումները, նրա հավատի մեծությունն ու կենսունակությունը, ստեղծագործ մտքի ուժը:

Մեր այսօրվա սերնդի և մեր օրերի հայ ժողովրդի պատմության համար չափազանց թանկ է այս իմաստով հնդկահայ համայնքի պատմությունը, նրա կյանքի և գործունեության հետ կապված որևէ հիշարժան ու պատմական թվականի կամ դեպքի ոգեկոչումը:

Այդպիսի բացառիկ ու պատմական թվականներից մեկն է 1821 թ. ապրիլ 2-ը, երբ 150 տարիներ առաջ Կալկաթայի մեջ բացվում էր հայ մշակույթի և հայ մանկավարժության կարևորագույն օջախներից մեկը՝ Մարդասիրական հեմարանը:

Հնդկահայ համայնքի մեջ «ազգային զգացման կենսունակ խմորումը և հառաջդիմական գաղափարներուն խոր արմատավորումը... հայրենասիրական ու կրթասիրական բարձր տենչը այնքան հատկանշական ձգտումն է եղած հնդկահայության»[5]:

Հայոց Հայրապետը Իր հոբելյանական կոնդակում վկայում էր հնդկահայերի հավատքի, եկեղեցասիրության և հայրենասիրության զգացմունքների հարազատության, հայկականության և խորության մասին՝ գրելով.

«Ինչպես պարսկահայք, այնպես էլ հընդկահայք ավելի քան երկու հարյուր տարիներ, իրենց սրտերում իբրև սրբություն սրբոց պահել-պահպանել են պաշտամունքը մեր նախնյաց յոյս հավատքի, պաշտամունքը մեր մայրենի լեզվի, պաշտամունքը հայ հայրենիքի: Նրանք նույն սրբությամբ իրենց սրտերում ամուր պահպանել են նաև պաշտամունքը աստվածակերտ սուրբ Էջմիածնի, միակ գերագույն կենտրոնը հայոց քրիստոնեական հավատքի»:

Հնդկահայ գաղութի պատմությունը խորանում է մինչև ԺԶ դար: Ըստ հայ և օտար պատմական վկայությունների ԺԶ դարի սկզբներին ջուղայեցի հայեր հասած են եղել նույնիսկ հարավային Հնդկաստանի՝ Մալաբարի ափունքը[6]:

Գաղթականությունը, բռնագաղթը անցյա-

[4] **Թորգոմ արքեպ. Գուշակյան.** Հնդկահայք, տպավորություններ և տեղեկություններ, Երուսաղեմ, 1941, էջ 46 և 86:

[5] **Թորգոմ արքեպ. Գուշակյան.** նույնը, էջ 38 և 46:

[6] **Թորգոմ արքեպ. Գուշակյան.** նույնը, էջ 44:

լում մեր ժողովրդի պատմության մնայուն, ուղեկից երևույթներն են:

Մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական պայմանների բերումով, երբ «յողբս փոխեցաւ մեզ ամենայն» մեր հայրենի հողի վրա, հայ ժողովուրդը ձգտելով կյանքի, ինչքի, պատվի ապահովության, թողնում է իր հայրենիքը և ընկնում պանդխտության մռայլ ճանապարհների վրա, թափառում օտար աստղերի տակ՝ մի պուտ խաղաղություն և տարրական ապահովություն գտնելու համար. «Զորս ոչ սուր սատակեաց, ցրուեցան զօրէն մոլորական աստեղաց...»:

Ինչքան դառնություն կա Արիստակես վրդ. Լաստիվերտցու այս տողերի մեջ. «Աշխարհ ամենայն ի խաղաղութեան բնակի, մեր գերիք և կալանաւորք, սրակոտորք և տնաւերք, յընչից կողոպտածք, քանի՞ դառն է պատմութիւնս և ողբոց արժանի»[7]:

1605 ԹՎԱԿԱՆԻ ԲՌՆԱԳԱՂԹԸ

Այդ «դառն և ողբալի պատմությունը» ահավոր և աներևակայելի չափերով կրկնվում է նաև 1605 թվականին, շահաբասյան բռնագաղթով:

Ժամանակակից պատմիչը՝ Առաքել վրդ. Դավրիժեցին, արյունոտ սրտով է նկարագրել Արարատյան դաշտի հայության գլխին պատած այդ համազգային ողբերգությունը.

«Եհաս կատարած կենաց տանս հայոց... աւերեցան գաւառք, մարդաբնակ աշխարհն հայոց թափուր ի բնակչաց... զդաշտն Արարատու բովանդակ և զԵրևան քաղաք... քշեցին տարան... յաշխարհն պարսից...»: Շահ-Աբասը «արար աւերակ և անմարդաբնակ զամայելուչ աշխարհս հայոց... եղեն շինականիստ աւանք բնակութիւն գազանաց»[8]:

Շահ-Աբասի գերեվարությունից զերծ չմնաց նաև Արաքսի ձախ ափին շինված «աւանական ծագում» և 10—12 հազար հայ ազգաբնակչություն ունեցող մեծահարուստ, բարգավաճ Ջուղա գյուղաքաղաքը, որ. ըստ եվրոպացի ճանապարհորդների վկայության, կային շուրջ 2000 հայ տներ և 7 եկեղեցի:

«Զգիտենք,—գրում է պատմաբան Լեոն,— թե ինչ էր նրա՝ Ջուղայի անցյալ խոր հնության մեջ, բայց 15—16-րդ դարերից նա սկսում է փայլել հայ եռնեանամարտի վրա հերոս հայրենիք ազատանալի մարտանվեր. որոնք ոչ միայն հետաքրքրական էջեր են մտցնում միջազգային առևտրի պատմության մեջ, այլև հանդիսանում են մի շատ խոշոր, նմանը չունեցող հասարակական-կուլտուրական տարր, որի կատարած դերը հայ կյանքի զարգացման մեջ անհունորեն մեծ է»[9]:

«Արաքսի ժայռոտ ափից նրա առջև բացվում էին միջազգային հարաբերությունների անհուն հորիզոնները: Գրավոր աղբյուրները մեզ ցույց են տալիս, որ 16-րդ դարում ջուղայեցի վաճառականն առևտուր էր անում Հնդկաստանի շուկաներում մի կողմից, իսկ մյուս կողմից նա առևտրական գրասենյակներ բաց էր արել Վենետիկում և Իտալիայի այլ կողմերում»[10]:

Ջուղայեցին ոչ միայն իր առևտրական գործառնություններով «միացնում էր Արևելքն ու Արևմուտքը»[11], այլ նաև, որպես հին անեցիների ճշմարիտ ժառանգորդ, ուներ նաև մեծ սեր դեպի հայ եկեղեցին, հայ մշակույթն ու արվեստը: Վկա՝ «Ջուղայի խաչքարերը, որոնք ներկայացնում են զարդանկարի մի անհուն հոխություն իրենց արվեստագիտական նուրբ ճաշակով, ստեղծագործող երևակայության թռիչքով»[12]:

Ժամանակակից Դավիթ Գառնեցին երգել է փառքը Ջուղայի.

«Ջուղա քաղաք ազնիւ շինած...
Քոշք ու սարայք բարձրացուցած,
Եւ գոյնզգոյն ծաղկեցուցած,
Նա հիացումն էր տեսողաց,
Եօթն ժամատեղ էր հաստատած,
Եկեղեցիքն զարդարած,
Բուրվառնին ոսկեջրած,
Ծածկոցներն ոսկեթելած,
Աւետարանքն և սուրբ խաչեր
Անգին թարամբք էր զարդարած՝
Սեղանները եւ սրբութիւնն
Ուրախութիւն էր նայողաց»[13]:

Եվ ահա ամերվեզ հայ վաճառականությանն. հայ մշակույթի և արվեստի ոստան Ջուղան և ընակիչները 1605 թվականին գերեվարվեցին Պարսկաստան: Միայն Երևանի գավառից 1500 գերեր ռատաղկվեցին և ամրացան, շուրջ 60000 հայ բնտանիքներ որոնցից ազատի ճանապարհը. բայց նրանցից. որ խեղդվեցին Արաքսի մեջ «և որոնք անհմուտք էին լողելու և անգործք.... լցեալք էին ջրոյն և զետն առեալ տանէր

[7] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, Թիֆլիս, 1912, էջ 111—112:

[8] Պատմութիւն Առաքել վարդապետ Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884, էջ 33—38:

[9] **Լեո,** Հայոց պատմություն, հատոր Գ, Երևան, 1946, էջ 239:

[10] **Հ. Ղ. Ալիշան,** Սիսական, Վենետիկ, 1893, էջ 411—413: Նաև՝ **Լեո,** նույնը, էջ 239:

[11] **Լեո,** նույնը, էջ 240:

[12] **Լեո,** նույնը, էջ 241:

[13] **Հ. Ղ. Ալիշան,** նույնը, էջ 411—413:

զնոսա իրրև գիտուն... և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն... իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր»[14]:

Արարատյան դաշտից և մանավանդ Ջուղայից բռնագաղթվածները Պարսկաստանում նոր հայրենիք ստեղծեցին, տուն-տեղ եղան, ոտքի կանգնեցին, բուժեցին իրենց վերքերը, կառուցեցին Նոր Ջուղան 1616 թվականին, հիմնեցին եկեղեցիներ, Ամենափրկիչ վանքը, հաստատեցին տպարան:

Շահ-Աբասը՝ «Հարուստն ի խորհուրդս չարեաց»[15], սիրաշահելու համար, սակայն, ջուղայեցիներին, նրանց իրավունք է տալիս «մեծահիստ և բարձրաշէն եկեղեցիս շինել, կարգ ու զաւանդութիւն քրիստոնէական համարձակութեամբ կատարել, զկոչնակ հարկանել, զժամ կանչել»[16]:

Ջուղայեցիք բռնադատված այս ոգով տուն-տեղ են լինում Պարսկաստանում իրենց սրտում պաշտամունքը ս. Էջմիածնի և սերը հայրենյաց և միշտ մտածում էին «դառնալ յաշխարհն հայոց... յիշել զՀայաստան և ս. Էջմիածինն»[17]: Բայց այդ բարի ցանկությունը չիրականացավ: Պարսկաստանում շուտով սկսվեցին հալածանքները և տիրող ծանր եկեղեցական-ազգային ճնշման հետևանքով գաղթականներից ոմանք, «երեվանցիք և ջուղայեցիք անօգնական և հալածական», կորցրած երբեմնի իրենց նյութական ապահովությունն ու բարեկեցությունը, «չքաւորեցան, զոր ինչ ունէին վանառեցին և կերան»[18], իսկ ավելի համարձակները և ձեռներեցները «աննար մնացեալ, փախստական լեալ ճողոպրեցին այսր և անդր»[19]: Եվ ահա նրանցից մի մաս Ավդանբստանի և Տիբեթի վրայով Հնդկաստան հասավ՝ բախտ փնտրելու և նոր կյանք կերտելու համար: «Այս ժամանակի ոգին հերոսական էր, որը բռնի գաղթի ժամանակ ծնեցնում էր դյուցազներ և դյուցազնուհիներ ու զորանում էր ժողովրդի մեջ ազգային եկեղեցու հավատը»[20]:

Ժամանակագիր Ստեփանոս վարդապետը՝ Շամբ գյուղի ս. Ստեփանոս Նախավկայի վանքի վանահայրը, իր «Ողբ»-ում միրամոր սրտով նկարագրում էր հայրենի հողից բռնի գերեվարված հայության ծանր հոգեվիճակը.

«Ափսո՜ս քեզ, հայոց խեղճիկ ժողովուրդ,
Տիրուցան ելած, անմեղ, անհորհուրդ,
Գերի գնամանաք դեպի Խորասան...
Բարի ձեր որդվոց թոռանց պատմեցեք...
...Այսպես խայրենիքն բանդած թողեցիք,
Մասիսի անունն, հայոց տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խորվիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զմոռանաք միշի օրն դատաստանի:
Ակչս կուրանար, շինքս կոտրվեր,
Խեղճ Հայաստան, քեզ Էսպես չտեսներ»[21]:

Ե՛վ երևանցին, և՛ ջուղայեցին իրենց պանդխտության ծանր օրերին երբեք չմոռացան «զՀայաստանն ու ս. Էջմիածինն», իրենց «քաղցրիկ երկիրն հայոց», «թողած մոր գերեզմանն, սիրուն դաշտերն ու մեծամեծ քաղաքներ, հայրենյաց քաղցրիկ ջրերն ու շեն գեղերը»: Ջուղայեցին ուր էլ որ եղել է պանդուխտ ու գաղթական, առաջին հերթին կառուցել է իր աղոթքի տունը, հայկական ոճով եկեղեցիներ, ունեցել է իր ազգային գերեզմանը և ստեղծել է իր նոր կյանքը նոր հայրենիքում:

«Ջուղայեցին, հայության ամենեն ազնիվ և ուշիմ այս տիպարը, մեր ժողովուրդին այն տարրն է, որ ամենեն ճիշտ ու գեղեցիկ կերպով կպարզե իր ցեղային նկարագրի բարի կողմերը: Ի բնե մտացի և հայրենասեր, զարմանալի արագությամբ կօգտագործե ան իրեն ներկայացած նպաստավոր պայմանները, զարգացնելու համար իր ազգային բարեմասնությունները»[22]:

Հնդկաստանը, ցեղերի, կրոնների լեզուների և մշակույթների խաչաձևման այդ առասպելական երկիրը, եղավ նպաստավոր այն հողը, ուր հայրենիքից ու ս. Էջմիածնից հեռու հայ ժողովրդի այս թանկագին բեկորները տիրապես և գեղեցկորեն հանդես բերեցին իրենց ազգային նկարագրի լավագույն և շինարար հատկությունները, նվիրումը իրենց պապերի ույս հավատին, ազգային ավանդություններին, զարմանալի համարձակությամբ և սրտառուչ հավատարմությամբ:

Հնդկահայության պատմությունը պայծառ փաստն է այն իրողության, որ չար ու դաժան ուժերը ինչքան էլ ավերներ են գործել անցյալում, անկարող են եղել ոչնչացնել մեր ժողովրդի մտքի և հոգու գեղեցկությունները:

«Ջուղայեցին ոչ միայն առևտուր անելու տաղանդ ուներ, այլև այդ առևտրի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու շնորհք

[14] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 30—32:
[15] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 73:
[16] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 47—48:
[17] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 49:
[18] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 111:
[19] **Առաքել վրդ. Դավրիժեցի**, նույնը, էջ 110:
[20] **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 450:

[21] «Բազմավէպ», 1847, էջ 94—95:
[22] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 46:

ուներ: Ասիական սանձարձակ բարբարոսությունների կրկեսում խաղաղ կուլտուրական աշխատանքի իրավունքներ ձեռք բերել, այս ավելի խոշոր մեծագործություն էր, քան կարավաններով Հիմալայներից մինչև Եվրոպա չափելը: Այս մեծ նվաճումը ջուղայեցին անում էր ոչ թե, իհարկե, զենքի զորությամբ, այլ խելքով, ճարպկությամբ, հենված իր ամենամեծ ուժի՝ դրամի վրա... Եվ այսպիսի զարմանալի, ապշեցուցիչ օրինակ միայն ջուղայեցին էր տալիս, զարմանալի խոշոր չափերով, քան ոչ մի այլ հայ համայնք»[23]:

Որևէ եվրոպացուց առաջ ջուղայեցիներ եղել են, որ առաջին անգամ առևտրական նպատակներով ոտք են դրել Հնդկաստան:

Այս պատմական փաստերի առկայությամբ հնդկահայ գաղութը բացառիկ տեղ է գրավում մեր գաղթօջախների պատմության մեջ:

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հնդկահայ գաղութի ամբողջական, լիակատար պատմությունը 40 տարիների տքնաջան աշխատանքով, հանգամանալից կերպով և գիտական բարեխղճությամբ, օտար և հայ բազմաթիվ աղբյուրների օգտագործումով գրել է հնդկահայ գաղութի հարազատ զավակ, հայրենասեր ու բազմահմուտ մտավորական-պատմաբան Մեսրոպ Հակոբի Սեթ(յանը), «հնդկահայ ամենեն ուշագրավ դեմքերեն մին»[24]:

Մեսրոպ Հակոբի Սեթյանի այդ արժեքավոր ուսումնասիրությունը, որը գրված է անգլերեն լեզվով, հարուստ պատմական փաստերի վրա, աղբյուրների խորը իմացությամբ, հրատարակվել է Կալկաթայում 1937 թվականին և կոչվում է **«Հայերը Հնդկաստանում»** նախնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, 42 մամուլ, 629 էջ, բաղկացած 17 մասերից և 47 գլուխներից, ուր ամբողջական ձևով, պատմաբանի անաչառությամբ, հայրենասիրական ոգով, ներկայացված են այդ գաղութի ծագման, զարգացման, փառավոր գործունեության և 300-ամյա պատմության էջերը, ինչպես նաև հնդկահայ գաղութի անկման տխուր դրվագները, փշոտ և մերթ ստվերոտ կողմերը:

Մեսրոպ Հ. Սեթյանը, նախկին սանը Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի, ապա անդամ մի շարք ասիական և եվրոպական արքայական ընկերությունների, միջազգային հնագիտական կազմակերպությունների, Կալկաթայի համալսարանում գրաբար և աշխարհաբար լեզուների դասախոս, հնդկահայ գաղութի մասին գրել է շուրջ 15 այլ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք ունեն գիտական ուսումնասիրության լրջությունն ու ծանրությունը և հարազատորեն ներկայացնում են մեզ, երբեմնի այդ փառավոր համայնքի սիրանքի հավասար իրագործումները, ինչպես նաև նրա լքումի օրերը, անցած փառքերը, համայնքներ, որոնք հրաշքներ գործեցին Հնդկաստանի հողի վրա, ապրեցին ազգային-եկեղեցական, հայրենասիրական մտորումներով ու շիջան անփառունակ:

Ըստ պատմական տվյալների, առաջին ջուղայեցի կամ երևանցի վաճառականները, որոնք ոտք են դրել Հնդկաստան, Պարսկաստանի, Աֆղանստանի և Տիբեթի վրայով անցնելիս, մնայուն բնակություն չեն հաստատել երկրում:

ԺԶ դարի սկզբներին հյուսիսային Հնդկաստանում, մոնղոլական տիրապետության ժամանակ, առաջինը մեծն Ակբար կայսրն էր (1556—1605) Հնդկաստանի «Մարկոս Ավրելիոսը», որ ծանոթ լինելով հայերի առևտրական նախաձեռնության և վաճառականական հմտությանը, քաջալերում է հայ առևտրականներին և հանկանե անվանե ջուղայեցի վաճառական Հակոբին հաստատվելու իր կայսրության մայրաքաղաք Ակրայում: Կայսրը, լինելով մոլեռանդ մահմեդական, միաժամանակ կրոնական ներողամտությամբ արտոնում է՝ հայերին կապելու համար իր երկրին և իր արքունիքին, հայ եկեղեցու շինությունը: Ակրայում նախապես հայերը ունեցել են իրենց ազգային գերեզմանատունը և ահա նույն գերեզմանատունը 1600-ական թվականների սկզբներին կառուցվում է ամբողջ հյուսիսային Հնդկաստանում քրիստոնեական և հնագույն առաջին հուշարձանը, հայոց ս. Մարտիրոսաց մատուռը, ջուղայեցի մահտեսի Մարտիրոսի նվիրատվությամբ, որի գերեզմանը և մարմարակերտ տապանաքարը եղել են իր իսկ հիմնած մատուռում, պարսկերեն և հայերեն արձանագրությամբ:

Ահա հայերեն արձանագրությունը.

«Հանգեաւ ի այս տապանս
Փիրբաշին որդին
Մղտեսի Մարտիրոս Ջու-
ղայի վախճանեցաւ
ի Ակռայ քաղաքի եւ
Ապրանքն ետ Այ վս իր
Հոգոն. թիւ հայոց ՌԿ»: (1060+551=
1611 փրկչական թվ.):

---

[23] **Լեռ**, նույնը, էջ 241:

[24] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 162:

Մեսրոպ Սեթը, իր պատմության գրքում, մեջբերել է Ակրայի հայոց գերեզմանը թաղված 112 նշանավոր հայերի տապանաքարերի արձանագրությունը 1611—1927 թվականների (էջ 122—134): Այդ տապանաքարերը, որպես ազգային և պատմական հիշատակարաններ, ցույց են տալիս, թե տվյալ ժամանակահատվածում Ակրայում ապրել են հայեր լիիրավ կյանքով և տնօրինել իրենց եկեղեցական ու համայնքային կյանքը, իրենց ազգային, դարավոր ավանդությունների հիման վրա: Կայսրը միաժամանակ Ակրայի հայոց ս. Մարտիրոսաց եկեղեցու հոմար թույլատրում է հայ քահանայի հրավիրումը Նոր Ջուղայից և իր արքունական կալվածներից մեծ հողամասեր հատկացնում ջուղայեցի վաճառականներին, որպես բնակության վայր, այգի:

Կայսրի թագուհիներից մեկը՝ Մարիամ Զամանի Բեգումը, հայ է եղել: Մինչև այժմ էլ Ակրայից քսան մղոն հեռավորության վրա գտնվում է թագուհի Մարիամի՝ «Ակբարի քրիստոնյա կնոջ», հայ իշխանուհու գեղեցիկ պալատը, որը կառուցվել է 1568—1569 թվականներին, ուր և թաղված է հայ թագուհին: Թագուհու անձնական բժշկուհին եղել է նույնպես Հուլիանե անունով մի հայ կին: Պալատական գլխավոր դատավոր և կայսրի խորհրդական Աբդուլ-Հայը, պետական մեծ գործիչ Միրզա Զուլ-Կարնենը, որը համարվում էր «ամբողջ Հնդկաստանում քրիստոնեության սյունը», նույնպես հայեր են եղել[25]:

Ակրայում մոնղոլ տիրապետության շրջանում և մանավանդ ԺԶ—ԺԷ դարերում ջուղայեցի հայերը շատ կարևոր դիրքեր են գրավում երկրի տնտեսական-քաղաքական կյանքում, կատարում են դիվանագիտական նարևոր և պատասխանատու առաքելություններ, առհասարակ և եվրոպական մի շարք արքունիքների մոտ[26]:

Հնդկաստանի երկրորդ քաղաքը, որ ԺԷ դարի սկզբներից սկսած հատատված է եռեռ հայ համայնք, դա Նարվարն է, Կվալիորի իշխանության մեջ:

Մեզ հասել են այս քաղաքում հայկական նանքի գուրությունը հաստատող երկու տապանաքարեր՝ հայերեն արձանագրությամբ: Առաջին տապանաքարը կրում է 1743 թվականը և նանգնեցված է Կվալիորի նարավարհ. ոնդատետ Հանոր Պետրոսյանի հիշատակին, որը 70 տարի, որպես տպագրավոր ահնվորանան և քարաքանան ոոոՀի, սանձնվիրաբար և բացությամբ ծառայել է այդ հանգանգին, արժանանալով տեղացի ժողովրդի և արքունիքի մեծ հարգանքին և երախտագիտությանը: Նա իր բանակում ունեցել է 40 հայերից բաղկացած հայկական մի ջոկատ՝ բոլորն էլ առևտրականներ: Գնդապետ Հակոբի ծնողները եղել են բնիկ երևանցիներ՝ բռնագաղթած 1605 թվականին Սպահան:

Երկրորդ տապանաքարը, որը կրում է 1750 թվականը, Նարվարի հայոց համայնքի ջուղայեցի տ. Առաքել քահանայի տապանաքարն է՝ վախճանված 72 տարեկան հասակում:

Նարվարը ունեցել է կազմակերպված հայ համայնք: Տեղի եկեղեցին կառուցվել է 1742 թվականին: Հայ քահանայի ներկայությունը Նարվարում, որպես ժամանակի կարևոր և մեծ քաղաքի, համարվում է նաև ապացույց այն տվյալ ժամանակահատվածում տեղի հայ համայնքային կյանքի կազմակերպվածությանը, նշում է Մեսրոպ Սեթը[27]:

Մոնղոլական գրավման ժամանակաշրջանում Դելին նույնպես եղել է հյուսիսային Հնդկաստանի կարևոր քաղաքներից մեկը: Այստեղ ևս, մոնղոլական պալատում, 1713 թվականից հիշվում է խոջա Մանուրը, որը արքունիքի կողմից դեսպանության է մեկնում Կայկաթա՝ բանակցելու համար անգլիացիների հետ: Հիշվում են նաև խոջա Մուրադը ու մի հայ քահանա, որոնք արքունիքում վայելել են նույնպես մասնավոր պաշտպանությունն ու վստահությունը մոնղոլ իշխողների:

Դելիում հայ եկեղեցու գոյության մասին պակասում են պատմական աղբյուրները, թեև հայ քահանայի ներկայությունը փաստ է նաև հայ եկեղեցու գոյության: Ակրայում 1614—1675 թվականներին պաշտոնավարել են տրե հայ քահանաներ[28]:

1739 թվականին պարսից Նադիր շահի՝ ռեսի Դելի կատարած արշավանքների ժամանակ բանդվել է հայ եկեղեցին: Դելիից դուրս գտնվող հայոց գերեզմանատանը, սակայն, պահված են մեզ հայ մարդկանց հանրեն տապանաքարերը, որտեղ հնագույնը կրում է 1787 թվականը. դա թիֆլիսեցի Ղազարոսի որդու՝ Զաքարի տապանաքարն է:

Դելիում հայկական երկրորդ եկեղեցին կառուցվել է 1781 թվականին, որը, սակայն, շուտով ավերվել է գնացել ուրիշ մահմեդական մզեթանների[29]:

Հասարակ բառագանձ և կազմակերպված համայնքներ հոս են ԺԷ դարի սկզբներից

[25] **Մեսրոպ Սեթյան**, Հայերը Հնդկաստանում, էջ 1—21, 102—114, 151—166:

[26] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 88—91:

[27] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 147—149:

[28] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 22—23:

[29] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 195—199:

նաև Լաճորում, որը Փունջապի նահանգի մեծ կենտրոնն էր: Պատմական փաստերը վկայում են սեծահարուստ վաճառական 2.3 հայերի ներկայության մասին այս քաղաքում, 1600-ական թվականներից: Լաճորը եղել է ողջ շրջանի հայ եպիսկոպոսի աթոռանիստը: Քաղաքում հայ համայնքը ունեցել ն իր մասնավոր թաղամասը բերդի մոտ: Ակրայի հայերից Սիրզա Ալեքսանդրը (Իսկենդեր) մեծ գումարներ է նվիրել Լաճորում հայ եկեղեցու և գերեզմանատան շինության համար, ուր ապրելիս են եղել նրա ընտանիքն ու զավակները: Լաճորի կառավարիչ է եղել նույն Սիրզա Ալեքսանդրի որդի, նշանավոր Սիրզա Զուլ-Կարնենը, որը քաղաքում ունեցել է իր ապարանքն ու այգին, ուր և թաղվել է նրա կինը՝ Հեղինեն, 1638 թվականին, գեղեցիկ տապանաքարի տակ: Այստեղ է թաղվել նաև Միրզան, 1656 թվականին: Լաճորի հայ համայնքը աֆղան արշավանքների ժամանակ նույնպես զոհ է գնացել կրոնական մոլեռանդության: Այդ պատճառով համայնքի մասին ավելի լայն տեղեկություններ չունենք 1757 թվականից հետո: Լաճորի կենտրոնական թանգարանում պահվում են չորս տապանաքարեր՝ հայերեն արձանագրությամբ, որոնցից հնագույնը կրում է 1601 թվականը: Այստեղ է նույնպես, որպես թանգարանային հազվագյուտ իր, 1761 թվականին հայերի շինած նշանավոր «Զամշամա» թնդանոթը, որը մեծ վնասներ է հասցրել աֆղան արշավողներին[30]:

ԺԶ դարի սկզբներից Սուրատում ևս ապրել է մեր ժողովրդի թանկագին մի բեկորը: Սուրատը ԺԷ և ԺԸ դարերում եղել է շատ կարևոր և բարգավաճ ազգային-եկեղեցական համայնք: Ըստ տապանաքարերի արձանագրության, 1579 թվականին Սուրատում է թաղվել տեղի վիճակավոր տ. Ոսկան քահանայի կինը՝ Մարինասը, որը մահացել է 53 տարեկան հասակում:

1668 թվականին հայերը Սուրատում ունեցել են իրենց փայտաշեն եկեղեցին, որը այրվել է մոնղոլական արշավանքների պատճառով: 1777 թվականին կառուցվել է քարակերտ և գեղեցիկ ս. Աստվածածին նոր եկեղեցին: Հնդկահայ եկեղեցիների քահանաները, որոնք Մայր Աթոռի գիտությամբ ուղարկվում էին Նոր Ջուղայի առաջնորդարանից, պաշտոնավարում էին հերթական դրությամբ, երեք տարի: Այս պատճառով այդ քահանաները համարվում էին ոչ թե ծխատեր, այլ վիճակավոր քահանաներ, որոնք իրենց պաշտոնավարության շրջանը ավարտելուց հետո վերադառնում էին՝ իրենց պաշտոնը հանձնելով նշանակված հաջորդին:

Պաշտոնական մի նամակից տեղեկանում ենք, որ Նոր Ջուղայից 1788 թվականին 14 քահանաներ ուղարկվել են Հնդկաստանի զանազան համայնքներում պաշտոնավարելու համար, որոնցից չորսը պաշտոնավարել են Սուրատում, ուր եղել է չորս հարյուր ծխական ժողովուրդ[31]:

Սուրատի հայ համայնքից հայրենասեր աղա Հովհաննեսյան Գիրյաքյանը 1790 թվականին 25000 ռուպի է նվիրում Հովսեփ արքեպ. Արղությանին, Նոր Նախիջևանում ազգային հաստատությունների հաստատման համար: Նույն հայրենասեր և կրթասեր վաճառականի միջոցներով Նոր Նախիջևանում բացվում են երկու դպրոցներ՝ ս. Գրիգոր Լուսավորիչ և ս. Աստվածածին անուններով:

Նրա մեկենասությամբ հաստատվում է Նոր Նախիջևանում առաջին հայկական տպարանը: Նա մեծ նվիրատվություններ է կատարել նաև ս. Էջմիածնին, Նոր Ջուղայի վանքին, Կալկաթային[32]:

Սուրատում «ապրած էր երբեմն բարգավաճ հայ գաղութ մը: ...Պողոտայի վրա նայող կետի մը վրա, կկանգնի համակ՝ քարաշեն գմբեթավոր մատուռ մը, ներքուստ հայկական ոճով...: Անմիջապես անոր կկցվի գմբեթաձև այուանասրահ մը, կարճ ու թանձր այուններու վրա հեծած երեք կարճ կամարներով, որոնք քիչ մը կհիշեցնեն Սանահնի վանքի տաճարին գավթասրահը: Մատուռին մեջ, ատյանին թաղված է Ղալանթար՝ որդի ականավոր Փանոս Ղալանթարյանի: Այուանասրահին տակն ու շրջակայքը ծածկված են նույնպես ամբողջովին տապանաքարերով, որոնք ջուղայեցի ականավոր գերդաստաններու գերեզմաններու երամները կկազմեն: Ու մինչ մի առ մի կընդօրինակեի մահվան գրականության վիմատառյալ այս մատյանները, ինձ կթվեր կարդալ ազգային անմահության գիրքը ժողովրդի մը, որուն հանար կյանքն ու մահը հավասարապես կոիվ եղած են միշտ, կոիվ՝ աշխարհի և մարդոց շնչող ուժերուն, կոիվ՝ ժամանակին ավերիչ զորության դեմ:

Կապրին այն ժողովուրդները միայն, որոնք, երբ ներկան կանիրավե զիրենք, անցյալին պատմական գիտակցութենեն ժառանգած իրենց իրավունքին փաստը արվեստի և գրականության ձեռքով կհանձնեն ապագայի հույսերուն»[33]:

---

[30] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 201—206:

[31] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 253:

[32] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 253—259:

[33] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 34—36:

Սուրատի հայ համայնքը իր ամենաբարգավաճ շրջանը բոլորում է 1760—1800 թվականներին: Այստեղ ապրել և գործել են ավելի քան 30 հայ առևտրական մեծ տներ[24]:

1658 թվականին Սուրատում է ընդօրինակված հայերեն ընտիր մի ձեռագիր:

Սուրատի հայ համայնքը ևս ապրում է ԺԹ դարի առաջին քառորդին իր անկման օրերը: 1820 թվականին այստեղ մնացել են միայն յոթ հայեր[25]: Սուրատը երբ կորցնում է իր տնտեսական-վարչական կարևորությունը, ի հաշիվ Բոմբեյի, հայերը լքում են քաղաքը և հաստատվում Բոմբեյում:

Հնդկահայ գաղութի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում նաև Բոմբեյը:

Դեռևս 1676 թվականից մի խումբ սուրատցի հայ վաճառականներ, խոջա Մինասի և խոջա Դելանի գլխավորությամբ, առևտրական մասնաճյուղեր են հիմնում այստեղ և մնայուն բնակություն հաստատում:

«Բոմբեյի գաղութը հնդկահայ գաղութներում հնագույններեն մին է, ավելի հին նույնիսկ, քան Սուրատը, քանի որ իբրև վաճառաշահ մեծ կենտրոն և առաջին կայան, հոս կելնեին և կհավաքվեին նախ Պարսկաստանեն այս կողմը գաղթող ջուղայեցիներն ու շիրազցիները և հետո կցրվեին ուրիշ կողմեր»[26]:

Բոմբեյի հայոց ս. Պետրոս եկեղեցին կառուցվել է 1796 թվականին, ս. Էջմիածնի նվիրակ տ. Հակոբ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ, որը և կատարել է օծումը ըստ արձանագրության, Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրով: Եկեղեցին կառուցվել է համադանցի Հակոբի նվիրատվությամբ՝ իր հոր՝ Պետրոսի և մոր՝ Զանան Խաթունի հիշատակին:

Բոմբեյում իբրև ազգային հիշատակարան, բացի եկեղեցուց, կան երկու գերեզմանավայրեր, մեկը քաղաքի մեջ, մյուսը՝ քաղաքից դուրս... Գերեզմանների մեծ մասը զարդարվել են հայկական ոճով մահարձաններով: Տապանաքարերից հնագույնը կրում է 1767 թվականը:

«Եթե Բոմբեյի մեջ հայությունը անուն մը՝ հասցե մը ունի տակավին, կհավատամ թե գլխավորաբար այս անշուք և պարզ մատուռին շնորհիվն է ան, մատուռ՝ որ խարսխացից մըն էր ալիքներու մեջ նետված անընդունակ և փոքրիկ համայնքի մը հետին փշրանքները փրկելու համար անդնդասույզ կորուստե:

Նախ լեզուն, ապա պատմական տեղեկություններ, հետո զգացումը. այս կարգով կտկարանա ազգային կյանքը տարաշխարհ, գաղութներուն մեջ, և եթե չլինի եկեղեցվո կամ կրոնական ոգիին ամրապնդիչ կապը, առաջին սերունդին հետ թուլցած քայքայված է արդեն ասեն բան, երկրորդին թողլով սրբված ջնջված հիշատակի մը երազային պատկերը սոսկ, տարտամ ու անընթեռնելի»[27]:

Բենգալի նահանգի Չինսուրա կամ Չիչրա քաղաքում ջուղայեցիք կառուցել են՝ Հընդկաստանում հնագույն քրիստոնեական առաջին հուշարձանը, հայոց ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցին, 1695 թվականին, մոնղոլական տիրապետության ժամանակ:

1645 թվականին Չինսուրայում է հաստատվում ջուղայեցի նշանավոր առևտրական «Ղարիբ» խոջա Հովհաննես Մարգարը, իր ընտանիքով և երկու եղբայրներով: Խոջա Մարգարի և Մարգարյան ընտանիքի բարերարությամբ էլ կառուցվում է տեղի հայոց ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցին 1695 թվականին: 1697 թվականին վախճանվում է խոջա Մարգարը և թաղվում իր կառուցած եկեղեցում: Նրա տապանաքարը ունի գրաբար արձանագրություն, ուր խոսվում է «այս նշանավոր Ղարիբ» առևտրականի բարեմասնությունների, ֆիզիկական գեղեցկության, մեծագործությունների մասին, «պատվված թագավորներից, մեծարված իշխաններից»:

Չինսուրայի եկեղեցու մեջ և բակում գտնվում են շուրջ 140 մարմարյա տապանաքարեր, արձանագրություններով, 1695—1868 թվականներին մահացածներին: Այս տապանաքարերից մեկը «Ղարաբաղի վերջին անկախ հայ իշխանի որդու՝ Դավիթ Ֆրիդոն Մելիք Բեգլարինն է», 1884 թվականին:

Չինսուրայի հայոց եկեղեցին մինչև այսօր կանգուն է, և տարին մեկ անգամ Կալկաթայի հայությունը ս. Հովհաննես Մկրտչի տոնին ուխտագնացություն է կազմակերպում դեպի Չինսուրա՝ երկյուղած բարեպաշտությամբ ոգեկոչելու համար նաև հիշատակը երբեմնի փառավոր հայ մի համայնքի[28]: «Չինսուրան կվայելեր դրացի և կենսալից գաղութի մը՝ կալկաթահայության գուրգուրանքը»[29]: «Ընդարձակ բակի մը մեջ, որ լիքն է տապանաքարերով, և զոր կշրջապատեն արևադարձային տունկերու և ծառերու սիրուն անտառ մը և քանի մը միա-

[24] Հարություն Տեր-Հովհաննիսյան, Պատմություն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1880, էջ 186:

[25] Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 267:

[26] Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 253:

[27] Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 23—24:

[28] Մեսրոպ Սեթյան, նույնը, էջ 303—312:

[29] Թորգոմ արքեպ. Գուշակյան, նույնը, էջ 172:

հարկ բնակարաններ, ուր կմնան եկեղեցվո պաշտոնյաներն ու ծառայողները, կկանգնի տաճարը, ռոմանական ոճով կառուցված հասակ քարակիր շենք մը, դրան առջև կբարձրանա հույժ գեղեցիկ զանգակատան բարձր աշտարակը, որուն սեջ կան երկու խոշոր զանգակներ: Եկեղեցվո ներսը նույնպես սիրուն է շատ և նստարաններով ու ամեն կարգի զարդերով վայելչորեն կահավորված:

Եկեղեցին կառուցված է 1695-ին ինչպես կհասկցվի դրան նկատի հակիրճ արձանագրութենեն, և է այժմու հնդկահայ եկեղեցիներուն հնագույնը»[40]:

Չինուրայից մոտ մեկ ժամ հեռավորության վրա գտնվում է Սըրբմբուր կամ Սիրամփուր կոչված գյուղաքաղաքը, ուր 1817 թվականին տպագրվել է հայերեն Աստվածաշունչը, Ոսկանյան Աստվածաշնչի (Ամստերդամում, 1666 թ.) օրինակի վրայից, «այժմ նորոգ տպագրեալ եղև ջանիւք և արդեամբք յօժանդական միաբանութենէ ժողովոյն Աստուածաշնչի, որ ի Կալկաթայ. 1307 էջ»[41]:

Բենգալի նահանգի Մուրշիտապատ գավառի Սաիդաբադ քաղաքում 1665 թվականից հաստատվել են ջուղայեցիները, մոնղոլ իշխանապետների հրովարտակներով:

Շուրջ հարյուր տարի այս համայնքի կյանքի և գործունեության մասին պատմական տվյալներ չկան:

ԺԸ դարի սկզբներից է, որ Սաիդաբադում փառավոր գործունեություն է ծավալում հայ համայնքը: Տեղի նշանավոր դեմքերից է աղա Պետրոսը, ջուղայեցի տ. Նիկոլ քահանայի որդին, որը մեծ ծառայություններ է մատուցում երկրին, արքունիքին և հայ համայնքին:

Սաիդաբադի հայոց համայնքի երկրորդ և կարևոր դեմքը հանդիսանում է խոջա Պետրոս Արաթունը, ծնողները՝ երևանցի: Նա դիվանագետ էր, նշանավոր առևտրական և մարդասեր: Խոջա Պետրոսի երկրորդ եղբայրը՝ խոջա Գրիգորը կամ Գորկին խանը, հանդիսանում էր և՛ Սաիդաբադի, և՛ հայ համայնքի ազդեցիկ դեմքը, Նավապ Միր Քասիմի բանակի գլխավոր հրամանատարը, պետական նախարար, մեծ զինվորական ու գեներալ, և՛, ըստ օտար աղբյուրների՝ «իր ժամանակի մեծագույն մարդկանցից մեկը» և «Կալկաթայի հայոց երկրորդ Աստվածը»[42]: Հայտնի անձնավորություն է եղել նաև նրանց երրորդ եղբայրը՝ Բարսեղ Արաթունը:

Վերոհիշյալ խոջա Պետրոս Արաթունի բարերարությամբ 1758 թվականին կառուցվում է Սաիդաբադի հայոց ս. Աստվածածին գողտրիկ եկեղեցին՝ ի հիշատակ իր ծնողների և թե եղբայրների: Խոջա Պետրոս Արաթունը վախճանվում է 1778 թվականին և թաղվում իր կառուցած եկեղեցում[43]:

Սուրբ եկեղեցում է թաղված նաև Կալկաթայի հայոց Սարդասիրական ճեմարանի հիմնադիրներից մեկը՝ «Մնացական Վարդանյանը, որու գերեզմանը ծածկված է գեղեցիկ տապանաքարով մը, և ուր, իր պատկերը կա քանդակված»[44]:

Եկեղեցու շուրջ և բակում ավելի քան 110 մարմարակերտ տապանաքարեր կան, արձանագրություններով: «ԺԸ դարու սկիզբը, բավական ծաղկած հայություն մը պետք է եղած լինի այստեղ: Գերեզմանատան արձանագրությանց մեջ մինչև 1840 թվականը կա, որմե կարելի է նույնպես հետևցնել թե 1850-ին բոլորովին պարպված չէր տեղվույս հայությունը, ինչպես Հնդկաստանի բոլոր քաղաքներուն մեջ, ուր հայեր գտնված են, նույնպես և հոս, քաղաքին մեջ, կա **հայկական բազար** փողոց մը, որ կցուցնե շիջած հայագաղութին երբեմնի առևտրականն դիրքը»[45]:

Մինչև 1860 թվականը Սաիդաբադի եկեղեցին ունեցել է իր վիճակավոր քահանան: Բայց հետագայում «եկեղեցին իր դուռները փակել է, որովհետև 75 տարիներից ի վեր այնտեղ եկեղեցական պաշտամունք և ս. պատարագ չի կատարվել»[46]:

Տարին միայն մի անգամ հունվարի վերջին, հոգևորականությունը, ժողովուրդը և Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի ուսանողները, իրենց տեսչի և ուսուցիչների հետ, այցելում են Սաիդաբադի եկեղեցին՝ իրենց հարգանքի և երախտագիտության տուրքը մատուցելու ճեմարանի հիմնադիրներից Մնացական Վարդանյանին, որը թեև ծնվել է Ջուղայում 1772 թվականին, բայց մահացել և թաղվել է Սաիդաբադում 1827 թվականին:

Բենգալի նահանգի կարևոր առևտրական կենտրոն է եղել նաև Դակկան, ուր ԺԸ դարի սկզբներին գոյություն է ունեցել հայկական բարգավաճ համայնք:

Տապանաքարերի արձանագրություններն այստեղ էլ վկայում են հայերի ներկայության մասին Դակկայում 1714 թվականին:

---

40 **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 125:

41 **Հայկ Դավիթյան**, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Մատենագիտություն, Երևան, 1967, էջ 75:

42 **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 343—344:

43 **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 325—359:

44 **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 170:

45 **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 172:

46 **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 355:

Հայերը նախապես ունեցել են այնտեղ փայտաշեն իրենց «առտնին եկեղեցին»: Հետագայում Դակկայի հայոց ս. Հարություն եկեղեցին կառուցվել է 1781 թվականին, երբ հայ հասարակությունը սեծացել էր:

«Այս եկեղեցին գեղեցկագույնն է Հընդկաստանի սեջ սեր տեսած հայ եկեղեցիներում: Ջեռվ ավելի նման է Ջիշրայի (Հինսուրայի) եկեղեցվույն, միայն թե ավելի բարձր է քան զայն: Ավագ դրան կցված ուներ բարձր զանգակատուն մը, հինգ զանգակներով. ատոր առջևը, կանուխ, կա եղեր ժասացույցի ավելի բարձր աշտարակ մը, որ երկրաշարժեն կործաներ է 1836 թվին. երկու կողմը կան սյունասրահ գավիթներ, ներսը ունի էլեկտրական հովհարներ և լուսավորություն: Բակին մեջ է տեղվույս գեղեցիկ գեղեցիկ բահանայատունը. արտաքոց գեղեցկությամբ մը կպայծառանա ամբողջ բակը, ուր կան սիրուն ծաղկանոցներ»[47]:

Դակկայի հայոց եկեղեցին գտնվում է Արմենիտոլա կամ հայկական փողոց-ում: Եկեղեցու օծումը կատարել է Մայր Աթոռի ընտիրակ Եփրեմ արքեպ. Զորագեղցին, ապագա կաթողիկոսը (1809—1836): Եփրեմ Զորագեղցու յուղաներկ մեկ նկարը, որը գործն է եղել եվրոպացի մի հայտնի նկարչի, կախված է եղել երկար ժամանակ Դակկայի հայոց եկեղեցում: Նկարը 1907 թվականին Մայր Աթոռի միաբան և Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ տ. Սահակ արքեպ. Արվատյանը վերցրել է՝ ուղարկելու համար Մայր Աթոռ[48]:

Դակկայի հայոց եկեղեցին 1849 թվականին զարդարված է եղել Վերջին ընթրիք-ի և Խաչելության հոյակապ նկարներով:

Դակկայի հայերի մեջ իրենց հարստությամբ և ազգային բարերարությամբ նշանավոր են եղել ջուղայեցի աղա Խաչիկ Մինասյանը, աղա Հարությունն Միքայելը, Նիկողոս Սարգար Պողոսը, որը հիմնել է «Դակկան, Նիկողոս Դպրոցը», Մանուկ Գալստյանը և ուրիշներ:

Երբեմնի այս բարգաված համայնքից մնացել է միայն հայկական եկեղեցին, որպես լուռ վկան այն բանի, որ մի ժամանակ այստեղ էլ ապրել է հարուստ ու կենտալից գործունեությամբ մի հայ համայնք:

ԺԷ դարի ժամանակագիր ջուղայեցի Կոստանդ խոջան, որը իր գիտնականության համար անվանվել է «Ջուղայի Գամաղիելը», Ջուղայում հայ վաճառականների սեկեռատությամբ ունեցել է սասնավոր մի դպրոց «առևտրական թեքումով», ուր հաճախել են ջուղայեցի հարուստ հայ վաճառականների զավակները առևտրական, հաշվապահական, տոմսարագիտական և աշխարհագրական գիտելիքներ ձեռք բերելու հասար, որպեսզի ապագայում կարենան շարունակել իրենց ծնողների առևտրական գործունեությունը օտար երկրների հետ:

Կոստանդ խոջան իր աշակերտներին սովորեցրել է հայ եկեղեցու դավանությունն ու քրիստոնեականը, հայոց լեզու (գրաբար), ընդհանուր ազգաց պատմություն և աշխարհագրություն, ինչպես նաև առևտրական գիտության սկզբունքները և վաճառականության պատմությունն:

Այս գիտելիքների հետ միասին խոջա Կոստանդը իր ապագա վաճառական աշակերտներին տվել է հետևյալ հետաքրքիր ու գործնական խրատականը.

«Սիայնակ մի ճանապարհորդիր: Անծանոթ և չփորձված մարդու հետ ո՛չ նստիր և ո՛չ քնիր. ճանապարհին կարող է նա քեզ սպանել և կողոպտել քո ողջ ունեցածը: Քո ծոցի գրպանում պահիր գրելու թուղթը, գրիչն ու թանաքը՝ քո վերարկուի գրպանում, լանդը՝ քո սնդուկում. կշեռքը իր կշռաքարերով՝ քո ձեռքի պայուսակում, երկաթյա կանգունը՝ քո գոտու մեջ, մտածումները՝ քո սրտում պահիր և միտքդ՝ Աստծու վրա: Գոհացիր նրանով, ինչ Աստված քեզ կտա. մի վստահիր անծանոթ մարդուն, նույնիսկ մի կապոց, գրի առ ամենօրյա քո գործառնությունները. ինչ որ կարող ես այսօր անել, վաղվան մի թողուր»:

Խոջա Կոստանդի այս խրատականը «վաճառականության ավետարանն» է եղել ջուղայեցի բոլոր առևտրականների համար:

Խոջա Կոստանդի դպրոցը մեծ ազդեցություն է գործել հայ վաճառականական մտքի զարգացման պատմության վրա: Այդ դպրոցի հովանու տակ հասել և կազմակերպվել է հայ վաճառական մտավորականության հետաքրքիր մի նոր սերունդ, որն իր օրագրություններով, ճանապարհորդագրական հուշագրություններով հարստացրել է մեր գրականությունը: Առևտրական մտավորականության այդ սերնդի «դերի մեծագույն արժեքն այն է, որ նա տանում է հայ միտքը դեպի աշխարհականացում, դեպի իրական կյանքի պահանջների ճիշտ ընդունումը: ...18-րդ դարում հայ վաճառականությունն արդեն այն չէ գրականության մեջ, ինչպես առաջ: Վաճառական-գրողներ, վաճառական-հեղինակներ, վաճառական-թարգմա-

[47] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 179—184:

[48] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 574:

[49] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 613:

նիշներ,—սրանք արդեն հազվագյուտ երևույթներ չեն, այլ կազմում են մի ամբողջ հոսանք, որի կատարած գործը չափազանց կարևոր է... Այս կենսունակ հոսանքը կատարում էր խոշոր հասարակական դեր»[53]:

Խոջա Կոստանդը, որը մահացել է 1702 թվականին Նոր Ջուղայում, պատրաստել է նաև ամբողջական ու հետաքրքիր, վավերական ցուցակը Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի ավելի քան 50 այն քաղաքների, ուր հաստատվել են ջուղայեցի վաճառականները առևտրական նպատակներով և հասել իրենց նյութական բարօրության և տնտեսական հզորության գագաթնակետին:

Դժվար է հնդկահայ գաղութի պատմությանը նվիրված այս համառոտ ակնարկի մեջ ընդգրկել այդ 50-ից ավելի գաղթօջախների կյանքն ու գործունեությունը, գաղթօջախներ, որոնք լքվել են հայ համայնքների կողմից շատ վաղուց, զանազան պատճառներով:

Բայց մինչև 1850-ական թվականները այդ գաղթօջախներից շատերի անվանը և հիշատակությանը հանդիպում ենք մանավանդ Ամենայն Հայոց Հայրապետների կոնդակների մեջ, կոնդակներ, որոնք հայ եկեղեցու դարավոր և պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնից միշտ հասցեագրված են եղել եկեղեցական և հայրենասիրական բովանդակությամբ և տարբեր առիթներով Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հեռավոր երկինքների տակ ապրող հայ ժողովրդի թանկագին բեկորներին՝ որպես հարազատ զավակները Մայր Աթոռի և հայոց աշխարհի:

Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետները միշտ և հանապազ հետաքրքրվել են հնդկահայ գաղութի կյանքով ու գործունեությամբ և կենդանի, գործարար կապ են պահել-պահպանել այդ գաղթօջախների հետ՝ որպես տիրախնամ թեմերի և համայնքների, առաջնորդներով, նվիրակներով և հայրապետական պատվիրակների նշանակումով:

1850 թվականին, դեկտեմբերի 31-ին, Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայությանը ուղղած իր կրոնաշունչ և հայրենաբույր կոնդակում Ներսես Ե Աշտարակեցին, գոհունակությամբ խոսելով հնդկահայերի 'Պոլոժենիայի հակաեկեղեցական մի շարք հոդվածների առթիվ գրած բողոքագրի մասին, ներկայացնում էր նոր առաջնորդ տ. Թադեոս եպս. Բեգնազարյանին իր հայրական խոսքն ու պատգամը ուղղելով «Կալկաթայի, Չինսուրայի, Սաիդաբադի, 'Խակկայի, Ակրայի, Կվալիորի, Կավնքերի, Լյուսկնովի, Ֆատտիհաբադի, Լահորի, Բոմբեյի, Սուրատի, Հայդերաբադի, Սադրասի, Սասուլիպատամի, Ռանգունի, Սուլմեյնի, Ավայի (Սանդալա), Պենանգի, Սինգապուրի, Սալակկայի, Բաթավիայի, Սամարանկի, Սուրաբայայի, Տեկալի, Ժեբահարի» հայ համայնքներին[54]:

1963 թվականի նոյեմբերի 15—25 օրերին, երբ Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետը Հնդկաստան էր այցելում եղբայրական հրավերով Հնդկաստանի և Արևելքի մայրաքաղաք եկեղեցու, Իր հայրապետական ուղևորության առիթով Նորին Սրբությունը այցելում էր նաև հնդկահայ համայնքներն ու եկեղեցիները՝ Բոմբեյ, Մադրաս, Կալկաթա, նոյեմբերի 25—դեկտեմբերի 17 օրերին, անձամբ տանելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնությունը և Իր շնորհաբեր ներկայությամբ, հայրապետական Իր ջերմ խոսքով ու հայրենաշունչ պատգամով մխիթարելու հնդկահայ Իր զավակներին:

Ամբողջացնելու համար հնդկահայ գաղութի պատմությանը նվիրված սույն համառոտ ակնարկը, ամփոփելու հաջորդ համարում մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնելու Մադրասի, Կալկաթայի հայ համայնքների ստեղծման, կազմակերպության, նրանց ծավալած եկեղեցաշեն, հայրենասիրական, մշակութային գործունեության, ինչպես նաև մանավանդ Մարդասիրական Ճեմարանի հաստատման, հնդկահայ մամուլի և տպագրության տարեգրության համառոտ պատկերը:

(Շարունակելի)

[53] **Լեո**, նույնը, էջ 1021:

[54] **Մեսրոպ Սեթյան**, նույնը, էջ 613—614:

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ
(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

103. **Հակոբ Դ Ջուղայեցի** (1655—1680).—Ծնվել է 1598 թվին Հին Ջուղայում: Աշակերտել է Խաչատուր վարդապետ Կեսարացուն և հաջորդել Փիլիպպոս կաթողիկոսին 1655-ին: Եղել է ԺԷ դարի հոգևոր-մշակութային զարթոնքի ուսումնիրաներից մեկը և շինարար, արդյունաշատ, հայրենասեր ու լուսամիտ հայրապետ: Հակոբ Դ Ջուղայեցու հանձնարարությամբ Ոսկան վարդապետ Երևանցին 1666 թվին Ամստերդամում տպագրեց Աստվածաշունչը: Նրա օրոք, 1678 թվին, ս. Էջմիածնում գումարվում է գաղտնի ժողով՝ ազգային-ազատագրական հարցով:

Հակոբ կաթողիկոսը Էջմիածնի ժողովից հետո գլխավորում է ազգային-ազատագրական շարժման պատվիրակությանը և անմիջապես մեկնում Կոստանդնուպոլիս, բայց, դժբախտաբար, վախճանվում է ապտեղ 1680 թվի օգոստոսի 1-ին, կիրակի օրը: Այդ մասին Զաքարիա սարկավագը գրում է. «Եւ ապա ելեալ գնաց ի ծովեզերն. և նստեալ ի նաւ, և գնաց ի Բիւզանդիա... Եւ տկարացաւ, և վախճանեալ հանգեաւ ի Տէր, յայնմ ամի ի թուին ՌԾԻԹ յօգոստոսի Բ, և տարան զնա ի քաղաքն Ղալաթայ՝ ի հասարակաց գերեզմանն՝ և տեղին՝ որ կոչի Բէկօղլի, և Գ, տակ Աթոռ հաստատեցին ի վերայ, և առնէ սքանչելիս ի բժշկութիւնս. զոր մի ի բազմացն պատմեցից, զոր տեսի աչօք իմովք: Քանզի յաւուր՝ յորում հանցո:ցեալ են զնա ի տապանի. Բ շաբաթի պատահեալ, վասնորոյ յամենայն Բ շաբաթի առնեն պատարագ քահանայքն Ղալաթու, և գնան ի գերեզմանն հայրապետին, զի ժողովուրդք գան յուխտ, և օրհնեն զգերեզմանն, և տան խաչհամբոյր»[220]:

«Յակոբ կաթողիկոսն... հասեալ ի Կոստանդնուպօլիս քաղաքն, և անդ փոխի առ Քրիստոս ի ՌԾԻԹ թուին: Որ և թաղեցաւ ի գերեզմանատանն Բէկ-օղլի կոչեցեալ»[221]:

Շահխաթունյան սրբազանը, խոսելով Հա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ա-ից և Գ—Է-ից:

[220] **Զաքարեայ սարկաւագի** «Պատմագրութիւն», ճ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 90:

[221] **«Ջամբռ»**, էջ 25:

կոր Դ. Զուղայեցու մահվան, թաղման և տապանագրության մասին, գրում է. «Հիւանդանալ և փոխի յաստեացս անդ ի Կոստանդնուպոլիս յերկրորդ աւուր ամսեանն օգոստոսի, ի հասակի ութսուն և երկու ամաց՝ կացեալ ի հայրապետութեան ամս ԻԵ, և ամիսս չորս. զորոյ զմարմինն պատեալ ամփոփեն ի հասարակաց գերեզմանատան հայոց ի Պէյօղլու՝ արկանելով ի վերա զվէմ շիրիմ՝ որ ունի արձանագիր ըստ այսմ.

Հանգստարանս այս հրաշափառ եւ պատուելի,
Վայելչադիր յօրինուածովք ի հանդիսի.
Ունի աւանդ զմաքուր մարմին Բազմերջանկի,
Տեառն Յակովբայ հայոց ընտրեալ Հայրապետի.
Որ փոխանորդ Հօր մեր սրբոյ Լուսաւորչի,
Կաթողիկոս օծեալ նորին օրհնեալ գահի:
Եւ արդ տապանս բուժիչ ախտից մարմնական,
Յուսով ի սա դիմեցելոց հրաշք իւր յայտնի.
Զկազմող սորին յիշել ի տէր զարմիւք հայցի,
Զ.Զաքարիայն՝ որ Խալիֆայ հիւսնականի,
Հազար հարիւր քսան եւ ինն հայոց թուի
Երկրորդ աւուր ամսոյն Հռոմայ օգոստոսի[222]:

Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը 1955 թվին Լոնդոնում վերահրատարակեց Օրմանյան սրբազանի «Հայոց եկեղեցին» աշխատությունը անգլերենով: Խոսելով Հակոբ Դ. կաթողիկոսի դամբարանի մասին, նա 65-րդ էջում տալիս է հետևյալ ուշագրավ տողատակ ծանոթությունը. «1932 թվին, երբ թուրքերը գրավեցին Բերայի հայոց գերեզմանատունը, նրա նշխարները փոխադրվեցին Բերայի ս. Երրորդություն եկեղեցին, որտեղ նրա շիրիմը հարգանքի առարկա է հայերի, ինչպես նաև ոչ քրիստոնյաների համար»:

104. **Եղիազար Ա. Այնթապցի** (1682—1691).—Եղիազար Ա. Այնթապցին եղել է Արղընիի առաջնորդ 1647 թվին, ապա պատրիարք Երուսաղեմի՝ 1649 թվին: Մեծ գործ է կատարել Երուսաղեմի հայոց վանքը 1659 թվի հունական բռնագրավումից ազատելու հարցում: Հայրապետական գահին բազմելուց հետո Մայր Աթոռում կատարել է դրական և շինարար գործունեություն՝ իր անձնական ծախսով և ձեռներեցության շնորհիվ:

Ե՞րբ է վախճանվել Եղիազար Ա. Այնթապցին և ո՞րտեղ է թաղվել նա: Մինչև 1961 թվականը ս. Գայանեի վանքի գավթի հյուսիսային մասի Հակոբ Ե. Շամախեցու (1759—1763) և Ղազար Ա. Զահկեցի (1737—1751) հանգուցյալ հայրապետների շիրիմների միջև կար սր անհայտ գերեզման: Այդ առանց տապանագրության շիրիմը պատկանում է Եղիազար Ա. Այնթապցուն[223]: Սեր այն ժամանակվա գրածը հաստատելով ասենք, թե Եղիազար Ա. Այնթապցի կաթողիկոսը, ըստ իր ժամանակակից Զաքարիա սարկավագի վկայության, թաղված է «ի նոյն տեղին, հիւսիսոյ կողմն շինեաց զգերեզմանն իւր»[224]:

Այդ մասին վկայում է նաև Շահխաթունյանցը. «Ի միջոցի երկուց այսոցիկ կաթողիկոսաց (Հակոբ Շամախեցու և Ղազար Զահկեցու—Վ. Ե. Տ.) ամփոփեալ է մարմին Եղիազարու կաթողիկոսի Հռոմկլայեցւոյ ի ՌՃԼԹ թուականի հայոց՝ յամի տեառն 1690, յ8-րդ օգոստոսի»[225]:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը ևս վկայում է, որ Եղիազար Այնթապցին «այսպէս խրոխտ կենօք մնացեալ՝ փոխի ի Քրիստոս ի ՌՃԼԹ թուոջն մերում, և դնի ի յաջ կողմն գաւթի սուրբ Գայիանէին՝ զոր ինքն էր շինեալ»[226]:

Հ. Ղ. Ալիշանը ևս ընդունում է Եղիազար կաթողիկոսի ս. Գայանեի հյուսիսակողմում թաղված լինելը. «Քանզի շատք ի յետին կաթողիկոսաց թաղեալ են ի գաւթի անդ եկեղեցւոյն, ուր շինողն Եղիազար պատրաստեալ էր զգերեզմանն իւր ի հիւսիսոյ կողմանէ, այլ տապանաքար նորին բարձեալ է, իսկ յայտնիքն արձանագրօք են»[227]:

Օրմանյան սրբազանը ևս Եղիազար կաթողիկոսի գերեզմանի տեղը դնում է ս. Գայանեի վանքի հյուսիսային կողմը. «Եղիազար թաղված է ս. Գայանեի վանքի յուրաշեն գավթին աջակողմը»[228]:

Այդ ձևով ընդունում են նաև Հուսիկ վարդապետ Մովսեսյանը[229], ինչպես նաև Հ. Ս. Եփրիկյանը[230] և այլ բանասերներ:

[222] **Շահխաթունյանց**, «Ստորագրութիւն», հ. Ա, էջ 221—222:

[223] **Վահան վարդապետ Տերյան**, «Պատմական համառոտ ակնարկ...», «Էջմիածին» ամսագիր, 1961, № 9, էջ 40—41:

[224] **Զաքարիա սարկավագ**, էջ 106:

[225] **Շահխաթունյանց**, հ. Ա, էջ 278:

[226] **«Զամբռ»**, էջ 26:

[227] **Հ. Ղ. Ալիշան**, «Այրարատ», Վենետիկ, 1890, էջ 243:

[228] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, «Ազգապատում», հ. Բ, էջ 2260:

[229] **Հուսիկ վրդ. Մովսեսյան**, «Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցւոյ պատմութիւն», 1884, էջ 278:

[230] **Հ. Ս. Եփրիկյան**, «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», էջ 427:

Այս բոլորից հետո Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը հավերժացնելու համար հիշատակը իր երջանկահիշատակ նախորդների, ի շարս այլ կաթողիկոսների շիրիմների, որոնք չունեին տապանաքար, 1961 թվին մարմարյա քարով և հետևյալ արձանագրությամբ պատվեց Եղիազար Այնթապցու հիշատակը.

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Եղիազար Ա Այնթապցի
(1682—1691):

105. **Նահապետ Ա Եղեսացի** (1691—1705).—Միաբան ս. Երուսաղեմի[231]: Եղել է Եղիազարի ձեռնատուն աշակերտը և գործակիցը: Բարեկարգում է ս. Էջմիածնի տնտեսությունը, կալվածներ գնում և Մայր Աթոռում ծավալում է շինարարական գործունեություն, ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին[232]: Եղեսացին է կառուցել ս. Շողակաթի եկեղեցին և թաղվել է տաճարի աջակողմյան գավթում:

1959 թվականին Վեհափառ Հայրապետի կողմից ս. Շողակաթ վանքում կատարվեցին վերանորոգչական-շինարարական աշխատանքներ և այդ առիթով վանքի գավթում երևան եկան երկու գերեզմաններ: Մեկը՝ Նահապետ Ա Եղեսացի և երկրորդը՝ Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսների[233]:

Սիմեոն Երևանցին Նահապետ Ա Եղեսացու գերեզմանատեղի մասին գրում է. «Վահանի Նահապետն և թաղի յաջակողմն գաթին սուրբ Շողակաթի»[234]: Նույնն են հաստատում նաև Շահխաթունյանցը[235], Հ. Ղ. Ալիշանը[236], ինչպես նաև Օրմանյանը[237]:

Նահապետ կաթողիկոսի շիրիմը ժամանակին ունեցել է հետևյալ տապանագրությունը.

Այս է տապան դամբարանի
Տեառն Հայոց Հայրապետի,
Սա Նահապետ անուամբ կոչի,
Որ է տեղեաւ ուռհայեցի:
Ի թուին ՌՃԴ (յամի 1705)[238]

Նահապետ կաթողիկոսի վերոհիշյալ գերեզմանաքարը անհայտացել էր: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ դրվեց նոր մարմարյա տապանաքար, հետևյալ գրով.

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Նահապետ Ա Եղեսացի
(1691—1705):

106. **Աղեքսանդր Ա Ջուղայեցի** (1706—1714.—Եղել է տեղյակ «Ատուռաձաշոցնց գրոց, հանուարեղ և շինարար»[239]: Առաջնորդ Նոր Ջուղայի: Ինչպես վկայում է Երևանցին[240], սա էլ իր նախորդների պես կատարել է շինարարական աշխատանքներ. «Կաթողիկոսութիւն սորա եղեւ կարի օգտակար, ոչ միայն սակս Ազգին, այլ և վասն սրբոյ Էջմիածնի»[241]:

Վախճանվում է 1714 թվի նոյեմբերի 22-ին «եւ թաղի ի սուրբ աթոռ, ի ներքոյ մեծի զանգակատանն, յաջակողմն դրան սրբոյ տաճարիս»[242], որի գերեզմանի վրայի տապանագրությունը հետևյալն է (մարմարից, հյուսիսակողմն). **«Հազար հարիւր ԿԳ թուին վախճանեցաւ տէր Աղեքսանդր կաթողիկոս Ամ(ենայն) Հայոց եւ եղաւ յայսմ դամբարանի, միով Տէր ողորմեաւ յիշել՝ գնեզ աղաչէ ով հանդիպօղք բարի»:** Հիշատակաց շիրիմը և տապանագրությունը իր տեղում մնում են անաղարտ:

107. **Ատվածատուր Ա Համատանցի** (1715—1725).—Նախապես միաբան Նոր Ջուղայի ս. Ամենափրկչյան վանքի: Սրա մասին վկայություններ կան, որ հեզաբարո, շնորհաշատ և գեղեցկատես մի ջերմեռանդն անձնավորություն էր: Կատարել է շինարարական աշխատանքներ:

Թաղվել է ս. Հռիփսիմեի վանքում, «Եւ ապա ի ՌՃՀԴ թուոջ մերում փոխի առ տէր, և թաղի ի գաւիթն սրբոյն Հռիփսիմէի՝ ի յաջ կողմն կոյս»[243]:

1961 թվին «Էջմիածին» ամսագրում[244] մենք անդրադարձանք Ատվածատուր Ա Համատանցի կաթողիկոսի գերեզմանատե-

---

[231] **Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունի.** «Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի», Երուսաղեմ, 1929, էջ 391:

[232] **Սիմեոն կաթ. Երևանցի.** «Ջամբռ», էջ 26:

[233] «Էջմիածին» ամսագիր, 1961, № Գ, էջ 35:

[234] **«Ջամբռ»,** էջ 27:

[235] **Շահխաթունյանց,** հ. Ա, էջ 283—284:

[236] **Հ. Ղ. Ալիշան.** «Ակրարատ», էջ 236:

[237] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան.** «Ազգապատում», հ. Բ, էջ 2663 և 2731:

[238] **Շահխաթունյանց,** հ. Ա, էջ 285: **Ալիշան.** «Ակրարատ», էջ 236:

[239] **«Ջամբռ»,** էջ 27:

[240] **«Ջամբռ»,** էջ 27:

[241] **Յարութիւն Թ. Տէր-Յովհաննէսեանց.** «Պատմութիւն Նոր Ջուղայու», Նոր Ջուղա, 1881, հ. Բ, էջ 35:

[242] **«Ջամբռ»,** էջ 27:

[243] **«Ջամբռ»,** էջ 28:

[244] «Էջմիածին» ամսագիր, 1961, № Բ, էջ 36—37:

դի սասին: Նա թաղված է ս. Հռիփսիմեի վանքի գավթի աջակողմում (հյուսիսային), որի տապանաքարը և տապանագրությունը ոչ Շահխաթունյանցի և ոչ էլ հետագա հետազոտողների մոտ արձանագրված չեն: 1959 թվի շինարարական աշխատանքներից հետո Վազգեն Ա Հայրապետի կողմից դրվեց սպիտակ մարմարից տապանաքար հետևյալ արձանագրությամբ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Աստվածատուր Ա Համատանցի (1715—1725)

108. **Կարապետ Ա Ուլնեցի** (1726—1729).—Կարապետ կաթողիկոսն էլ իր հիշատակը թողել է Մայր տաճարում. «Սա ետ նկարել զպատկերս երկոտասան Առաքելոցն ի ճակատ Աւագ խորանին և ետ ծաղկել ոսկեզօծ և գեղեցիկ գունօք»[245]:

Նա վախճանվել է ս. Էջմիածնում և թաղվել ս. Հռիփսիմեի վանքի գավթի հարավային մասում. «Ապա ի ՌՃՀԸ թուին փոխի Կարապետ կաթողիկոսն առ տէր, և դնի ի գաւիթ սրբոյն Հռիփսիմեայ ի ձախակողմն կոյս»[246]: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1964 թվին Կարապետ Բ Ուլնեցու գերեզմանի վրա դրվեց շիրմաքար՝ սպիտակ մարմարից, հետևյալ տապանագրությամբ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Կարապետ Բ (1726—1729)

109. **Աբրահամ Բ Խոշաբեցի** (1730—1734).—Աբրահամ Բ Խոշաբեցին կամ Մշեցին աշակերտն ու եղբորորդին էր Երուսաղեմի Գրիգոր Շղթայակիր պատրիարքի: Ս. Էջմիածնում կառուցում է երկու խորան, փռատուն: Ըստ Սիմեոն Երևանցու վկայության եղել է առաքինի և ճգնազգաց, հեզ, աղոթասեր և տոնակատար[247]:

Աբրահամ Բ կաթողիկոսի շիրիմը գտնվում է ս. Գայանեի վանքի հարավային կողմում[248]: «Ապա ի ՌՃԶԳ թուին վախճանի, և դնի ի գաւիթ սրբոյն Գայիանեայ ի ձախակողմն կոյս»[249]: Շահխաթունյան սրբազանը վկայում է նույնը[250]:

Որ իրոք Աբրահամ Բ Մշեցին թաղվել է վերոգրյալ տեղում, վկայում են նաև Ալիշանը[251], Էփրիկյանը[252] և Օրմանյանը[253]: Այժմ Աբրահամ Մշեցու շիրիմը ունի սպիտակ մարմարիոնով տապանաքար հետևյալ տապանագրությամբ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Աբրահամ Բ Խոշաբեցի (1730—1734)

110. **Աբրահամ Գ Կրետացի** (1734—1737).—Սիմեոն Երևանցին սրա մասին գովեստով է խոսում: Աբրահամ Գ Կրետացին թողել է մի գրական կոթող՝ «Պատմութիւն անձիցն իւրոց և Նադիր շահին պարսից» (Հրատ. Վաղարշապատ 1870 թվին): Այս աշխատությունը կարևոր աղբյուր է կովկասագիտության և մասնավորապես Նադիր շահի գործունեության վերաբերյալ[254]:

«Ապա ի ՌՃԶԵ թուին հանգեաւ ի տէր և սուգ մեծ էած ի վերայ բոլոր երկրիս արեւելեան, և թաղեցաւ ի Շողակաթի, ի Ձախակողմն գաւթին»[255]:

«Կացեալ ի հայրապետութեանն ամս Բ և ամիսս Ե 1737 վախճանեցաւ ի 18 ապրիլի, որոյ զմարմինն ամփոփեցին ի գաւիթն տաճարին Շողակաթ անուանելոյ ի ձախակողման նորա»[256]:

Վեհափառ Հայրապետը նրա համար էլ շիրմաքար շինել տվեց սպիտակ մարմարից հետևյալ տապանագրությամբ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ. Աբրահամ Գ Կրետացի (1734—1737)

111. **Ղազար Ա Ջահկեցի** (1737—1751).—Համարվում է հմուտ աստվածաբան:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին Ջահկեցուն բնորոշում է որպես գիտնական և ճարտարալեզու, հանճարեղ և փառապերճ և շինարար. «...Ի ՌՄ թուոջն վախճանի և դնի ի սուրբ Գայիանէի ի յաջակողմն գաւթին»[257]:

Դամբանաքարին կա հետևյալ տապանագրությունը.

---

[245] «Ջամբռ», էջ 28:
[246] «Ջամբռ», էջ 29:
[247] «Ջամբռ», էջ 30:
[248] «Էջմիածին» ամսագիր, 1961, № Գ, էջ 42:
[249] «Ջամբռ», էջ 30:
[250] Շահխաթունյանց, հ. Ա, էջ 279:
[251] Ալիշան, «Այրարատ», էջ 243:
[252] Էփրիկյան, «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», էջ 428:
[253] «Ազգապատում», հ. Բ, էջ 2882:
[254] М. Р. Арунцова, К. З. Ашрафян. «Государство Надиршаха Афшара», Москва, 1958 г, стр. 21:
[255] «Ջամբռ», էջ 31:
[256] Շահխաթունյանց, հ. Ա, էջ 227:
[257] «Ջամբռ», էջ 31:

Զքնաղ տապանս է հրաշալի,
Առն մեծի գիտնականի.
Տեառն Ղազարու Հայրապետի.
Հանուրց հայոց պատրիարքի,
Որ ի մարմնի բաղցրաւարի.
Բարւոք մահուամբ վերափոխի,
Դիմեալ առ Տէր ի նա հանգչի,
Որում բաղձան հոգիք բարի.
Ի մին հազար երկ հարիւրի,
Մերս Հայկազնեան թուականի.
Ի ծաղկազարդ յօր վերջ մարտի,
Աստ ամփոփեալ վերապատուի:

Շիրիմը և տապանագրությունը ցայսօր անաղարտ պահպանվում են նույն տեղում:

112. **Մինաս Ա. Ակնեցի** (1751—1753).— Ընտրվում է 1751 թվի սեպտեմբերի 15-ին և վախճանվում 1753 թվի մայիսի 12-ին: «Եւ կեցեալ յամս երկուս մեռանի ի թուոջն ՌՄԲ, և թաղի ի վանքն սուրբ Գայիանեայ ի ձախակողմն գաւթին»[258]: «Զորոյ զմարմին ամփոփեն ի գաւթի տաճարին սրբուհւոյն Գայիանեայ ի ձախակողման նորա»[259]:

Ակնեցու շիրիմն էլ զարդարվեց ապիտակ մարմարիոնից գերեզմանաքարով և հետևյալ տապանագրությամբ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Տ. Տ. Մինաս Ա. Ակնեցի
(1751—1753)

113. **Աղեքսանդր Բ Բյուզանդացի** (1753—1755).—«Եւ ունի զբարերարութիւնս բազումս ի սուրբ աթոռս ի մանկութենէ... որ և կեցեալ ամս Բ, մեռանի ի թուին ՌՄԴ և թաղի ի ներքոյ զանգակատան մեծի, ի ձախակողմն դրան մեծի տաճարիս»[260]: Կարճատև կաթողիկոսությունից հետո վախճանվում է և թաղվում ս. Էջմիածնի զանգակատան տակ իր անվանակից Աղեքսանդր Ա Ջուղայեցուն հանդիպակաց (հարավային կողմում), հետևյալ տապանագրությամբ.

Քրիստոս Որդի Հօր Միածին,
Դատող բնութեանս մարդկային.
Յորժամ փառօք գայցես կրկին,
Յիշեա ողորմութեամբ քոյին.
Զհայրապետն մեր զհոգելին,
Զ Տէր Աղեքսանդր Բիւզանդացին,
Արժանացո՛ սրբոց գրնդին,
Յարքայութիւնդ մո՛յծ երկնային,
Որ արդ հանգեաւ ըստ քում բանին,
Աստէն եդաւ մարմին նորին,
Հազար եւ երկերիւր յամին,
Չորրորդ եւս ընդ սրմա բարդին,
Նոյեմբերի մետասանին:

Օրմանյան սրբազանը երկու համանուն կաթողիկոսների գերեզմանների մասին որպես ականատես գրում է հետևյալը. «Անցուցակի հիշեմ, թե 1888 մայիսին, երբոր Էջմիածնի ներքին բակին հատակը ցածցնելու պեղումներ կկատարվեին, Աղեքսանդրներու գերեզմաններն ալ ավելի խորը իջեցնելու պետք տեսնվեցավ, և Մակար կաթողիկոսի հրամանով, և Ներսես Խուդավերդյան ու Մամբրե Սանասարյան եպիսկոպոսներու հետ՝ ես ալ անձամբ աշխատեցա անոնց ոսկորներուն օրինավոր գետնման և շիրիմներուն կանոնավորապես փակվելուն»[261]: Հիշատակված գերեզմանը և տապանագրությունը ցայսօր մնում են անաղարտ նույն տեղում:

114. **Հակոբ Ե Շամախեցի** (1759—1763). —«Խելօք և հանճարեղ յամենայն գործս, և գիտուն և շնորհաշատ: Ի մանկութենէ ի սուրբ Աթոռս գոլով՝ ո՛չ է կեցեալ անգործ, զի ասէր դաս միաբանից զի՛նչ և խնդրէին»:

«Այսպէս բարւոք կառավարմամբ, ի Տէր փոխի ի ՌՄԺԲ թուոջն, և դնի ի յաջակողմն գաւթի սրբոյն Գայիանեայ»[262]:

«Կացեալ ի հայրապետութեան ամս Գ և ամիսս եօթն, մահանեցաւ 1763-ի 21-րդ աւուր մարտի յիններորդ ժամու գիշերին ուրբաթու մեծի զատկին, և ի յաջորդ աւուրն թաղեցին զնորուն մարմին ի գաւթի եկեղեցւոյ սրբուհւոյն Գայիանեայ, ի յաջակողմանն»[263]:

Շամախեցու գերեզմանաքարը իր դրված օրից ցայժմ մնում է անաղարտ հետևյալ տապանագրությամբ.

Քրիստոս Որդի Հօր Միածին,
Դատող ազգի մեր մարդկային,
Յորժամ գայցես փառօք կրկին,
Առ ի դատել զամենեսին.
Ողորմութեամբ յայնժամ քոյին,
Եւ գթութեամբդ սստուածային.
Յիշեա՛ զհոգի քո ծառային,
Որ է սրբոյ արեանդ քո գին.
Տեառն Յակոբայ Հայրապետին,
Շամախեցի՝ զոր կոչէին.
Յարքայութիւնդ մո՛յծ երկնային,
Դասեա՛ ընդ սուրբս ամենեսին:
Եռեւ թուականս ՌՄԺԲ, եւ
Յամսեանն մարտի 21:

(Շարունակելի)

[258] «Ջամբռ», էջ 32:
[259] Շահխաթունյանց, ճ. Ա, էջ 229:
[260] «Ջամբռ», էջ 32:
[261] Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Ազգապատում», ճ. Բ, էջ 2985:
[262] «Ջամբռ», էջ 32:
[263] Շահխաթունյանց, ճ. Ա, էջ 231:



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բոլոր քրիստոնյա ազգերի հոգևոր երգերի հիմնական, հարուստ ու հին աղբյուրը համարվում է Հին Կտակարանը, առանձնապես Սաղմոսն ու մարգարեական օրհնությունները: Սկզբնական շրջաններում, երբ դեռ քրիստոնեությունը արևելքում նոր էր տարածվում և հիմնավորվում, տակավին չկային ազգային ինքնուրույն հոգևոր երգեր և ժամասացության մեջ տիրապետողը սաղմոսերգությունն ու մարգարեական օրհներգություններն էին: Սակայն, աստիճանաբար, ամեն մի ժողովուրդ այս կամ այն չափով ունեցավ նաև իր ազգային հոգևոր երգը, ազգային երանգով, հետևաբար և ազգային աղբյուրներով: Հայ եկեղեցում գործածվող հոգևոր երգերը ունեցել են մի քանի հիմնական աղբյուր: Դրանցից գլխավորներն են՝ Հին Կտակարանը, Նոր Կտակարանը (գլխավորապես 4 ավետարանները), ազգային մատենագրությունն ու պատմությունը, եկեղեցական զանազան գրքերը և այլն: Իրենց ոգին, թեմաներն ու նյութը Հին Կտակարանից են վերցրել մեր շարականների մի քանի տեսակները, որոնց անուններն էլ գալիս են ս. Գրքից, որոնք դարձել են այդ կարգի շարականների բնաբան, կամ վերնագիր: Վերջիններս հիմա թեև միայն ձևական բնույթ են կրում, բայց միաժամանակ ցույց են տալիս, որ հոգևոր երգը երգվել է բացառապես ս. Գրքի բառերով: Վերցնենք **«Օրհնութիւն»** կոչված շարականների տեսակը: Ութ կանոն շարականների մեջ, ըստ օրվա ձայնի և տոնի, գլխավոր դերը խաղում է այս օրհնությունը: Սա մնացած յոթ տեսակին գաղափար և ուղղություն ցույց տվող շարականն է, որին իրենց ձայնով և ոգով հետևում են մնացածները: Թեև այս առաջատար, որոշող շարականը կոչվում է «Օրհնութիւն», բայց հավուր պատշաճի իմաստ ունի. օրինակ՝ «Օրհնութիւն» են կոչվում Ծննդյան «Խորհուրդ մեծ և սքանչելիս», Վարդանանց, «Նորահրաշ պսակաւորը», Զատկի «Այսօր յարեաւ ի մեռելոցը», Համբարձման տոնի «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» և այլ բազմաթիվ շարականներ: Ամեն մի «Օրհնութիւն» ունի իր ուրույն բովանդակությունը: Այս շարականը «Օրհնութիւն» է կոչվում, որովհետև այդ անունը, կամ բնաբանը վերցված է Հին Կտակարանի մարգարեական օրհնություններից, որոնք սկսվում են Մովսես մարգարեի «Օրհնեսցուք զտէր, զի փառօք է փառաւորեալ» խոսքով. դրա համար էլ սրանք առաջին բառի անունով կոչվում են «Օրհնութիւն»:

Հարցերի բնաբանը վերցված է Բաբելոնի Երեք Մանկանց օրհնության «Օրհնեալ ես, Տէր Աստուած, հարցն մերոց» խոսքից, որը

գտնվում է Դանիելի մարգարեության մեջ («Յամին ութուտասաներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի» և այլն):

Ողորմեաների թեմաները վերցված են Սաղմոսից: Այդպես են կոչվում նրա համար, որովհետև այս երգերի նյութը հարմարեցրել են Դավթի Ժ (50) սաղմոսին, որն սկսվում է «Ողորմեա ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում» խոսքով:

Տէր յերկնից կոչված շարականները հարմարեցված են Դավթի ՃԽԲ (142) սաղմոսին, որն սկսվում է «Օրհնեցէք, զՏէր յերկնից» բառերով և դրա համար էլ կոչվում է «Տէր յերկնից»:

Համբարձին երեկոներն երգվում է ըստ Դավթի ՃԻ (120) սաղմոսի, որն սկսվում է այսպես՝ «Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»:

Մանկունք շարականների թեմաները հարմարեցված են ՃԺԲ (112) Սաղմոսի հիշյալ սկսվածքին «Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն»:

Հետագայում այս շարականների տեսակները ազգայնացվել, նույնիսկ ուրիշ նյութի մասին են երգվել, բայց Հին Կտակարանից մերցված բնաբանները մինչև օրս էլ պահել են իրենց անունները:

Մեր ապաշխարության կարգի շարականների գրեթե բոլորի աղբյուրը նույնպես սաղմոսներն են:

Բավականաչափ շատ են և այն շարականները, որոնց աղբյուրը Նոր Կտակարանն է, առանձնապես Ավետարանները:

Տերունական տոներից Ծննդյան ութ օրեռի բոլոր կանոնների, Տյառնընդառաջի, Վաղարշի Հարության կանոնի շարականներ՝, Ծաղկազարդի ինն շարականների, Ամաչ երկուշաբթվա, երեքշաբթվա, չորեքշաբթվա, հինգշաբթվա, ուրբաթ և շաբաթ օրերի 48 շարականների, Հարության, Համբարձման, Հոգեգալստյան, Վարդավառի, Վերափոխման և այլ հարյուրավոր շարականների թեմաների աղբյուրը չորս Ավետարաններն են: Ավետարանից են վերցված նաև մի քանի անհատ սրբերի շարականների նյութը, ինչպես Հովհաննես Մկրտչի, Բեթլեհեմի մանկանց, Հովակիմին և Աննային նվիրված շարականները և այլն: Հին և Նոր Կտակարանները աղբյուր են հանդիսացել նաև բազմաթիվ աղոթքների ու բարոզների:

Բացի Հին ու Նոր Կտակարաններից հայկական շարականների համար հիմնական աղբյուր են եղել նաև ազգային մատենագրությունն ու պատմությունը, որի մասին մինչև օրս շարականագիտությունը գրեթե լռել է:

Հովհան Մանդակունին Թարգմանչաց նվիրված «Ցնծացէք այսօր» (պարականոն), «Սրանչելագործ Աստուած» հարցը՝ իր գործատնով, «Անմատելի շնորհօք լցեալ» Տէր յերկնից, «Նմանեալ Մովսէսի» մանկունքը և «Որք զարդարեցին» օրհնությունն շարքը և «Որք զարդարեցին» օրհնությունն շարքը և «Որք զարդարեցին» ... նյութը քաղել է Կորյունի և Եղիշեի գրքերից: Իսկ Հռիփսիմյանց նվիրած «Անսկիզբն Բանն Աստուած» Հարցի նյութը նա քաղել է Ագաթանգեղոսից:

Կոմիտաս կաթողիկոսի (615—628) «Ամենեքեան Նոտիրեալք» սքանչելի շարականի (Օրհնություն) աղբյուրը նույնպես Ագաթանգեղոսն է:

Գրիգոր Լուսավորչին վերաբերող երեք կանոնների (1. «Մոտն ի վիրապն», 2. «Եկն ի վիրապէն» և 3. «Գիտուն նշխարացն»), սուտ քսան մեծ ու փոքր շարականների աղբյուրը դարձյալ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութիւն» գիրքն է:

Մահակ Զորափորեցի կաթողիկոսը (677—703) Վարագա խաչի գյուտը առիթ դարձնելով, ազգային աղբյուրների հիման վրա, գրեց խաչի Գ օրվա «Սրբութիւն սրբոց» շարականը: Աղբյուր ունենալով Ագաթանգեղոսի գիրքը գրեց նաև Ծողակաթի կանոնի «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» օրհնությունը, «Ուրախ լեր այսօր» Հարցը, «Որ հաստատեցեր» Ողորմյան, «Լուսաւորեա Երուսաղէմ» Տեր յերկնից և հանրահայտ «Էջմիածինն ի Հօրէ» Մանկունքը:

Ութերորդ դարում մենք ունենք երկու կին շարականագիր, մեկը Վահան Գողթնացու քույրը՝ Խոսրովիդուխտը, իսկ մյուսը՝ հայտնի երաժշտագետ Ստեփաննոս Սյունեցու քույրը՝ Սահակդուխտը: Վահան Գողթնացու նահատակությանը նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը վերաբերում է այս կանանցից թե՛ մեկին, և թե՛ մյուսին: Բայց այստեղ կարևորն այդ չէ, այլ այն, որ այդ շարականի նյութն էլ քաղված է մեր ազգային աղբյուրներից՝ պատմիչ Ղևոնդից և ուրիշներից[1]: Հովհաննես Սարկավագ վարդապետը և Ներսես Շնորհալին աղբյուր ընտրելով Եղիշեի Վարդանանց պատերազմին նվիրված օրհնությունների բազմաթիվ շարականներ՝ Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակին՝ «Նորահրաշ» Օրհնությունը, «Արիացեալք» Մանկունքը, «Որ յառաջագոյն սահմանեցեր» Օրհնությունը, «Որ անդադար փառաբանիս» Հարցը, «Արեգակն արդարութեան» Ողորմյան, «Երկնային հրաւիրակաց» Տեր

[1] «Զոր գրեաց հայրն Արտաւազդ Երաշխաւորի մանուցն ճշգրտիւ և զամենայն և կարգեալ նշանակեաց տաւնախմբել զիշատակ սրբոյն Վահանայ ի նոյն աւուր կատարման իւրոյ», պետակ. Մատեն., № 934 ձեռագրում:

հերկնիցը, «Անհաղելի Բանդ Աստուած» Մանկունքը, «Պայծառացան այսօր» Ճաշոն, «Երգեմք ձեզ երգն» Համբարձին և այլն:

Հովհաննես Երզնկացին էլ շատ բան վերցրեց Ագաթանգեղոսի գրքից և մեծ ու փոքր մի քանի շարականներ հորինեց ու նվիրեց Գրիգոր Լուսավորչի տոներին: Ներսես Լամբրոնացին օգտագործեց Ագաթանգեղոսի անսպառ աղբյուրը, հյուսեց մի քանի շարականներ և նույնպես նվիրեց Լուսավորչին և նրա տոնին:

Հին և Նոր Կտակարանները և ազգային պատմությունը, մեր շարականների հիմնական աղբյուրներն են:

Ապա որքան շատ են այն շարականները, որոնց համար աղբյուր են հանդիսացել եկեղեցական նշանավոր հայրերի գրքերը, եկեղեցական գրականությունը, մասնավոր գրվածքներ, ազգային ավանդություններ, ուխտավայրեր, սուրբ մասունքներ, հավատի ու հայրենիքի համար նահատակված մարդկանց հերոսապատումներ, բնության երևույթներ և այլն և այլն:

Հայ ազգային-եկեղեցական պատմությունն էլ նյութ է ընձեռել շարականագիրներին: Ոսկյանց քահանայից «Որք արժանաւորեցայք» և Սուքիասյանց՝ «Ստուգութեամբ տեղեկացեալ» շարականները, Սահակ Պարթևին նվիրված «Որ յարմատոց» Հարցը, Ներսես Մեծի «Որ զլոյս անճառ շնորհաց» Օրհնությունը, Սանդուխտ կույսին նվիրված «Քև պարծի» Մանկունքը, «Գէորգայ զօրավարի»՝ «Ով սուրբ Գէորգ» Մանկունքը. Տրդատ թագավորին նվիրված «Որ գերագոյն» Մանկունքը հայ շարականագիրները նույնպես քաղել են հայոց աղբյուրներից:

Բազմաթիվ շարականների աղբյուր է հանդիսացել նաև «Յայսմաւուրքը»: Այդպիսիներից են՝ Անտոն անապատականին վերաբերող «Որ գերազանցեալ գտար» Օրհնությունը, Ատոմյանց «Աղաչեմք զքեզ, Տէր» Մանկունքը, Բարսեղ Կեսարացուն նվիրված «Լուսապայծառ իմաստիւք» Մանկունքը, Գրիգոր Աստվածաբանին նվիրված «Որ լուսով աստուածային» Օրհնությունը, Դավիթ Դվնեցու «Լցեալ աստուածային շնորհիւ» շարականը, Եփրեմ Ասորուն նվիրված «Որ համանման» Օրհնությունը և այլն:

Եկեղեցական պատմությունն ու վարքագրությունը նույնպես եղել են բազմաթիվ շարականների աղբյուր. օրինակ «Երկոտասան առաքելոց»՝ «Երանելի սուրբ առաքեալք» Օրհնությունը, «Եօթանասուն երկու աշակերտաց»՝ «Իմաստութիւն երկնային» Օրհնությունը, «Երկուց բիւրուց» տոնին հատկացված «Այսօր ընդ անմարմնոցն» Մանկունքը, Թեոդոսի թագավորի «Որ զերկնաւոր թագաւորութիւնդ» Օրհնությունը, Թեոդորոսի զորավարի «Որ ընտրեցար ի սկզբանէ» Մանկունքը, Իգնատիոս Հայրապետի «Որ հրաւիրեցեր զլառաջագոյն» Մանկունքը և շատ ուրիշ շարականներ: Շարականներ ու երգեր էլ կան, որոնց համար աղբյուր են հանդիսացել հայ հեթանոսական կրոնը, նրա լուսերգությունն ու բնապաշտությունը:

Շատ-շատ են մարտիրոսաց, նահատակաց կանոններում և այնպիսի շարականներ, որոնց նյութն ու թեմաները շարականագիրները վերցրել են վկայաբանական, վարքագրական, Ճաշոց, Գործք Առաքելոց և այս կարգի գրքերից: Քիչ չեն և այն շարականները, որոնց համար աղբյուր են հանդիսացել «Քարոզգրքերը», «Մաշտոցը», «Հայոց հին վկաները» գրքերը և այլն:

Ազգային աղբյուրների հետ սերտ կապվում են նաև այն մեծ շարականները, որոնք գրված են հայոց այբուբենի կարգով, կամ անվանակապով: Թվում է, թե սրանք միայն ձևական, տեխնիկական երևույթներ են, բայց իսկապես, դա էլ ազգային երանգ է, անհատական, ազգային ստեղծագործություն: Բերենք մի երկու օրինակ: Անվիճելի է Դավթի սաղմոսների ազդեցությունը ս. Մեսրոպ Մաշտոցի ապաշխարական բնույթի շարականների վրա: Սակայն Մեսրոպ Մաշտոցը հիանալիորեն վերամշակել, վերստեղծագործել է սաղմոսների բովանդակությունն ու ոգին և ստացվել է նոր, ինքնուրույն ստեղծագործություն. օրինակ. սաղմոսի ՁԸ (88) գլխի հատվածներից մեկում կարդում ենք հետևյալ տողերը.

Ի գիշերաց կանխէ հոգի իմ,
Առաւօտ առնել առ քեզ Աստուած...
Տէր Աստուած մեր, տուր մեզ զխաղաղութիւն քո,
Զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաս մեզ:
Տէր Աստուած մեր, ստացիր զմեզ, զի բաց ի քէն
Զայլ ոչոք գիտեմք և զանուն քո անուանեմք զօրհնապազ...

Ապա վերցնենք Մ. Մաշտոցի շարականներից հետևյալը և համեմատենք՝

Ընդ առաւօտս կանխեցից յանդիման լինել Քեզ
Թագաւոր իմ և Աստուած իմ:
Ընդ առաւօտս լուիցես ձայնի իմում, Տէր,
Թագաւոր իմ և Աստուած իմ:
Ես զՔեզ աղաչեմ Տէր, նայեա յաղօթս իմ,
Թագաւոր իմ և Աստուած իմ:

(Շարակ., էջ 208)

Ս. Սեսրոպ Մաշտոցը այս շարականի նյութը վերցրել է վերոհիշյալ սաղմոսից, բայց այնքան լավ է մշակել և նորը հորինել, որ մարդ դժվարանում է ասել, թե որն է աղբյուրը:

Ներսես Շնորհալու՝ Վարդանանց նվիրված բոլոր շարականների աղբյուրը Եղիշեն է՝. սակայն դրանք բացարձակ ինքնուրույն ստեղծագործություններ են՝ իրենց աղբյուրով հանդերձ:

Տիեզերական առաջին երեք ժողովների (Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի) դավանաբանական նյութերն էլ աղբյուր են հանդիսացել մեր դավանաբանական բնույթի շարականների համար: Հայրապետաց կանոնի գրեթե բոլոր շարականների մեջ այդ հարցերը գտել են իրենց արձագանքները: Այս թեման առանձնապես ուժեղ է Հայրապետաց կանոնի հետևյալ Մանկունքի մեջ.

Ով հրաշալի նախահարք միշտ յաղթօղ
ի մարտի.
Որք գումարեցայք ի Նիկիայ գումար,
Դասք երջանիկ դիտողացդ եզաբանից,
Որք մաքրեցիք զորումն ապականիչ,
Սահմանեցիք տառս կանոնականս համանգամայն ազանց.
(Շարակ., էջ 719)

Այս ընդհանուր խոսքերից հետո շարականի հեղինակը՝ Ներսես Շնորհալին, մեկ-մեկ թվում է աղանդապետերի անունները և նոսրի խոսք ասում.

...Եւ լուսազարդ բանիւք հերքեալ զհերձուածս,
Նզովեցին զԱրիոս և զաղանդն իւր պիղծ:
...Արմատ անիծից կրկին ընձուղեալ Մակեդոն հայհոյիչ,
Գայլ ապականիչ յարձակեալ խողխողէր... գառանց...
(Շար., էջ 719—720)

Շարականների աղբյուր են հանդիսացել նաև նշանավոր եկեղեցական հայրերի գիտական գրքերը: Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը» աղբյուր է հանդիսացել հայկական շատ շարականների համար: Այս տեսակետից աչքի է ընկնում դարձյալ Ներսէս Շնորհալու («Երգ ի խորհուրդ արարչութեանն») Արարչական մեծ շարականը՝ նվիրված վեցօրյա արարչության: Այնպես, ինչպես Կեսարացին իր նյութը քաղել է Հին Կտակարանից, սքանչելի մշակել՝ տալով իր գործին նաև բնագիտական և տիեզերագիտական բնույթ, այդ ձևով էլ Շնորհալին է մշակել իր նյութը, դարձրել մի սքանչելի չափածո քերթված, ուր վարպետորեն համաձայնեցրել ու շաղկապել է իրար Հին ու Նոր Կտակարաններում եղած կրոնական-աստվածաբանական գաղափարները:

Կան շարականագիրներ, որոնք ավետարանական աղբյուրից վերցնում են միայն մի պատկեր կամ նույնիսկ մի նախադասություն: Այս կարգի շարականները բավական շատ են Քրիստոսի Խաչելության, Թաղման, Համբարձման և Հոգեգալստյան կանոններում: Այդ մեկ պատկերը, նախադասությունը, անգամ մի բառը հեղինակը խորացնում, մշակում և այնտեղ ներդնում է ոչ միայն տվյալ դեպքի հոգևոր իմաստ, այլև միաժամանակ արտահայտում է իր անձնական, ներքին ապրումները:

Ըստ ոմանց մեր հին հեթանոսական հավատը և լուսապաշտությունն էլ աղբյուր են եղել մանավանդ «Արևագալի» շարականների համար: Դա դեռևս հիմնապես ապացուցված չէ: Ներսես Շնորհալու «Արևագալի» երգերի մեջ Քրիստոսը պատկերվում է որպես ստեղծագործող, արարչագործ լույս.

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս,
Բնակեալդ ի լոյս անմատոյց...
Ի ծագել լուսոյ առաւօտուս,
Ծագեա ի հոգիս մեր, զլոյս քո իմանալի.
Լոյս ի լուսոյ ծագումն արեգակն արդար...
Լոյս ի հօրէ բղխումն՝ աղբիւր բարութեան...
Լոյս երրեակ և մի անբաժանելի սուրբ Երրորդութիւն...[3]:

Ներսես Շնորհալին ընդհանրապես և շատ հանախ երգել է լույսը, առավոտը, ինչպես. «Առաւօտ լուսոյ» սքանչելի երգը, «Զարթիր, փառք իմ» երգը: Այս երգը գրված է ոչ միայն ժողովրդական ոճով ու բանով, այլև միաժամանակ լուսերգություն է.

Զարթիք ընդ զուարթունս,
Մանկունք վերինն սիօնի, ալէլուիա:
Զարթիք որդիք լուսոյ
Ի յօրհնութիւն Հօրն լուսոյ, ալէլուիա[4]:

Թարգմանություններն ու պարականոնները էլ եղել են մեր շարականների աղբյուր: Հաղբատի գիտնական Վարդան վարդապետի խորհրդով Ներսես Շնորհալին ասորական ձեռագրերի մեջ գտավ ս. Սարգսի վկայաբանությունը, թարգմանեց հայերեն և այդ

[2] Շնորհալին իր «Նորահրաշ պսակաւորի» մեջ ունի նույնիսկ թվական տվյալներ, որոնք վերցրել է Եղիշեի գրքից:

[3] «Ժամագիրք Ատենի», ի ս. Էջմիածին, 1862, էջ 76:

[4] «Ժամագիրք Ատենի», էջ 5:

թարգմանվածի ատաղձի վրա երգահյուսեց ս. Սարգսին նվիրված «Ամենասուրբ երրորդութեան» գեղեցիկ շարականը:

Ս. Բարսեղ Կեսարացուն նվիրված է «Լուսապայծառ իմաստիւք», Իգնատիոս Հայրապետին՝ «Որ հրաւիրեցեր զյառաջագոյն», Կյուրեղ Երուսաղեմացուն՝ «Մանկունք նոր», Գրիգոր Աստվածաբանին՝ «Որ լուսով Աստուածային», Եփրեմ Ասորուն՝ «Որ համանման» շարականները և այլն: Ժողովուրդն իր ավանդությունները, զրույցներն ու պատկերացումներն ունի ահեղ դատաստանի, դժոխքի ու դրախտի մասին: Այդ պատկերացումները նույնպես աղբյուր են հանդիսացել շարականագիրների համար, որտեղ ահեղ կերպով ներկայացվել է դժոխքը, սարսափելի կերպով՝ վերջին դատաստանը, և պայծառ գույներով՝ դրախտը: Վերցնենք մեկական օրինակ. Վեջին դատաստանը.

Սարսափին տարերք երկրի,
Յորժամ փառոք գաս հայրենի
Արեգական լոյս խաւարի,
Լուսին աստեղքն նըլաղին:
(Շար., էջ 926)

Յորժամ հնչիւն փողոյն լինի,
Եւ ղևտական գիրքն յայտնի,
Ճառագայթն սրբոյ խաչին
Յարևելից փառոք ծագի:
(Շար., էջ 930—931)

Սոսկալի է օր վախճանին,
Եւ ահեղ օր դատաստանին,
Յայնմ աւուր ահեղ ատենին,
Զգինս արեան քո մի անտես առնէր
(Շար., 935)

Դժոխքը—Յուցանին գաղտնիք մարդկան,
Իւրաքանչիւր որ գործեցան,
Բարեաց գործողքն պսակին
Չարեացն ի հուր անշեջ մատնին...
(Շար., 928)

Դրախտը—Ի վերինն Երուսաղէմ,
Ի բնակարանս հրեշտակաց
Ուր Ենովք և Եղիաս,
Կան ծերացեալ աղաւնակերպ,
Ի դրախտին եդեմական,
Պայծառացեալ արժանապէս...
(Շար., 929—930)

Վերևում բերված փաստերը հաստատում են, որ մեր շարականների աղբյուրները եղել են ոչ միայն ս. Գիրքն ու Սվետարանը, այլև ազգային մատենագրությունը, պատմական դեպքերը, հարևան ժողովուրդների հոգևոր երգերը, ուրիշ քրիստոնյա ազգերի հոգևոր և աշխարհիկ նշանավոր գործիչների կյանքն ու գործերը, պարականոնները, ձեռագրերը, թարգմանությունները, ավանդությունները և այլն:



Հ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ ԳՅՈՒՂԻ Ս. ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԱՆՎԱՆ ՎԱՆՔԸ, ՆՐԱ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՍ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Ներքին Թալին գյուղը գտնվում է այժմյան Թալինի շրջանում: Այն բոլորովին ուշ ժամանակի բնակավայր է: Տեղավորված է Թալինից դեպի Հոկտեմբերյան քաղաքը և Երևան—Թբիլիսի երկաթուղու Ղարաբուռուն կայարանը տանող ասֆալտապատ խճուղու երկու կողմերում, ընդարձակ սարահարթի հյուսիսային մասի մի փոքր հատվածում, այնտեղ, ուր մի ժամանակ տեղադրված էր պատմական Հայաստանի Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի երբեմնի նշանավոր բնակավայրերից մեկը՝ Քաղենի գյուղը:

Քաղենի գյուղը, ինչպես այդ ցույց են տալիս ճնագիտական ուսումնասիրությունները, Հայաստանի հնագույն և խոշոր բնակավայրերից է եղել, որի ավերակների մնացորդները ընդգրկում են շուրջ 10—12 քառակուսի կիլոմետր տարածություն: Չնայած պատմական աղբյուրներում այն հիշատակվում է Ը դարից, սակայն նրա սահմաններում պահպանված նյութական մշակույթի բազմաթիվ ու բազմապիսի հուշարձանները վկայում են, որ նա գոյություն է ունեցել Ը դարից դեռ շատ դարեր առաջ:

Պատմական աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են պարունակում Քաղենիի մասին: Եղած տեղեկություններից պարզվում է, որ արաբական և սելջուկյան արշավանքների ժամանակ, ի թիվս մի շարք այլ բնակավայրերի, Քաղենին նույնպես բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների ավերածություններին, կոտորածին, թալանին ու գերեվարությանը: Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ տեղեկությունները՝ ժամանակագրական կարգով:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի պատմիչը, խոսելով Աղձնյաց նահանգի արաբ կառավարիչ Սուլեյմանի և

նոյն նահանգի եպիսկոպոս տեր Սիոնի փոխհարաբերությունների, ինչպես և վերջինիս կաթողիկոս դառնալու հանգամանքների մասին, հետևյալ հետաքրքիր տեղեկությունն է հաղորդում Քաղենիի մասին.

«Յետ այսորիկ ապա եհաս ոստիկանն այն (Սուլեյմանը—Հ. Ե.) պատազատել և մեջ բերված՝ Թալինի և մյուս գյուղերի ավերածության, կոտորածի ու գերեվարության մասին, մոտավոր ճշտությամբ նշում է այդ պատմական իրադարձության ժամանակը, ասելով.

«Եւ զկնի նորա (Դավիթ Արամոնացուց—Հ. Ե.) ի 190 թուին (եկաց կաթողիկոս)

Նկար 1. Ներքին Թալին.—Ս. Քրիստափորի վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից

զգործակալութիւնն Հայաստանեայցս. և ի գնալ նորա ի Դվին քաղաք՝ իսկ և իսկ վախճաներ երկրորդն Տրդատ: Եւ իմացեալ ոստիկանն վաղվաղակի առաքէ ի խնդիր եպիսկոպոսին Սիոնի, և ածեալ կացուցանել զնա հրամայէ յաթոռ հայրապետութեանն. Յաւուրս սորա եղև կոտորումն Քաղինոյ և Արենոյ և գիւղաքաղաքին Թալինայ, յորում սպանան ոգիք իբրև եօթն հարիւր և գերեցան հազար երկերիւր: Բայց նորա բազում և հրաշալի ճըգնողական վարուք վճարեալ զկեր կենաց իւրոյ իբրև ամս ութ՝ վախճանի, եդեալ ի քնարանի ընդ հարս իւր»[1]:

Ստեփանոս Տարոնեցի—Ասողիկ պատմիչը, հիշատակելով արաբների կողմից վերը Տեր Տրդատ ի գաւառէ Վանանդայ, յՈւթմընոյ գեղջէ՝ ամս 23: Եւ զկնի սորա Տէր Տրդատ ի Դասնաւանից՝ ամս 3: Եւ ապա Տէր Սիոն ի Բաւոնից գեղջէ՝ ամս 8: Յաւուրս սորա եղև կոտորածն Թալնայ, եւ սպանան ոգիք 700, եւ գերեցան 1200»[2]:

Ասողիկի այդ տեղեկությունից պարզ է դառնում, որ Սիոնը կաթողիկոս պետք է դարձած լինի հայոց 216 (190+23+3=216) թվականին, որը համապատասխանում է մեր թվագրության 767 թվին, և վախճանվել է իր հայրապետության ութերորդ տարում, ինչպես այդ մասին վկայում են Դրասխանակերտցին և Ասողիկը, այսինքն՝ 775 թվականին: Դրանից էլ հետևում է, որ արաբների՝

[1] Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ—Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 105—107:

[2] Ստեփաննոս Վարդապետի՝ Տարօնեցւոյ-Ասողկան.—Տիեզերական պատմութիւն, Փարիզ, 1859, էջ 107:

Թալինում, Քաղենիում և Արենիում կատարած կոտորածները պետք է տեղի ունեցած լինեին 767—775 թվականների ժամանակամիջոցում:

Հետագա դարերի հայ պատմիչները տարբեր ժամանակներ են նշում Թալինի, Քաղենիի ու Արենիի նկատմամբ այդ քաղաքական անցքերի վերաբերյալ: Սամվել Անեցին այդ անցքերը դնում է 775 թվականին, այսինքն՝ Սիոնի հայրապետության վերջին տարում. «2ՀԵ: Յաւուրս յայս եղև կոտորումն Քաղենւոյ, Արենւոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք 2. և գերեցան Ռ. և Մ.»[3]: Իսկ Մխիթար Այրիվանեցին այդ դեպքը դնում է 771 թվականին. «771: Զ.Քաղինա, զԹալին և զԱրենի կոտորեցին տաճիկք և գերեցին»[4]: Ավելի ուշ ժամանակի տեղագիրները՝ Հ. Եպս. Շահխաթունյանը[5] և ապա, հավանորեն նրանից փոխ առնելով նաև հ. Ղ. Ալիշանը վերոհիշյալ պատմական անցքը դնում են 774 թվականին[6]:

Թալին, Արենի և Քաղենի գյուղերի նկատմամբ արաբների այդ կոտորածը և գերեվարությունը պատմության մեջ հայտնի է «Թալնա կոտորածը» անունով: Ի դեպ, անհրաժեշտ ենք գտնում նաև նշել, որ Արենին, ինչպես այդ երևում է ուսումնասիրություններից, այժմյան Մեհրիբան գյուղը պետք է եղած լինի:

Այնուհետև, Ղևոնդ պատմիչը նկարագրելով Աշոտի որդի Սմբատ Բագրատունու ժամանակ հայերի ապստամբական շարժումները արաբ նվաճողների դեմ և այդ կապակցությամբ վերջիններիս պատժիչ արշավանքները Հայաստանի վրա, նշում է Թալինի և Հայաստանի մի շարք այլ խոշոր բնակավայրերի ու նրանց շրջակա գյուղերի, որոնց թվում նաև Քաղենի գյուղի բնակիչների կոտորածները՝ արաբների կողմից.

«Իսկ զօրքն տանկաց որ ի Դուին քաղաքի նլեալ ապստամբէին ի տեղիս տեղիս գաւառաց որ շուրջ զինքեամբք, և առնէին աւարառութիւն և հեղմունս արեանց ի գիւղն Պտղունս և ի Թալին և ի Կողբ, և յայլ բազում տեղիս սուր ի գործ արարեալ՝ զբազումս դիաթաւալ կացուցանէին»[7]:

Արաբական արշավանքների ժամանակ տեղի ունեցած ավերածությունները, կոտորածը, թալանը և գերեվարությունը չնայած ծանր հետևանքներ ունեցան Քաղենիի վրա, սակայն նա շարունակեց իր գոյությունը որպես բնակավայր և ավելի աճեց ու բարգավաճեց հետագա դարերում՝ Բագրատունիների տիրապետության շրջանում:

Սակայն Քաղենիի այդ բարգավաճ վիճակը երկարատև չի լինում. ԺԱ դարում սկիզբ առած սելջուկյան արշավանքները նոր զարհուրելի աղետի սկիզբը եղան Քաղենիի, ինչպես և Հայաստանի մյուս բնակավայրերի կյանքում: 1161 թե 1162 թվականին սելջուկյան Ելտկուզ ամիրան, որն այդ ժամանակ իշխում էր նաև Պարսկաստանին, Վրաց Դեորգի թագավորի դեմ ունեցած ռիսի պատճառով, որը վերագրավել էր Անի քաղաքը, հանկարծակի հարձակվում է Թալինի, Աշնակի և Քաղենիի վրա, գրավում դրանք՝ հրդեհելով Աշնակի և Քաղենիի ամրոցները, գերի է վարում բնակիչների մեծ մասին, որոնց վանառքի է հանում օտար երկրներում:

Դրանից հետո, շուրջ երեք դար, ոչ մի հիշատակություն չկա Քաղենիի մասին: Միայն նրա սահմաններում պահպանված հուշարձանների վրա փորագրված արձանագրությունները, որոնք ունեն ԺԳ դարի տարեթվեր, վկայում են այն մասին, որ նշված ժամանակաշրջանում շեն էր Քաղենին:

1514 թվականին օսմանցոց Սելիմ Բ թագավորը, վերադառնալով պարսից դեմ մղած հաղթական պատերազմից, մեծ կոտորած է սարքում Թալինում և նրա շրջակա գյուղերում (հեջրիյի 920 թվականին, շաբան ամսի 11-ին)[8], որոնց թվում, անկասկած, նաև Քաղենիում:

Դրանից հետո տեղեկությունները Քաղենիի մասին իսպառ բացակայում են: Սակայն անկասկած է, որ ԺԵ, ԺԶ դարերում անընդհատ կրկնվող թուրք-թաթարական արշավանքները քայքայման ու ամայության հասցրին նաև Քաղենին:

Անցյալ դարի սկզբներին Քաղենի ավերակ գյուղատեղի հյուսիսային մասում առժամանակ բնակություն են հաստատում մի խումբ թուրք ընտանիքներ: Երբ ռուսները գրավեցին Արևելյան Հայաստանը, 50 ընտանիք հայ գաղթականներ Ղարսից գալիս և բնակվում են այդտեղ: Սակայն մի քանի

---

[3] **Սամուէլի քահանայի Անեցւոյ**—Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 89:

[4] **Մխիթարայ Այրիվանեցւոյ**—Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 52:

[5] **Հովհաննես եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատու, Էջմիածին, 1842, էջ 54—55:

[6] **Հ. Ղևոնդ Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 137:

[7] **Ղէւոնդեայ մեծի վարդապետի**, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 144:

[8] **Հ. Ղ. Ալիշան**, Այրարատ, էջ 140:

տարի հետո թողնում-գնում են՝ մշտական բնակություն հաստատելով հին Թալինում և Շիրակի գյուղերում:

Հովհ. եպս. Շահխաթունյանը անցած դարի երեսնական թվականներին այցելելով այդ բնակավայրը, այն գտնում է ամայի ու անմարդաբնակ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այդտեղ մշտական բնակություն են հաստատում թուրքական յաթաղանից ազատված հայ գաղթականները, իրենց նոր բնակավայրը կոչելով Ներքին Թալին՝ տարբերելու համար հիմնական Թալինից, որը և դառնում է Վերին Թալին:



Նկար 2. Ներքին Թալին.—Միջնաբերդի կրկնապարիսպները՝ ձախակողմյան բրգաձև աշտարակի վրա արաբերեն արձանագրությամբ

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Քրիստափորի անվան վանքը

Ս. Քրիստափորի անվան վանքի հուշարձանների խումբը գտնվում է Ներքին Թալին գյուղից երկու կիլոմետրաչափ դեպի հարավ-արևմուտք, բարձրավանդակ-սարահարթի արևմտյան եզրին, Քաղենի գյուղատեղի արևմտյան մասում: Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ հետաքրքիր հուշարձանի մասին, ուստի և պարզ չէ, թե երբ է կառուցված այն և ովքեր են եղել նրա կառուցողները: Առավել ևս պարզ չէ, թե երբ է նա վերջնականապես ավերվել-ամայացել և դադարել որպես մենաստան գոյություն ունենալուց: Նույնիսկ նա վրիպել է ճանապարհորդների ուշադրությունից: Միայն անցյալ դարի տեղագիրները հպանցիկ կերպով հիշատակում են այն, նշելով, որ հավանաբար մենաստան եղած լինի, գտնելով այն ավերակ վիճակում:

Ս. Քրիստափոր վանքի վերաբերյալ միակ աղբյուրը նրա վրա փորագրված այն փոքրաթիվ արձանագրություններն են, որոնք պահպանվել են նրա կանգուն մնացած մասերի վրա: Այդ արձանագրությունները, որոնք վերաբերում են Ժ—ԺԳ դարերին, բոլորն էլ ունեն նվիրատվական բովանդակություն, ինչպես ընթերցողը կարող է վերահաստ լինել դրան՝ սույն հոդվածի վերջում, ուստի և ոչ մի չափով չեն լուսաբանում մենաստանի անցյալ պատմությունը:

Ս. Քրիստափորի անվան վանքի հուշարձանների խումբը բաղկացած է մեկ եկեղե-

ցուց, դամբանատուն-զանգակատնից, գերեզմանատնից, վանքի միաբանության բնակելի շենքերից, որոնք բոլորն էլ շրջափակված են առանձին պարսպով:

1. **Եկեղեցին արձանագրությունների մեջ կոչվում է ս. Քրիստափորի անունով:** Դա կենտրոնագմբեթ ձևի մի կառուցվածք է, որն իր կառուցողական հետաքրքիր ձևերով խիստ բնորոշ է Է դարին: Հավանաբար այն կառուցված լինի Կամսարականների կողմից, որոնց ժառանգական սեփականությունն էր կազմում Արագածոտն գավառի այդ մասը՝ մինչև արաբական արշավանքները Հայաստանի վրա:

Եկեղեցու հատակագիծը խաչաձև է. խաչաթևերն արտաքուստ և արևմտյան խաչթևը ներսից ուղղանկյուն են, իսկ մյուս խաչթևերը ներսից՝ կիսակլոր: Արևելյան խաչթևում տեղադրված է կիսակլոր աբսիդը՝ ցածրիկ բեմով: Գմբեթի թմբուկը ութակող է: Միակ մուտքը արևմտյան խաչթևի արևմտյան պատի կենտրոնական մասից է, որի շրջանակը վերևից զարդարված է ատամնամոր բանդակներով: Յուրաքանչյուր խաչթևի կենտրոնական մասից և դրանց համապատասխան գմբեթի թմբուկի կողերից բացվում են մեկական փոքր, կամարակապ գագաթով, պատուհաններ:

Եկեղեցին ներսից սվաղած է եղել կրաշաղախով, որը մեծ մասամբ թափված է, պահպանվել է միայն աբսիդի պատերին եղած փոքր մասը: Պատերի արտաքին երեսի, ինչպես և գետնին թափված առանձին քարերի վրա փորված են S, 2, U, Մ, Գ, Ն, L, V, Z և այլ ձևի նշաններ, որոնք ամենայն հավանականությամբ կառուցող վարպետների նշանները պետք է եղած լինեն:

Եկեղեցու շենքը հիմնականում շարված է սև տուֆի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ. մասամբ օգտագործված է նաև կարմիր տուֆ: Եկեղեցին ավերակ վիճակում է (լուսանկար 1): Քանդված մասերը թափված են եկեղեցու շենքի ներսը և շրջապատը՝ փլատակների ձևով: Սև քարով շինված լինելու պատճառով տեղացիների մոտ հայտնի է Ղարա (սև) վանք անունով:

2. **Դամբանատուն-զանգակատունը** գտնվում է եկեղեցու հյուսիսային կողմում: Այդ կարգին պատկանող հուշարձաններին հատուկ ձևով կառուցած քառակուսի հատակագիծ ունեցող եռահարկ մի շենք է, որի ստորին հարկը քիչ գետնահան է, որը ծառայել է որպես դամբանատուն, երկրորդ հարկը՝ որպես աղոթարան, իսկ երրորդ հարկը զանգակատունն է: Ստորին հարկի սուտքը չի նկատվում, գուցե ծածկված լինի փլատակներով, իսկ երկրորդ հարկի, այսինքն՝ աղոթատան մուտքը արևմտյան կողմից է, ուր բարձրանալիս են եղել փայտյա սանդուղքով:

Սրա պատերի վրա նույնպես փորված կան նշաններ՝ Ա, Ս, Կ, L, T, Y և այլ ձևերով: Ամբողջ շենքը շարված է սև տուֆի տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Կիսալեր վիճակում է, ամբողջապես քանդված է զանգակատունը, երկրորդ հարկի ծածկը և պատերի վերևի կես մասը, թափված են արտաքին անկյունաշար և հարավային պատի ստորին մասի երեսապատ քարերը: Քանդված մասերը թափված են շրջրջը՝ ծածկելով պատերի ստորին մասերը: Այդ հուշարձանի կառուցման ժամանակը նույնպես պարզ չէ:

3. **Վանքի միաբանության բնակելի շենքերը** գտնվում են եկեղեցու արևմտյան կողմում, որոնք բոլորն էլ ավերակ վիճակում են փլատակների ձևով: Նկատվում է, որ շարված են եղել զանազան մեծությամբ անմշակ քարերով՝ հողաշաղախի միացությամբ և, ամենայն հավանականությամբ, փայտածածկ են եղել: Դրանց կառուցման ժամանակը նույնպես որոշ չէ:

4. **Պարիսպը** շրջափակում է վանքի՝ վերը նկարագրած հուշարձանները և ամբողջապես ավերակ վիճակում է, պահպանվել են հիմնապատերը, որոնք վանքի միաբանության բնակելի շենքերի պես շարված են զանազան մեծության անմշակ քարերով՝ հողաշաղախով միաձուլված: Պարսպի կառուցման ժամանակը նույնպես անհայտ է:

5. **Գերեզմանատունը** տարածվում է մենաստանի շուրջը՝ ընդարձակ տարածության վրա: Գերեզմանաքարերը զանազան հանքաքարից են՝ տուֆից, բազալտից, որձաքարից և այլն և տարբեր ձևերով մշակված. կան նաև անմշակ գերեզմանաքարեր՝ բնական սալերի ձևով: Մի շարք գերեզմանների վրա շարված են մանր որձաքարեր՝ ծայրերին ձողաձև քարեր տնկած:

Գերեզմանոցում կան բազմաթիվ խաչքարեր, որոնք սովորականի պես շքեղորեն քանդակազարդված են: Դրանց մի մասը տեղահան են արված և ոմանք ջարդոտված: Խաչքարերի ջարդված բեկորները թափված են վանքի բակում և պարսպից դուրս՝ ամենուր: Դրանցից մի քանիսի վրա նկատվում են տապանագրության մնացորդներ: Գերեզմանաքարերի և խաչքարերի մշակման ու զարդաքանդակների ձևերը բնորոշ են Ժ—ԺԴ դարերին:

6. **Մի խումբ խաչքար-մահարձաններ.**— Գտնվում են վերը նկարագրած գերեզմանատան հարավ-արևելյան եզրին, վանքից դեպի Ն. Թալին գյուղը տանող ոտքի ճանապարհի ձախ կողմում: Կանգնեցրած են մի ընդհանուր շարքով՝ իրար կողքի, տարբեր մեծությամբ են, պատվանդանավոր: Խաչքարերը սովորական ձևով քանդակազարդված են և վերաբերում են ԺԲ—ԺԳ դարերին: Ամենամեծ խաչարձանի պատվանդանի վրա փորագրված է.

Ա. 1. Թ. ՈԿԴ: (1215) ԵՍ ՊԵՏՐ-
2. ՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ զ-
3. Խաչս բարեխաւս հ-
4. ոգո իմո. աղաչեմ
5. յիշել ի Տէր:

Ներքին Թալին գյուղի մյուս հուշարձանները

7. **Քաղենի հին բնակատեղի.**—Տարածվում է լայնածավալ սարահարթի վրա, բռնում է մի ընդարձակ տարածություն՝ շուրջ 10—12 քառակուսի կիլոմետր, իր մեջ ընդգրկելով նաև Ներքին Թալին գյուղը: Բնակատեղիում պահպանվել են տների պատերի ստորին մասերը, որոնք շարված են բազալտի անտաշ քարերով՝ ցեխով: Այդ տների ներսում, նրանց վերին մասերում, շենքերի ամբողջ լայնությամբ պատրաստված են թմբաձև տարածություն՝ եկեղեցիների բեմերի ձևով, որոնց առջևի մասը շարված է նույն բազալտի տաշված մեծ քարերով և որտեղից քարե մի քանի աստիճան ունեցող սանդուղքով (նայած թմբաձև տարածության բարձրությանը) բարձրանում են հիշյալ թմբի վրա:



Նկար 3. Ներքին Թալին.—Միջնաբերդի կրկնապարիսպները

Բնորոշ է այն, որ տներն այդտեղ առանձին խմբերով են և խմբերն իրարից անջատանջատ: Ճիշտ նույն ձևով են նաև գերեզմանատները՝ առանձին փոքր խմբերով և յուրաքանչյուր խումբը կից է մի առանձին խումբ տների: Այդ հանգամանքը համոզիչ կերպով ապացուցում է, որ այստեղ մարդիկ ապրել են առանձին տոհմերով, մի երևույթ, որն ընդհանուր է Արևելյան Հայաստանի բոլոր կարևոր բնակավայրերին: Այդպիսին են, օրինակ, Թալինը, Արուճը, Եղեգիսը, Գառնին, Աշտարակը, Օշականը և այլն: Դրանից էլ հետևում է, որ Քաղենին եղել է Հայաստանի ոչ միայն խոշոր, այլև կարևոր ու նշանավոր բնակավայրերից մեկը:

Բնակատեղիում ամենուրեք նկատվում են հնձաններ, որոնք մեծ մասամբ փորված են

տուֆի քարաշերտի մեջ, կարասաձև են և ներսից սվաղած են կրաշաղախով: Այդպիսի երկու սեծ հնձաններ գտնվում են ս. Քրիստափորի անվան վանքի բակում, պարապից ներս:

Սիաժամանակ նկատելի են խաղողի վազերի ու զանազան պտղատու ծառերի մնացորդներ՝ վայրիացած վիճակում: Այդ խաղողի վազերն ու պտղատու ծառերը դեռ անցյալ դարի սկզբներին եղել են բավականին փարթամ ու խիտ: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս Հովհ. Եպս. Շահխաթունյանը.

«...շուրջ զմենաստաՀաւս (ս. Քրիստափորի վանքի—Հ. Ե.) յընդարձակութեան անդեն վայրք այգեստանեայց և ծառաստանաց մինչև զատորոտն առապարին գոչաւ անդր. և գրեաթէ իւրաքանչիւր բաժինս այգեացն գտանին մի մի ընդարձակ քարայրք (մաղարայ) տեղիք հրնձանաց:

Վերջին աւերածութիւն այսր այգեաց և ծառաստանաց, որպէս պատմեն ականատեսքն, եղև յամին 1804, բանգի ի գալ զինուորութեանցն ռուսաց պատերազմաւ ի վերայ Երևանայ: Յայնմ ամի, և ի գաղթիլ բովանդակ բնակչաց նահանգիս յայլեայլ ամուր տեղիս լերանց և ձորաց և ի հեռաւոր սահմանս, Ջաֆարխան անուն ոմն յայլազգի մահմետականաց իբրև եօթն հարիւր գերդաստանօք ամրացեալ գոլով ի լեառն Բարդող, իջանէ անտի այնու բազմութեամբ և անցեալ ընդ Երասխ՝ գա բնակի առտ ամասչափ միջոցս և յապականութիւն դարձուցանէ զամենայն. և զկնի առանց բնակչաց մնացեալ՝ իսպառ չորանան տունկքն և անհետանան. իսկ նա ինքն Ջաֆար խան որոշեալ ի պարսից և անցեալ ընդ հիւսիսային ստորոտով Արագած լերին ի Վանսն Հառիճոյ, և անտի ընդ Ապարան, և ընդ Եղիվարդ գիւղ՝ գնայ, միանայ ընդ զօրսն Ռուսաց և հպատակի իշխանութեան նոցին»[9]:

Վերը մեջ բերածներից միանգամայն պարզ է դառնում, որ հնում այդտեղ նկատելի չափով զարգացած է եղել խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Քաղաքի բնակատեղում պահպանվել են ուրիշ շատ հուշարձաններ, որոնցից առավել նշանակալից է ամրոցը, որին այժմ «Ներքին Թալինի բերդ» անունն են տալիս:

8. **Ամրոց.**—Գտնվում է գյուղի մեջ, կառուցման ժամանակը և կառուցողները ստույգ հայտնի չեն, նրա մասին հիշատակություն կա արաբների՝ Հայաստանի վրա կատարած արշավանքների առաջին շրջանում: Հավանական է, որ նրա հիմնականը սկզբնական մասը կառուցված լինի արաբական արշավանքների նախօրեին՝ Կամսարականների կողմից: Հետագայում ենթարկվել է մի շարք ավելացումների ու կրկնակի ամրացումների (նկ. նկ. 2 և 3):

Սկզբնական կառուցումը հատ պատերով, երկարաձիգ քառանկյունի հատակագծով, ընդարձակ սրահի ձևով մի շենք է, թաղակապ ծածկով: Հետագայում այդ շենքի յուրաքանչյուր պատին կից, արտաքուստ, կառուցված են մեկական բրգաձև աշտարակներ, իսկ դրանից հետո այդ բրգաձև աշտարակների միացման անկյուններից (բացի հյուսիս-արևելյան անկյունից) նորից ավելացրել են կրկ[illegible] աշտարակներ՝ ո[illegible]մանք բրգաձև և [illegible] հեռանկյունաձև: Այդ բոլոր հավել[illegible]քներով ամբոցի ընդհանուր [illegible]ատացել է, մի տեսակ, խ[illegible]

Ամրոցի մուտ[illegible]նքի արևմտյան պատի [illegible]այից է, այդ կողմում ավելացրած բրգաձև աշտարակի հյուսիսային եզրից: Նկատվում է, որ ամրոցի ամբողջ շենքը եռահարկ է եղել, պատերը ներսից սվաղած են եղել կրաշաղախով: Վերի հարկի պատերի մեջ նկատվում են փոքրիկ պատուհանների հետքեր: Ամբողջ շենքը շարված է կարմրագույն տուֆի տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ: Արևմտյան կողմում ավելացրած բրգաձև աշտարակի հարավային երեսին, արտաքուստ պահպանվել է արաբատառ մի արձանագրություն՝ պարսկերեն լեզվով (նկ. 2):

Բացի վերոհիշյալ ավելացումներից, նկատելի է նաև մի շարք վերանորոգումների հետքեր: Ամրոցը կիսավեր վիճակի մեջ է, պահպանվել է սկզբնական կառուցված շենքը և դրա բարձրությամբ հետագա ավելացումները, իսկ դրանցից վերև՝ հյուսիսային և արևելյան բրգաձև աշտարակները՝ մինչև 3-րդ հարկի կեսի բարձրությամբ:

Ամրոցի այդ մասը շրջափակված է արտաքին բրգավոր պարսպապատերով, որոնք շարված են նույն կարմրագույն տուֆի տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ: Այդ վերջինս նույնպես ավերակ վիճակում է. պահպանվել են արևմտյան կողմի երկու բուրգերի որոշ մասերը, հարավարևելյան և հյուսիս-արևելյան բուրգերի ստորին մասերը, ինչպես և պարսպապատի մնացած մասի առանձին հետքեր: Գլխավոր մուտքը՝ կամարակապ մեծ դարպասի ձևով, եղել է արևմտյան պատի հարավային ծայրից: Պարսպապատի հյուսիս-արևելյան

[9] Հ. Եպս. Շահխաթունեանց, նոյնը, էջ 56—57: 57:

բուրգի արտաքին երեսի վրա, ձեռագիր տառերի ձևով, փորագրված է հետևյալ երկտող արձանագրությունը.

բ. Յովանէս քարգործ յիշեցէք ի Քրիստոս
գ. Զովանէս քարգործ յիշեցէք ի Քրիստոս:

համար, որոնք հանդիսացան Կամսաղականների տիրույթների ժառանգորդները:

9. **Եկեղեցի.**—Գտնվում է ամրոցի արտաքին բերդապարիսպների ներսում, արևելյան պատին կից: Փոքրիկ, միանավ բազիլիկ ձև-



Նկար 4. Ներքին Թալին.—Ամրոցի արտաքին բերդապարիսպները՝ գլխավոր մուտքով

Չնայած այդ երկու տողերի բովանդակությունը նույնն է, սակայն կասկած չկա, որ դրանք տարբեր արձանագրություններ են և դրանց մեջ հիշատակված Հովհաննես քարգործերը տարբեր անձնավորություններ են, որոնք ամենայն հավանականությամբ հանդիսացել են նշված արտաքին պարսպապատի կառուցող վարպետները:

Արտաքին բերդապարիսպների ներսում նկատելի են այլ կառուցվածքներ, պատերի հետքեր և երկու ջրամբարներ, շարված նույն կարմրագույն տուֆի տաշած քարերով՝ կրաշաղախի միացությամբ:

Ի դեպ պետք է նշել, որ նման նշանակալից մի ամրոցի գոյությունը Քաղենիում ավելի էր շեշտում նրա կարևորությունը՝ որպես բնակավայրի: Եթե Թալինը հանդիսանում էր իբրև հոգևոր-կրոնական կենտրոն, ապա Քաղենին առավելապես քաղաքական-վարչական ու պաշտպանական վայր էր՝ նախ Կամսարականների, ապա Պահլավունիների

վով կառուցված մի շենք է, թաղակապ ծածկով, մուտքը հարավային կողմից է, սլաքաձև ճակատակալ քարով. այդ նույն պատի մեջ բացվում է մի փոքրիկ, պսակազարդ պատուհան:

Ամբողջ շենքը շարված է կարմիր տուֆի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Կիսավեր վիճակում է, ամբողջապես քանդված է ծածկը, թափված են պատերի երեսապատ քարերի մի մասը:

10. **Ս. Սարգիս եկեղեցի.**—Այս հուշարձանը, որից միայն սալահատակն է պահպանվել, գտնվում է ամրոցի արտաքին բերդապարսպի հարավ-արևելյան բուրգի հարավային կողմում, Քերոբ և Աբգար Գրիգորյանների տան բակում: Եկեղեցին մինչև 1913 թվականը կանգուն է եղել, այն քանդել են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ այդտեղ բնակություն հաստատող հայ գաղթականները և քարն օգտագործել բնակարանային շինարարու-

թյան համար: Վերը նշված Գրիգորյանների տան պատերի մեջ դրված են եկեղեցու շենքի սրբատաշ քարեր, խաչքարերի քանդակազարդ բեկորներ: Մի քարի վրա նկատվում է մի արձանագրության սկիզբը՝ 1018 թվականով, որ եկեղեցին կոչվելիս է եղել ս. Սարգիս:

Հովհ. եպս. Շահխաթունյանը, տալով սույն ս. Սարգիս եկեղեցու շենքի նկարագրությունը, մեջ է բերում վերը նշված 1018 տարեթիվն ունեցող արձանագրության ընդօրինակությունը՝ հետևյալ ձևով. «ՆԿԼԷ թուականիս ես կոնսը՝ հետևյալ ձևով. «ՆԿԼԷ թուականիս ես Սարգիս որ ետու զիմ գիրքս ի սուրբ Սարգիսս... իմ հոգւոյս պարտական է տարոյն Բ. աբ ժամ»[10]:

11. **Բերդապարիսպներ.**—Երևանի Հուսեին խան սարդարը 1812 թվականին Ներքին Թալինի հին ամրոց-դղյակի շուրջը, ընդարձակ տարածության վրա, կառուցել է տասիս նոր ամրոցապատեր, որոնք ընդհանուր առմամբ ունեն ուղիղ քառանկյունի տեսք և ձգվում են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Պատերը շատ լայն են ու բարձր, արտաքին կողմից ունեն՝ համաչափ դասավորված ութ հատ ուղղանկյուն հենապատեր՝ աշտարակների ձևով: Միաժամանակ ամրոցապատերը արտաքին երեսից քիչ բարձր են, որոնց մեջ փորված են հատուկ անցքեր՝ հրացանների փողերի անցկացման համար, իսկ ներսի երեսների կողմից քիչ ցածր են ու հարթ՝ պատերազմող մարդկանց կանգնելու և երթևեկության համար:

Այդ բերդապարիսպների գլխավոր մուտքը հյուսիս-արևելյան պատի կենտրոնական մասից է, դրա արտաքին կողմում, կից կառուցված բրգաձև մեծ աշտարակի հարավ-արևելյան եզրից (նկ. 4): Այդ նույն բրգաձև աշտարակի երկու եզրերից, ներսի կողմից կառուցված քարե հատուկ սանդուղքները տանում են դեպի աշտարակի գագաթը և ամրոցապատերի վրա եղած հարթ տարածությունները: Իսկ գլխավոր մուտքի վերևում, պատի մեջ դրված երեք քարերի վրա, բոլորովին անարվեստ ձևով քանդակված են այծերի պատկերներ: Մի երկրորդ, համեմատաբար փոքր մուտք էլ բացվում է արևմտյան կողմից:

Ամրոցապատերը շարված են զանազան հանքաքարերի փոքր քարերով՝ ցեխով մածուցված: Քանդված են հարավային պատի առանձին մասերը, կանգուն մնացած պատերի վերին մասերը, թափված է պատերի որոշ տեղերի արտաքին երեսաշերտը:

Այդ բերդապարիսպների մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Հ. եպս. Շահխաթունյանը.

«Ի մերում ժամանակի յամի 1812, Հուսեին խան սարդարն Երևանայ աշխատեցուցեալ զբնակիչսն նահանգիս ետ կառուցանել շուրջ զհին շինուածովքն ընդարձակագոյն պարիսպ ութն անկիւնի հանդերձ ութն մեծամեծ բրգամբք ի հաստակ քարանց՝ բարձր և ստուար... ապարի ի սմա և զայլ շինուածս, և համբաւանցս. և կացոյց և ի սմա Բեկ անուամբ զայլազգի ոմն հանդերձ սակաւաթիւ գերդաստանօք ի պահպանութիւն երթևեկացն ի Ղարս և ի Շիրակ գաւառ. իսկ ի տիրապետութեան Ռուսաց գաղթականք ի Ղարսայ իբրև յիսուն տունք յազգէ հայոց բնակեցան աստէն. այլ զկնի քանի ամաց անդրէն ելեալ՝ ոմանք անցին ի Շիրակ և ոմանք ի հին Թալին. և այժմէ իսպառ անբնակ»[11]:

Թալինի ամրոցն ունեցել է նաև ստորերկրյա գաղտնի անցք, որն սկիզբ առնելով ամրոցի հարավ-արևմտյան ճակատի կենտրոնական մասից, դուրս է եկել արևմտյան կողմում եղած ձորակը: Ստորերկրյա այդ անցքը կողերից շարված է բազալտի մեծ քարերով և վրայից ծածկված է նույն բազալտի խոշոր սալաքարերով, իսկ վերջինս պատած է քարակուտերով՝ ըստ երևույթին անցքի հետքը կորցնելու նպատակով: Անցքի լայնությունը 0,75 մետր է, իսկ բարձրությունը՝ 1,5 մետր: Անցքի առանձին մասերը որոշակի կերպով նկատվում են դեպի երկաթուղու Ղարաքուռուն կայարանը տանող խճուղու ձախ կողմում, գյուղի արևմտյան եզրին:

Այդ բոլորը ինքնին վկայում են, որ Ներքին Թալինի ամրոցը եղել է Հայաստանի պաշտպանական կարևոր վայրերից մեկը:

12. **Գերեզմանատուն.**—Տարածվելիս է եղել գյուղի արևմտյան եզրին, դեպի երկաթուղու Ղարաքուռուն կայարանը տանող ճանապարհի երկու կողմերում: Նկատվում է, որ բավական ընդարձակ գերեզմանատուն է եղել, սակայն մեծ մասամբ ավերվել է ճանապարհաշինության և բնակարանային շինարարության պատճառով: Տեղում պահպանված մի քանի տապանաքարերը, որոնց երեսները մշակված են հարթ-տափակ ձևով, և խաչքարերի քանդակազարդ բեկորները սև ու կարմիր տուֆ քարերից են, որոնց մշակման ձևերը բնորոշ են Ժ—ԺԳ դարերին:

13. **Գերեզմանոց.**—Գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան թաղամասում, եղել է

[10] **Հ. եպս. Շահխաթունեանց,** նույնը:

[11] **Հ. եպս. Շահխաթունեանց,** նույնը, էջ 54—55:

հայկական գերեզմանատուն, քանդել և վեր են ածել մուսուլմանական գերեզմանատան, իսկ եզրերից քանդել են ճանապարհաշինության և բնակարանային շինարարության պատճառով: Տեղում պահպանվել են հայկական մի քանի գերեզմաններ, որոնց գերեզմանաքարերը սև տուֆից են և մշակված են, վերի մասերը սուր եռանկյունի ձևով՝ բնորոշ Է—Թ դարերին:

14. **Դամբարան մուսուլմանական.**—Գրտնվում է այդ վերջին գերեզմանատանը: Հատակագիծը քառակուսի է, ծածկը գմբեթային, ներսի անկյունները բութ են, տրոմպների ձևով: Շարված է կարմրագույն տուֆի տաշված քարերով, թույլ կրաշաղախի միացությամբ: Հավանաբար կառուցված լինի ԺԹ դարի սկզբներին: Ամբողջապես պոկել են արտաքին երեսապատ քարերը:

15. **Գերեզմանատուն.**—Տարածվում է գյուղի ծխախոտի չորանոցի արևելյան և արևմտյան կողմերում: Բաղկացած է երկու առանձին խմբեր կազմող տապանաքարերից ու խաչարձաններից, որոնց մշակման ձևերը բնորոշ են Ժ—ԺԳ դարերին:

16. **Խաչքար-մահարձան.**—Գտնվում է գյուղի հարավ-արևելյան կողմում, վերոհիշյալ չորանոցից մոտ 300 մետր դեպի հարավ: Խաչքարի գագաթի մասը կամարաձև է, իսկ դեպի հիմքը աստիճանաբար նեղանում է: Զարդաքանդակները վերևի մասում են՝ խաղողի մեծ ողկույզների ու տերևների ձևով. մնացած մասը սվաղած է կրաշաղախով և կարմիր գույնով ներկած:



Նկար 5. Ներքին Թալին.—Իջևանատան ավերակների ընդհանուր տեսքը

17. **Խաչքար-մահարձան.**—Գտնվում է նախորդ մահարձանից քիչ դեպի հարավ-արևելք. նույնպես տուֆ քարից է, սովորական ձևով քանդակազարդված: Վրան փորագրված է հետևյալ արձանագրությունը. «ՅԼԱ (882) թվ. Ես Սուսե»: Շուրջը թափված են այլ խաչքարերի քանդակազարդ բեկորներ՝ բնորոշ Ժ—ԺԳ դարերին:

18. **Խաչարձան.**—Գյուղի արևմտյան կողմի ձորակի քարափում փորված է փոքրիկ քարայր, որին տեղացիք «ճգնաժամ» անունն են տալիս: Այդ քարայրի դիմաց, ձորակի մյուս քարափին կից, կանգնեցված է մի խաչքար՝ նախորդը տաշելով ու հարթեցնելով քարափը: Պատվանդանի մասը սև տուֆից է, իսկ խաչքարը կարմրագույն տուֆից: Վերջինս շքեղորեն քանդակազարդված է շատ հին ձևով, որոնց մեջ խիստ բնորոշ են բուսական, մանավանդ խաղողի ողկույզաձև թեմաները:

19. **Իջևան.**—Ներքին Թալինի հուշարձանների շարքին պետք է դասել նաև իջևանը, որը գտնվում է Ներքին Թալինից Վերին Թալին տանող կես ճանապարհին: Երբեմնի այդ ընդարձակ, հոյակապ ու հետաքրքիր կառուցվածքն այժմ ամբողջապես ավերակ վիճակում է, պահպանվել են արևելյան և հյուսիսային արտաքին պատերը և մյուս պատերի հետքերը (նկ. 5):

Այդ պահպանված մասերից որոշակի պարզ է դառնում, որ իջևանի շենքը, որը ընդհանուր առմամբ ձգվում է արևելքից արևմուտք և հատակագծում ուղիղ քառանկյունի տեսք ունի, բաղկացած է երեք՝ իրար հետ միացած բաժանմունքներից կամ սրահաձև դահլիճներից: Կենտրոնում եղած դահլիճը անհամեմատ մեծ է՝ հինգ նավանի, արտաքին նավերը հյուսիսային ծայրում ունեն փոքրիկ, քառակուսաձև սենյակներ, իսկ հարավային կողմից առանձին նախասրահ՝ դահլիճի ամբողջ լայնությամբ:

Մյուս երկու բաժանմունքները կամ դահլիճները գտնվում են կենտրոնական մեծ դահլիճի արևելյան և արևմտյան կողմերում. դրանք եռանավ ձևով են: Արևելյան կողմի դահլիճի արևելյան պատի հարավային ծայրին կից արտաքուստ նկատվում է քառակուսի հատակագիծ ունեցող փոքր սենյակի հիմնապատերը:

Բոլոր դահլիճների նավերը միմյանցից անջատված են եղել միջնորմներով, որոնց ստորին մասերը կազմված են եղել մույթերից՝ միացած կամարներով:

Իջևանի ամբողջ շենքը կառուցված է եղել սև տուֆի տաշված քարերով, երաշտաախիտ միացությամբ: Արտաքին պատերը բարձր են ու լայն՝ ամրոցապատերի ձևով: Արևմտյան պատն արտաքուստ ունի չորս հենապատեր՝ որոշաձև աշտարակների ձևով, մեկականն պատի անկյուններից և երկու հատ միջին մասում՝ համաչափ դասավորությամբ: Արևելյան կողմի պատն ունի նույնաձև երկու հենապատ՝ մեկը հյուսիսային անկյունում և մյուսը՝ պատի կենտրոնական մասում:

Իջևանի կառուցման ժամանակի վերաբերյալ հայ մշակույթի ժրաջան մշակ, անխոնջ հետազոտող Թ. Թորամանյանը, տարբեր ժամանակներ առանձնացնելով այդ հուշարձանը, տարբեր ժամանակներ է նշում նրա խարխլման մասին: Մեջ ենք բերում նրա կարծիքները հաջորդաբար.

«Շատաստանը հետաքրքրական և կարևոր մի հուշարձան է Հին և Նոր Թալինների հանապարհի միջին կետի վրա տարածվելիք զբաղեցնող իջևանատունը, որ 12—13 դարու գործ է: Մեծ և հոյակապ շինություն է...»[12]:

«Այսօր (1926 թ. հոկտեմբերի 8-ին—Հ. Ե.) կես օրը քիչ անց, թողի Փոքր Թալին ուղևորվեցի դեպի Մեծ (կամ Հին) Թալին: Ճանապարհի կեսին վրա հանդիպեցի այն մեծ իջևանը, որուն ավերակները այսօր անգամ աքանչացում կպատճառեն այցելուին... (ինչպես երևում է շինվածքերեն, այս իջևանը 14—15 դարերու գործ պետք է լինի)»[13]:

Ն. Թ-ի-ուշով զննելով ավերակ շենքի մնացորդները, որոշակի կերպով պարզ է դառնում, որ իջևանի շենքը պետք է կառուցված լինի տարբեր ժամանակներում: Առաջին անգամ կառուցված պետք է լինի նրա արևելյան կողմի սրահը, ապա մյուս մասերը: Որ իջևանի արևելյան մասն ավելի վաղ է կառուցված եղել, դա պարզ նկատվում է այն բանից, որ նրա արևմտյան կողմում կառուցված մասը կցվել է նախորդին. դրա համար պատի մեջ արտաքին երեսից դրվել են կաղունակներ և դրանց բարձրության հավասար պատը ամբողջ երկարությամբ բանդված-փոսացրած է՝ նոր կառուցվող շենքի ծածկի թաղի այդ կողմի ելքը հենելու համար: Բացի այդ, արևելյան դահլիճը հյուսիս-արևմտյան արտաքին անկյունում ունեցել է համանման աշտարակաձև հենապատ, ինչպես հյուսիս-արևելյան արտաքին անկյան հենապատն է, շարված սրբատաշ քարերով, որը նոր կառուցվող շենքը նրան հարմարավոր ձևով կցելու նպատակով թեք ձևով կտրել են:

Մեր կարծիքով, որն ավելի քան հավանական է, հիշյալ իջևանի հին մասը կառուցված պետք է լինի ԺԲ դարում, իսկ հետագայի մնացած մասը՝ ԺԳ դարում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ հիշյալ իջևանը եղել է միջազգային տարանցիկ առևտրի՝ արևելքից արևմուտք գնացող գլխավոր ճանապարհների՝ Հայաստանի սահմաններով անցնող մի ուղեգծի հանգուցային կայարաններից մեկը: Այդ ուղեգիծը դուրս գալով Պարսկաստանից, անցել է, ինչպես այդ թույլ են տալիս ճշտելու հնագիտական-տեղագրական հետազոտությունները, Դվին և Վաղարշապատ քաղաքների, Աղավնատուն, Առուճ (այժմ Թալիշ), Աշնան, Քաղենի ավանների վրայով, որը մերը նշված իջևա-

[12] **Թորոս Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկրորդ հատոր, Երևան, 1948, էջ 130:

[13] Նույնը, էջ 252:

նից բաժանվել է երկու ճյուղերի: Այդ վերջիններից մեկը ընթացել է Երերույք դաստակերտի, Անի և Կարս քաղաքների վրայով, իսկ մյուս ճյուղը՝ Երազգավորք քաղաքավանի, Ախալքալաք և Ախալցխա քաղաքների վրայով՝ դեպի Սև ծովի արևելյան ափերի նավահանգիստները:

Գ. ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Քրիստափորի վանք

Ս. Քրիստափորի վանքը ունեցել է մեծ թիվ կազմող վիմագիր արձանագրություններ, որոնց մի զգալի մասը, շենքը քանդվելու հետևանքով, առանձին քարերի վրա թաղված են փլատակների մեջ: Մեջ ենք բերում կանգուն մնացած մասերի վրա եղած արձանագրությունները՝ վերծանված ձևով, պահպանելով տողերի դասակարգությունը:

Դ. Եկեղեցու արևմտյան խաչթևի հարավային պատի վրա արտաքուստ

1. Յանուն Աստուծոյ ի թվականին: ՆԲ: (953) կամ եղեւ իմ Մուսաէլի և ետու
2. զիմ Էգին սուրբ Քրիստափորի՝ վասն իմ անցելոյ հոգեաց և վասն իմ
3. եւ վասն Աշոտոյ Հայոց թագաւորի և իր որդեացն արեւշատութեան:
4. Յայսմհետե ոչ յիմ յազգէ և ոչ յարքունեաց չիշխէ ոք այսմ հրամանաց ընդիմանալ, ապա
5. թե ոք ընդիմանայ: ՅԺԸ:-ից նզովեալ եղիցին և դատող նորա սատանա եղիցի: Իսկ հրամանակատարք՝ աւրհնեալ՝ յԱստուծոյ:

Ե. Եկեղեցու արևմտյան և հարավային խաչթևերի միացման անկյան երկու կողմերում, նախորդից ներքև

1. ՅՂԹ (950) թվականութեան Հայոց կամ եղեւ իմ Քրիստափո
2. րա տուն որ արար բար Թալնա... ար յետուր Բագ-
3. ին... կապճացն փայն վասն իր արեշատութեան և
4. իր (արձանագրությունը թերավարտ է մնացել):

Զ. Նույն արևմտյան խաչթևի հարավային պատի վրա, նախորդից արևելք

1. ՅՂ: (941) թվականութեան Հայոց եղեւ յԱրեգ
2. ամսեան :ի: հրաման յԱստուծոյ ի վերա գուղա-
3. քաղաքին Թալնա նոր Ուխտ և յիշատակ կատ-
4. արեն միաբան սուրբ եկեղեցոյս վասն իր-
5. եան հոգեաց և վասն խրեաց
6. որդեաց արեւշատութեան:

Է. Նույնի հարավային խաչթևի արևմտյան պատի վրա, արտաքուստ

1. Հանուն Աստուծոյ հզաւրի
2. Եւ անմահի ես հայր
3. Դավիթ զիմ ձեռաց արկեալ
4. այգին ի սուրբ Քրիստափոր էտու՝
5. վասն իմ հոգուս, արոջ :Ե:
6. աւր ժամ արնել թե Աստուած կամի:

Ը. Նույն տեղ, նախորդից ներքև

1. Հայր Դավիթ ծառա սուրբ վանքիս
2. որ ետու իմ նորս սուրբ վա(ն)քիս վասն
3. Իմ հոգոյս՝ թե Աստուած կամի:

Թ. Արևելյան խաչթևի հարավային պատի վրա, արտաքուստ

1. Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Խոցայդեղիս
2. որ ետ զիմ այգին սուրբ ուխտս Քր.
3. իստափորի: Ով այս գրիս հակառակ
4. կայ նզովի. ՅԺԸ. հայրապետաց:

Ժ. Նույն տեղ, նախորդից ներքև

1. Յաքետական տաւիմէս տումարիս և թուի :ՉԾ: և :ԻԱ:
(1272): կամաւն Աստուծոյ
2. Ես Զերգ Տամբատեց շինեցի հրամանաւ Հովան տնտեսի հտար և շատ:

ԺԱ. Արևմտյան խաչթևի արևմտյան պատին, արտաքուստ

Յանուն Աստուծոյ ի. Ն. և. Լ. թուականութեանս
Հայոց (981), ի հայրապետութեան Անանէի և ի թագա-
տրութեան Աշոտոյ՝ որդոյ Աբասա կամ եղև յԱս-
տուծոյ ես Խոսրովանոչշ Հայոց թագուհի որ կարգեցի.. .

ԺԲ. Վանքի հյուսիսային կողմում եղած մի խաչքար-մահարձանի պատվանդանի վրա

1. Թ :ՈԿԴ: (1215). Ես Պետր-
2. ոս կանգնեցի զ-
3. Խաչս բարեխաւս հ-
4. ոգո իմո աղաչեմ
5. յիշել ի տեր:

ԺԳ. Գյուղից դեպի հարավ, հին Քաղենի գյուղատեղում եղած մի տապանաքարի վրա

1. Այս գիր է արձանի որ գրեցաւ ի :ՆԾ:
(1001) թվականիս իմ
2. զուգակից Մանվել քահանաի որ կարոտ եղև մեր

3. բաճանումս յայսմնվորես Թիկանս առ Քրիստոս:

ԺԴ. Ն ույն տեղ մի այլ տապանաքարի վրա

Ամիր որդին Էլիզբարն գերի տարան Ա-բազբուրուն փախն առերէ Կոշի:

ԺԵ. Ներքին Թալինի ամրոցի վրա

«Թվին ՉԺՉ (1267). Շնորհիւ ողորմածին Աստուծոյ, այս իմ գիր է պարոն Աղպուղա-յիս, թոռն մեծին Շահանշահի, որդի Իւա-նէի, որ կամ եղեւ ինձ յԱստուծոյ եւ թողի զիմ հայրենիք գեղս՝ զԹալնայ գինոյ խալէն վասն արեւշատութեան ամիր սպասալար Շահանշահի՝ եղբոր իմոյ եւ ինձ Աղպուղա-յիս եւ Սրբի խաթունիս եւ զաւակաց մեր, եւ վասն մեր պատրոն նախնեացն յիշատակու-թեան: Եթե որ այս գրիս հակառակ կայ՝ յիմոց կամ յատարաց, մարդն այն դատի յԱստուծոյ եւ մեր եւ մեր նախնեացն յանցա-նացն պարտական լիցի առաջի Քրիստոսի աւեղ ատենին. կատարողքն աւրհնին յԱս-տուծոյ եւ յամենայն սրբոց. ամէն»:

Այս արձանագրությունը փորագրված է եղել ամրոցի միջնաբերդի հարավ-արևմըտ-յան բրգաձև աշտարակի արտաքին երեսի վրա, մուտքի վերևում, սակայն աշտարակի այդ մասը բանդված լինելու պատճառով մեզ ենք բերում Հ. եպս. Շահխանությանից (տես վերը նշված աշխատությունը):

Արձանագրված բարերի մի մասը հա-վաքված ու դասավորված է ամրոցի սրա-հանձն շենքի ներսում:



ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

1867 ղեկտեմբեր 10 եկայ յայս գիւղս։
1870 գրեցի այս յիշատակս։
Ն(ուաստ) Կարապետ քահանայ Վրդանեսեան կեսարացի։
Թ. 303բ.—Ես Տէր Խաչատուրի որդի Օհանս գրեցէմ, տրացու Օհանս, գրէցրմ։

№ 271
ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Թերթերը՝ 138 (137+1Ա)։—**Պրակները՝** 18, յուրաքանչյուրը 8 թերթից, ի բաց առյալ Ա՝ 4 և ԺԸ՝ 6 թերթերից են։—**Մեծությունը՝** 17.9×11.5×2.2 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** վատ, հետևից մի քանի թերթ ընկել է։—**Գրությունը՝** միապսակ։—**Դատարկ թղթերը՝** 2ա, 2բ, 3ա և 3բ։—**Տողերը՝** անկանոն, 22—26։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** անկման շրջանի վատ բոլորգիր։—**Զարդագրություն՝** չունի։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** ԺԸ—ԺԹ դարեր։—**Վայրը՝** շատ հավանաբար Վրաստան (Ախալցխա)։—**Ծանոթություն՝** 1964 թվի նոյեմբեր ամսին ստացված է նվեր Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանից։ Ձեռագիրը ձեռք է բերված Ախալցխայից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրում այբբենական կարգով տրվում է սրբերի, մարգարեների և այլ անձանց կենսագրության մասին տեղեկություններ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրի սկզբում, առաջին չորս էջերում, կա հայերեն-վրացերեն բառարան, ընդամենը 48 բառ, Բ տառով սկսվող, «բաղդ» բառից մինչև «բուծանել» բառը, և հինգ այլ բառեր, որոնց հայերենը պատռվել և ընկել է։

№ 272
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՆԱՐԵԿԻ

Թերթերը՝ 27, որոնցից 24-րդ և 25-րդ թերթերը տպագիր են։—**Պրակները՝** 2, Ա՝ 11 և Բ՝ 10 թերթ։ Ապա երկու հատ էլ երկուական թերթ անջատ։—**Մեծությունը՝** 31.1×20.8×0.3 սմ.։—**Նյութը՝** կեղտոտած բարակ թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ։—**Պահպանակները՝** գրքի սկզբում և վերջում կան մեկական դեղնած թուղթ։—**Վիճակը՝** լավ։—**Գրությունը՝** երկսյուն։—**Դատարկ թղթերը՝** 27ա և 27բ։—**Տողերը՝** 34։—**Գծումները՝** առանց ճնշումի։—**Գիրը՝** նոտրգիր։—**Զարդագրություն՝** չկա։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** ԺԸ դար։—**Վայրը՝** Կոստանդնուպոլիս։—**Ծանոթություն՝** գիրքն ու ձեռագիրը 1956 թ. ստացված են Կ. Պոլսից, պատրիարքական տեղապահ հանգուցյալ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանի նվիրած սեփական գրադարանի հետ, իր ժառանգների միջո-

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից և 1971 թվականի №№ Ե—Է-ից։

ցած։ Սույն հատորը սկզբում պահվում էր ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի գրադարանում, ապա 1964 թ. դեկտեմբեր ամսին տեղափոխվեց Մայր Աթոռի Ձեռագրատունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն գիրքը Կ. Պոլսո Հակոբ Նալյան Պատրիարքի Նարեկի մեկնությանն 1653 էջանոց տպագիր գիրքն է, որի առաջին քսան թերթերը ընկած լինելով, հետագայում գիրքը ամբողջացնելու նպատակով ձեռագիր գրված է պակասավոր մասը և կազմված գրքի սկզբում։ Գիրքը հրատարակված է Կ. Պոլսում 1745 թվին։

Ձեռագրի առաջին էջում վերնագիրը գրված է հետևյալը.—

թ. 1ա.—Նախադրութիւն մեկնութեան աղօթից և ներբողեանց. գերազանց և հրեշտակական վարդապետին մերոյ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։

թ. 14ա.—Գլուխ առաջին։

թ. 18ա.—Գլուխ երկրորդ։

թ. 26բ.—Գլուխ երրորդ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի առաջին երեսում)
5—3—63։
(Ստամպով երկու անգամ տպված)
Գէորգ արք. Արսլանեան։
(Սկզբի պահպանակի երկրորդ երեսում)
Նալյան Հակոբ
Մեկնություն Նարեկի
1745 թ., Կ. Պոլիս
տպ. Գաբրիել սեբաստացի Բարսեղյան։

թ. 9ա.—(Հոգևոր ճեմարանի գրադարանի ձվանակնիքը)
Մայր Աթոռ, Գրադարան, ս. Էջմիածին։

թ. 14ա.—1034։

№ 273

ՉԱԼԹԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆ

Թերթերը՝ 88։—**Պրակները**՝ քայքայված և պակասավոր։—**Մեծությունը**՝ 34.3×24×1.5 սմ.։—**Նյութը**՝ դեղձան և կեղտոտած սովորական բարակ թուղթ։—**Կազմը**՝ քայքայված ստվարաթուղթ։—**Պահպանակներ**՝ չունի։—**Վիճակը**՝ անբավարար և թերի։—**Գրությունը**՝ գրված է մի քանի ստունակների վրա։—**Դատարկ թղթերը**՝ 1ա—2բ, 63բ—65բ, 87բ։—**Տողերը**՝ անհամաչափ։—**Գծումները**՝ անկանոն, աչքի չափով։—**Գիրը**՝ զանազան տեսակի վատ շղագրեր։—**Զարդագրություն**՝ չկա։—**Գրիչը**՝ բազմաթիվ քահանաներ և այլ անձինք։—**Պատվիրատուն**՝ Իգդիրի ս. Գևորգ եկեղեցու թաղական խորհուրդը։—**Ժամանակը**՝ ԺԹ դար։—**Վայրը**՝ Իգդիրի ս. Գևորգ եկեղեցին։—**Ծանոթություն**՝ ստացված է ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի գրադարանից 1964 թ. դեկտեմբեր ամսին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

թ. թ. 3ա—55բ.—Ցուցակ մկրտությանց 1879—1886 թթ.։

թ. թ. 56ա—63ա.—Ցուցակ պսակաց 1881—1887 թթ.։

թ. թ. 66ա—87ա.—Ցուցակ ննջեցելոց 1879—1888 թթ.։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

թ. 2ա.—Ցուցակ ծնելոց վասն 1879 ամի Գրիգ. սեագրութեան, զծնեալս, զպաակս և զննջեցեալս։

թ. 3ա.—Ցուցակ ծնելոց վասն 1879 ամի, հատաբ, օր ծննդեան, օր մկրտութեան, անուանք նոր ծնելոց, ծնողաց, կնքահարց, մկրտողք և անուանակոչող քահանայից և վկայից։

թ. 8բ.—1880 ամի։

թ. 12բ.—1881 ամի։

թ. 18բ.—1882 ամի ծնունդ։

թ. 21բ.—1883 ամի։

թ. 27բ.—թիւ 1884։

թ. 32բ.—1885 ամի։

թ. 39բ.—1886 ամի։

թ. 45բ.—Ի 1887 ամի։

թ. 52բ.—1888 ամի։

թ. 54ա.—Տոմար սեագրութեանց չափարերական մատեան Սուրբ Գէորգ եկեղեցւոյն Իգդիրմանայ յեղջ, կազմեալ ի 1882 ամի և 1-ն յունիսի։

թ. 55ա.—1883 ամի։

թ. 56բ.—1881 ամի։ 1882 ամի։

Ամբ փեսային, ամբ հարսին, որոյ իաչեղբայրութեամբ, (թ. 57ա) ընդ ձեռն ո՞ր քահանայի պսակեցան, որո՞ւմ վկայութեամբ։

թ. 57բ.—1883 ամի։

թ. 58բ.—1884 ամի։

թ. 60բ.—Պսակ 1885 ամի։ 1886 ամի։

թ. 61բ.—1887 ամի պսակելոց։

թ. 66ա.—Վասն օրինակատարութեան ննջեցելոց 1879 ամի։

թ. 66բ.—Համար, օր մահվան, օր թաղման, անուանք վախճանողաց ու ծնողաց, 1879 ամի, ամբ արականաց, ամբ իգականաց, (թ. 67ա) ի ձեռն որոց քահանայից թաղեցան, որոց վկայութեամբ։

թ. 68բ.—Վասն 1880 ամի։

թ. 70բ.—1881։

թ. 73բ.—1882 ամի։

թ. 75բ.—1883 ամի։

թ. 77բ.—1884 ամի վախճանելոց։

թ. 79բ.—1885 ամի։

թ. 81բ.—1886։

թ. 84բ.—1887 ամի վախճանելոց։

թ. 86բ.—1888 ամի։

№ 274

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթերը՝ 18։—**Պրակները**՝ 1։—**Մեծությունը**՝ 33.1×24.1×0.3 սմ.։—**Նյութը**՝ գծավոր բարակ դիմացկուն թուղթ։—**Կազմը**՝ գունավոր հատ թուղթ։—**Պահպանակներ**՝ չունի։—**Վիճակը**՝ լավ։—**Գրությունը**՝ միասյուն։—**Դատարկ թղթերը**՝ 1բ, 7բ և 18բ։—**Տողերը**՝ 42։—**Գծումները**՝ թուղթը ինքնին գծավոր է։—

Գիրը՝ նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ստացված է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի գրադարանից 1964 թ. դեկտեմբերին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Վկայութիւնք Աստուածաշունչ սբ. Գրոց՝ Հին և Նոր Կտակարանաց:

Ի սբ. Խորհուրդն Երրորդութեան:

Ի Գրոց Ծննդոց:

Թ. 2ա.—Կանոն աւրհնութեան Սուրբ իւղոյն հիւանդաց, յորում աւուր հանդերձի իւղոյն աւրհնութեան:

Թ. 5բ.—Կարգ աւծութեան հիւանդաց:

Թ. 8ա.—Կարգաւորութիւն ընտրութեան և ձեռնադրութեան Եպիսկոպոսի:

Թ. 17ա.—Սահմանք և օրինադրութիւնք, զորս ուսուցանէ Եպիսկոպոսապետն նմա, զոր ձեռնադրեացն:

№ 275

ԴԻՈԳԻՆԷՍ

Թերթերը՝ 41:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 31.2×23.8×0.3 սմ.:—**Նյութը՝** հասարակ բարակ դեղնած թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակները՝** սկզբից մեկ հասարակ թուղթ, վերջինը ընկել է:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 2բ և 3բ:—**Տողերը՝** անկանոն, 26—29:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** շղագիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** Հ. սարկավագ Նազարյանց, հետագայում Էմմանուել քահանայ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1892 թ.:—**Վայրը՝** Թիֆլիս:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1965 թ. փետրվար ամսին ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Յոյն իմաստուն Դիոգինէս, Թիֆլիս, տպարան, 1892 (հետագայում ջնջված և գրված է 1894, և ապա 1898 թ.):

Թ. 2ա.—(Նույնը, միայն թվականը 1894 է):

Թ. 3ա.—Գրքիս յօրինողը օգտուել է հետևեալ աղբիւրներից (տրվում է 9 աղբյուր, որոնցից 5-ը հայերեն և 4-ը օտար լեզվով):

Թ. 4ա.—Յոյն իմաստուն Դիոգինէսը.

Ա. Սոկրատէսի աշակերտները:

Թ. 7ա.—Բ. Դիոգինէսը դառնում է Անտիսթենէսի աշակերտը:

Թ. 9բ.—Գ. Ինչպէս էր ապրում Դիոգինէսը:

Թ. 12ա.—Դ. Ինչպէս Դիոգինէսին ծախեցին ի ստրկութիւն:

Թ. 13բ.—Ե. Դիոգինէսը Քսենիադէսի մօտ:

Թ. 15բ.—Զ. Դիոգինէսի զրոյցները իր աշակերտների հետ—թէ որքան քիչ բան է հարկաւոր մարդուս:

Թ 17ա.—Է. Դիոգինէսի վերաբերութիւնը դէպի մարդկանց խօսք ու զրոյցը:

Թ. 19ա.—Ը. Ծերունին ու անհոգի հարուստը:

Թ. 21ա.—Թ. Կեղծաւորութեան ու միւս յանցանքների յանդիմանութիւնը:

Թ. 24բ.—Ժ. Ինչպէս Դիոգինէսը պաշտպանեց անմեղին:

Թ. 26բ.—ԺԱ. Դիոգինէսն ու Բակքիդէսը:

Թ. 29ա.—ԺԲ. Դիոգինէսի զրոյցը Փիլոմետոնոսի հետ՝ աշխատանքի ու հարստութեան մասին:

Թ. 31ա.—ԺԳ. Մարդուս իրաւունքների և դէպի իր հասարակութիւնն ունեցած պարտաւորութիւնների մասին:

Թ. 33ա.—ԺԴ. Դիոգինէսն ու Ալեքսանդր Մակեդոնացին:

Թ. 36.ա—ԺԵ. Դիոգինէսի ծերութիւնն ու մահը:

Թ. 37բ.—ԺԶ. Դիոգինէսի աշակերտները:

Թ. 39բ.—Ռուսերէնից թարգմանեց

Սարկաւագ Յ. Նազարեանց (որ հետագայում ջնջվել է և գրվել հետևյալը) Էմմանուէլ քահանայ Նազարեանց:

Թ. 40ա.—Ցանկ:

№ 276

ՎԷՔՍԻԼ

Թերթերը՝ 10:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 35×22×0.2 սմ.:—**Նյութը՝** բաց կապտավուն հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակները՝** սկզբից և վերջից մեկական թերթ նույն թղթից:—**Վիճակը՝** բավարար, սակայն գրության առաջին թերթը ընկել է:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ և 7ա—10բ:—**Տողերը՝** անկանոն, 44—46 և երբեմն էլ ավելի նվազ:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** թ. 3-ում նկարված են երկու եռանկյուններ, որոնց մեջը գրություն կա, իսկ կողքերին էլ փոքրիկ զարդեր:—**Գրիչը՝** Ստեփանի որդի Ասլան Զոհրապյան:—**Պատվիրատուները՝** Տեր Հովհաննեսի որդի Էստատե, և սրա եղբոր որդի Տեր Մեսրոբ և Եսայի:—**Ծաղկողը՝** նույն ինքը գրիչն է:—**Ժամանակը՝** 1804 թ.:—**Վայրը՝** Բեղլեհեմ (Վրաստան):—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից 1965 թվականի փետրվար ամսին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 4ա.—Մեք Բեղլեհեմու Տէր Յոհաննէշի որդի Էստատէս, և իմ եղբօր որդի Տէր Մեսրոբն և Եսային զայս կարճառօտ թուղթս ետուք քեզ մեր Եկեղեցւոյ Աւագ քահանայ Տէր Ստեփաննոսիդ, որ մեք զգինս անօթիցն Եկեղեցւոյն պարտիմք հատուցանել յիսուն թուման, և առ այսմ պարտիմք հատուցանել յամենայն գլուխ տարւոյն վեց թուման, այժմ ևս պարտէաք հատուցանել վեց թուման, բայց որովհետեւ սնկնեալ էաք, ի պատճառս մահուան. վասն որոյ կրկին պայմանեալ ժամանակ խնդրեցաք մինչև ի վերջն ապրել ամսոյն, եթէ ստիցեմք յայսմանէ,

որն և գրեալ գրաւ կալ ի Ա.Ն.Ջ տուեալ ի գրութեան սերուս, յայնմանէ իսպառ զատեալ և միկենալ գտա-նիցիսք, գրեցաւ ՌՄԴ (1804 թ.) թուին փետրուա-րի ԺԲ-ին, ես Էստատէս այս գրութեան դաբուլ եմ, ես Տէր Մեսրոպս և Եսայիս այս գրութեանս դաբուլ ենք։

Էստատի և Տէր Մեսրոպի և Եսայու խնդրանօքն գրեցի, և վկայիմ մանրաձախաց ուստաբաշի նուաստ ծառայ Ասլան Ստեփանոսի որդի Զօհրաբեան։

Որոց իսկքն վրացերէն տեսեալ ի հայ բարբառ հաստատեալ նոցին թարգմանեցի Սնակաշէն Եկեղեցւոյ անարժան սպասաւոր Տէր Եսայի ազնուատոհմն Ա-բէդինեան։

Որոց ի հայ թարգմանեալն տեսանելով. համեմատ նոցին արտագրեցի անարժան ծառայ Իգնատիոս Տէր Ստեփաննոսեան Տէր Միխիթարեա սպասաւորացն Բնդլեմէմու։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Թ. թ. 5ա և 5բ-ում կա երկու արձանագրություն 17 մարտի 1805 թվականի, իսկ թ. 6բ-ում էլ մի ուրիշ արձանագրություն 5 հունիսի 1810 թվականի։

Թ. 10բ.—Համար 160։

№ 277

ՅԱՅՍՍԱՒՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 196։—**Պրակները՝** այժմ պակասավոր և անկանոն։ Սկզբում եղել է յուրաքանչյուրը 12-ական թերթից, սակայն ներկայիս բոլոր պրակներն էլ թերի են և պակասում են բազմաթիվ պրակներ։ Եղածներն էլ հետ ու առաջ են ընկել։ **Մեծությունը՝** 44.3×32.6×4.3 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմը՝** սկզբնական կազմը ընկել և կորել է։ Այժմ ունի ստվարաթղթյա մի շատ հասարակ կազմ։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** անբավարար, խիստ վնասված, պակասավոր սկզբից, միջից և վերջից։—**Գրությունը՝** երկսյուն։—**Դատարկ թերթեր՝** չկան։—**Տողերը՝** 41։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի բավականին սիրուն զարդագրություն, որտեղ օգտագործված են միայն երեք գույն՝ դեղին, կարմիր և կապույտ։ Ձեռագրում կան բազմաթիվ լուսանցազարդեր, ծաղիկներ, դիմագծեր, թռչուններ, զարդագրեր և թռչնագրեր։ Կան նաև չորս հատ հասարակ գլխազարդեր (թթ. 22ա, 57բ, 98բ և 145ա), մի հատ տաճար (թ. 65բ) և երկու հատ միացյալ սիրուն ձկնագիր և թռչնագիր (թթ. 16ա և 113բ)։—**Գրիչը՝** Նիկողայոս։—**Պատվիրատուները՝** մահտեսի Մինաս և մահտեսի Հարություն։—**Մաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** ԺԶ.—ԺԷ դարեր։—**Վայրը՝** անհայտ։—**Մանրությունը՝** սույն ձեռագիրը նվեր է ստացված Ռումինիո և Բուլղարիս հայոց թեմերի առաջնորդ գեղաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանի կողմից։ 1965 թ. հունվար ամսին Սոֆիայից Էջմիածին է բերված Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գեղաշնորհ տ. Կոմիտաս եպս. Տեր-Առեփանյանի միջոցով։

ՀԻՇԱՏԱԿԱՊԱՆՆԵՐ՝

(Ձեռագրի գլխավոր հիշատակարանը ընկել է վերջին թերթերի թափվելուն պատճառով, սակայն մնացյալում կան 128 մանր հիշատակարաններ, որոնցից տալիս ենք մի քանիսը միայն, կրկնություն չանելու համար։

Թ. 11բ.—Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Մինասին և ծնողացն Մնացականին և Եթարին, և գրողի սորին Նիկողայոսին, և ծնողաց նորին, և ամենայն աշխատաւորաց, ընթերցողիս և ունկն դնողաց, և Աստուած ողորմի ապացողաց. ամէն։

Թ. 13ա.—Որոյ սրբոյ աղօթ(թ. 13բ)իւքն ողորմեա Քրիստոս Աստուած ստացողի գրոցս մահտեսի Յարութենին, և ծնողացն Սարգսին և Հասոմին, և եղբօրն Գաբրիէլին, քերցն Մարիանին և Կատարին, հօրեղբօրն Տէր Առաքելին, և ամենայն աշխատաւորաց, ընթերցողաց։

Թ. 14բ.—Որոց մաղթանօք ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս Մինասին և իւր ծնողացն Մնացականին և Եթարին, և հօրեղբօրն Տէր Խաչատուրին, և ամենայն աշխատաւորաց սորին, ընթերցողիս և լսողացդ, և։

Թ. 16ա.—...և ինձ անարժան և հողի հաւասար Նիկողայոս գծողի և ծնողացն իմոց Տէր Սարգսին և Հէրիքնազին և ամենայն աշխատաւորաց սորա։

Թ. 20ա.—...և ինձ մեղապարտ և անարժան և թշուառացեալ գծողիս, և ծնողացն իմոց...

Թ. 25բ.—...և սրբագրողի սորա Տէր Սարգսին, և գծողի Նիկողայոսին, և թուղթ կոկողին, և գաղափան շնորհողին և ամենայն աշխատաւորաց, ընթերցողաց։

Թ. 40բ.—...և բազմամեղ Նիկողայոս գծողի...

Թ. 44բ.—...և գծողի, և սրբագրողի, և ամենայն արեան առու մերձաւորացն։ Ընթերցողաց։

Թ. 54ա.—...Եւ ամենայն արեան առու մերձաւորացն, և գծողի, և սրբագրողի, և ամենայն աշխատաւորաց սորա։ Ընթերցողաց և լսողաց, և զողորմի ասողաց. Ամէն։

Թ. 67բ.—...Եւ ինձ եղկելոյս Նիկողայոս գծողի, և ծնողացն իմոց Տէր Սարգսին և Հէրիքնազին, և մեզ տօնողացս, և զողորմի ասողաց։ Եւ ամենայն աշխատաւորացն։ Ընթերցողիս և լսողաց։

Թ. 98բ.—...Եւ բազմամեղ գծողին, և ծնողացն Տէր Սարգսին և Հէրիքնազին, և ամենայն աշխատաւորաց սորա և օրինակ շնորհողին...

Թ. 176բ.—...և ամենայն արեան առու մերձաւորքն ի դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

(Գրված կազմի առաջին երեսին)

Նվեր գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանից։

25 դեկտեմբերի 1964 թ. Սոֆիա։

Մայր Աթոռ ս. Էջմիածնի ձեռագրաց մատենադարանին։

Թ. 51բ.—Սրտացողը Սուրբ Գրուս Սալմախանին, ծնողաց Վարդանին, Թումիանին, և կողակցիաց Ցեղսումին, Թամամին, վորդոցն Ավետիքն, հարս Շուշանին, զամենա....

Թ. 52բ.—Տիրացու Պողոս գրե:

Թ. 98բ.—Ստացավ սուրբ Գիրքըս Իմիլին ստինի կուղակից և ԼՕՆՀՆ:

№ 278

ՀԱՒԱՔՈՒՄՆ Ս. ԳՐՈՑ

Թերթերը՝ 651:—**Պրակները՝** 81, յուրաքանչյուրը 8-ական թերթից:—**Մեծությունը՝** 19×12.3×5.1 սմ.:—**Նյութը՝** ողորկ մաքուր սպիտակ թուղթ:—**Կազմը՝** կլիոնկայով ծածկված հաստ ստվարաթուղթ: Կոնակը կաշի: Կազմի վրա կա հետևյալ համարը՝ 28/Հ—37:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կանաչ հասարակ բարակ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 1բ—3բ, 5ա, 5բ, 10ա, 10բ, 644բ—651բ:—**Տողերը՝** 19—20:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգրի և շղագրի խառնուրդ:—**Զարդագրությունը՝** չկա:—**Գրիչը՝** Տարոնեցի Ավետիս վարդապետ Հովհաննիսյան:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1892 թ.:—**Վայրը՝** Ցաֆֆա (նախկին Պաղեստին, այժմ Իսրայել):—**Ծանոթություն՝** 1965 թ. փետրվարի 27-ին ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 4ա.—Ցառաջաբան.

Աս գրքիս նպատակն է ձեռնտու ըլլալ

Նախ՝ Աւետարանի քարոզիչներուն՝ իրենց առանձնութեան սենեակին մէջ, իրենց ժողովուրդին այցելութիւն ընելու ատենները, և հրապարակական պաշտօններուն մէջ:

Բ. Դպրատանց վարժապետներուն և տղայոց քրիստոնէական դասատուութիւն ընողներուն:

Գ. Աղքատաց, հիւանդաց և նեղեալներու այցելութիւն ընողներուն:

Դ. Ընտանիքի տէրերուն՝ որ իրենց զաւակները և ծառաները կրթել կուզեն:

Ե. Ան անձինքներուն՝ որոնք մէկտեղ կը ժողվուին Սուրբ Գիրքերը ուսանելու՝ իրարու շինութեան համար:

Թ. 4բ.—Զ. Ան հեղինակներուն, որոնք կրօնական գիրքերը կը շարադրեն:

Է. Ամէն աստիճանի մարդոց՝ որոնք առանձնակի Սուրբ Գիրքերը սորվելու կը պարապին:

Արդ՝ կը հրատարակենք ասիկայ խոնարհութեամբ աղօթք ընելով առ Աստուած, որ Աստուծոյ և մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանը դիւրին հասկցուելու միջոց մը ըլլայ Հոգւոյն Սրբոյ օրհնութեամբը:

Թ. թ. 6ա—637բ.—Հաւաքումն Սուրբ Գրոց (տեքստը):

Թ. թ. 638ա—644ա.—Ցանկ ըստ կարգի այբուբենից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Հաւաքումն Սուրբ Գրոց.

Ի պէտս քարոզչաց, հեղինակութեանց, մանկանց դպրոցաց, նաև ամենայն անձանց բարեպաշտ տանուտերաց և համայն ընտանեաց:

Գրեալ ձեռամբ Տարօնեցի Աւետիս վարդապետիս Յովհաննէսեան, քաղեալ ի յՈսկանատիպ Աստուածաշնչէն զգուշաւոր դիտողութեամբ:

1892—Ի Յոպպէ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—61:

Н. 203—15 декабря 1904 г.

28/Հ—37:

3832:

Մայր Աթոռ—Գրադարան—ս. Էջմիածին (Էլիպսաձև կնիք):

Էջմիածնի հոգևոր ճեմարան

Эчмиадзинская Духовная Академия.

(կլոր կնիք):

Թ. 3բ.—(Կարմիր թանաքով գրված է)

Дозволено цензурою,

16 декабря 1904 г. г. Тифлисъ

(ապա հետևյալ կլոր կնիքը)

Кавказскаго Цензурнаго Комитета.

Թ. 13ա.—3832:

(Ճեմարանի կլոր և գրադարանի էլիպսաձև երկու կնիքները):

Թ. 637բ.—(Ճեմարանի կլոր կնիքը):

№ 279

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 45.4×32.7 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չկան:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթեր՝** չկան:—**Տողերը՝** 36:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** կոնդակի վերևի մասի ձախակողմում կան երկու սիրուն մեծ թռչնագրեր, մի թռչուն և մի գեղեցիկ զարդ: Սրա դիմաց կոնդակի աջակողմյան կողմը կա երկհարկանի մի սիրուն գմբեթ, վեց խաչերով: Սրանց երկուսի ճիշտ մեջտեղը կա մի մեծ արեգակ իր ճառագայթներով, որի մեջտեղը կա Եփրեմ կաթողիկոսի հայրապետական կարմիր կնիքը, կլոր, 45 մմ. տրամագծով: Կնիքի կենտրոնում նկարված է Քրիստոս, որի գլխի ձախ ու աջ կողմերում գրված է «ՅՍ.» և «ՔՍ.», իսկ կնիքի ծայրամասի շրջանակում մեծատառ երկաթագրով գրված է հետևյալը.—«(Է) Ծնորհիւ Տ(եառ)ն Տ(է)ր Եփրեմ Կ(ա)թուղիկոս Ամենայն Հայոց ՌՄԾԹ (1810)»: Այլն կնիքի վերևում, կոնդակի կենտրոնում նկարված է մի փոքր արեգակ իր ճառագայթներով, որի մեջ նկարված է մի եռանկյուն աչք:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** ս. Էջմիածնի Եփրեմ Ա Զորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոս (1809—

1530 թթ.)։—**Մաղկողը**՝ անհայտ։—**Ժամանակը**՝ 2 մայիսի 1822 թ.։—**Վայրը**՝ Շուշի (Լեռնային Ղարաբաղ)։—**Մանոթություն**՝ 1965 թ. փետրվարի 27-ին ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի ձեռամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յիսուսի Քրիստոսի ծառայ և շնորհիվ Նորին Տէր Եփրեմ Կաթուղիկոս Ասիական Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Աստուածաշնչի և Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաև մեծի Մայր Աթոռոյն Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Հանճարապետական գերառատ սիրով և օրհնութեամբ նուիրեմք զողջոյն Քրիստոսական սիրելի որդւոցդ մերոց և լուսածնունդ հրեշտակ զաւակացդ Մայր Աթոռոյն լուսոյ՝ որք կայք բնակեալ ի Տիրապետն և ի Կայսերախնամ քաղաքդ Եղիսաբեթապոլ՝ սրբագործ քահանայից՝ Աւագաց և Երկրորդաց, գերագոյն Իշխանաց և առհասարակ ժողովրդականաց մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, եկաց և բնակաց՝ ի Տէր խնդալ միշտ զուարճութեամբ հոգւոյ։

Շնորհք, սէր, ողորմութիւն, խաղաղութիւն և ամենաքաղցր ակնարկութիւն Սրբոյ Երրորդութեան հանդերձ սքանչելաճիրաշ զօրութեամբ քրիստոսամոխ Սրբոյ Գեղարդեանն, և պահպանութեամբ Աջոյ Սրբոյ Լուսաւորչին և Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին և այլ ամենայն Աստուածային Սրբութեանց և Մասանց Սրբոց ի Մայր Աթոռն լուսոյ զնտեղեալ գումարելոց, ծաւալեսցի ի վերայ ձեր և լցուսցէ զձեզ առատաստեամբ բարեաց հոգւոյ և մարմնոյ՝ բառնալով ի ձէնջ զվիշտ և զենդութիւն և վանելով զամենայն ներհակս բերեալս։

Գիտութիւն լիցի սիրելութեան ձերում, զի մեծաւ հաւատով և կատարելագոյն ջերմեռանդութեամբ առլցեալ թուղթ ձեր ժամանեաց առ մեզ հանդերձ ընծայիւք ձեռամբ արժանապատիւ Տէր Մկրտիչ պարկեշտակրօն քահանային Աւագով Խալիֆեանց։ Արդարև վշտացաք յոյժ ընդ վշտակցութիւնս ձեր ի բազմութեան վնասարարն մարախաց, ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի թէ զիւանդանալ և ես ոչ հիւանդանամ. և այլն։ Բարի էր խնդիրն ձեր և հաճոյ կամաց մերոց, ըստ որում պտուղ մեծի հաւատոյ կատարեալ զղջման և ջերմեռանդութեան, զոր և արժան իսկ էր կատարել առանց զանցառութեան, առաքելով զաքանչելագործ Աջ Սրբազան Հայրապետին Յակոբայ թէ ի սէր սիրելի որդիութեան ձերոյ և թէ ի պատիւ յարգոյ Անտոն Արքեպիսկոպոս սիրելւոյ մերոյ և արժանապատիւ յաջորդ Խաչատուր վարդապետ և նստար Յոհաննէս վարդապետ խաչակիր սիրելի որդւոցն մերոց. զի և նոքա գրեալ էին յատկապէս զթուղթ աղերսանաց առ այս։ Բայց յաղագս բանաւոր իմն պատճառի առ այժմ անկարելի եղև առաքել զսուրբ Աջն հրաշալի. որպէս ունի պատմել սիրելիութեան ձերում Տէր Մկրտիչ խոհեմափայլ քահանայն։ Ուստի փոխանակ պատճառին զգործն առաքեցաք զհրաշագործնալ Աղբերն բժշկութեան զջուրն նոյն Սրբազան Հայրապետին՝ որ ի սմին աւուր բերեալ եղև աստանօր ի յոմանց ջերմեռանդագուցից յԱւագ լեռնէն Մասեաց հանդերձ իսաչալուսային գնտարգել Սուրբ Նշանին և սրբասանալ Աջոյ նոյն Սրբազան Հայրապետին, յորոց լուսամբ ըստ մեծութեան հաւատոց ձերոց ներգործիլ ի ձեզ շնորհք հրաշից և սքանչելեաց իբրև ի սրբասանալ Աջոյ աստի, և բառնիլ խպաղ բազմութեան մարախացն վնասաբերաց յանդից և յանդաստանաց ձերոց։ Որ և մեք մաղթեմք յԱստուծոյ հնդուլ ի ձեզ առատապէս զշնորհն մեծի գթութեան և ողորմութեան՝ իւրոյ և ուրախ առնել զձեզ զամենեսեան արագահաս օգնականութեամբ բարեխօսութեան Սրբոյն Յակոբայ Ամէն։

Ողջ լերուք։

Աղօթարար վասն ձեր յամենայն սրտէ

վշտալի Եփրեմ.

1822 Մայիս 2.

Ի Շուշի։

№ 280

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1։—**Պրակները**՝ 1։—**Մեծությունը**՝ 35.4×22.2 սմ.։—**Նյութը**՝ մաքուր հաստ դեղնավուն թուղթ։—**Կազմ**՝ չունի։—**Պահպանակներ**՝ չունի։—**Վիճակը**՝ լավ։—**Գրությունը**՝ միապուն։—**Դատարկ թերթերը**՝ չունի։—**Տողերը**՝ թ. 1ա՝ 4 տպագիր և 23 ձեռագիր, թ. 1բ՝ 11 ձեռագիր։—**Գծումները**՝ առանց ճնշումի, աչքի չափով։—**Գիրը**՝ շեղագիր։—**Զարդագրությունը**՝ չունի։ Կոնդակի վերևում և կենտրոնում կա միայն հայրապետական կարմիր կնիքը 3×2.8 սմ. չափերով։ Կնիքի վերևի մասում մի կիսատ արեգակի մեջ նկարված է մի գառնուկ, որ դրոշակ է բռնած։ Իսկ ներքևի մասում երկաթագիր գրված է հետևյալը՝ «Մկրտիչ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց—ՌՅԽՒ—1893»։—**Գրիչը**՝ անհայտ։—**Պատվիրատուն**՝ ս. Էջմիածնի Մկրտիչ Ա վանեցի Ամենայն Հայոց կաթողիկոս (1892—1907 թթ.)։—**Ժամանակը**՝ 23 փետրվարի 1906 թ.։—**Վայրը**՝ ս. Էջմիածնի վանք։—**Մանոթությունը**՝ 1965 թ. փետրվարի 27-ին ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի ձեռամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Տպագիր) Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի (ձեռագիր) Տ. Արսէն վարդապետի Ղլտճեան ծանուցանմամբ։

Տեարք անդամք Սինոդի Սրբոյ Էջմիածնի ի 27-րդում աւուր այսր փետրուարի անձամբ անձին դէմ յանդիման **լեալ լեալ** Մեզ, բանիւ բերանոյ ծանուցին Մեզ մանրամասն իմն եղանակաւ զրովանդակութիւն յայտարարութեան Ձերոյ, տուեալոյ յանուն Նորին Սինոդի ի 20-ն փետրուարի 1906 ամի ընդ թ. 30։

Հասու լեալ Մեր մտաց բովանդակութեան յայտարարութեան Ձերոյ, այլ և անպատշաճ և վիրաւորիչ դարձուածոց, զորս Ձեր ուղղեալ է յանուն Սինոդի Սրբոյ Էջմիածնի, որ միանգամայն անվայել է աստիճանի և կոչման Ձերում, վշտացաք ի սիրտ և ի հոգի: Ի յայտարարութենէ Ձերմէ տեսանի, զի եթէ Դուք անցեալ էք առաւել քան զչափն, որ ոչ է ներելի անմիջապէս ստորադրեալ պաշտօնէի ումեք. ո՛չ էիմ և ո՛չ են իսկ Ձեզ իրաւունք վիրաւորանս յանուանս հասուցանելոյ բարձրագոյն հոգևոր ատենի, որոյ նախագահն է ընտրեալ Հայրապետն Ամենայն Հայոց և գլուխ լրութեան Հայաստանեայցս Եկեղեցւոյ: Դոյնօրինակ անզուսպ վերաբերմունք Ձեր առ հոգևոր բարձր իշխանութիւնն պատժելի են ըստ օրինի: Վասն որոյ այսու Հայրապետական Կոնդակաւ մերով նախ՝ արձակեմք զՁեզ ի պաշտմանէ փոխանորդի վիճակին Հայոց Աղէքսանդրապոլու, կարճելով զտուչութիւն ոճակի Ձերոյ ի 1-ն Մարտի այսր ամի, երկրորդ՝ պատուիրեմք Ձեզ յանձնել Հոգևոր կառավարութեան տեղւոյդ զամենայն հաշիւս (թ. 1բ) և զկաճ կարասիս յաջորդարանի ըստ սահմանեալ կարգի, երրորդ՝ զրկեմք զՁեզ յիրաւանց կրելոյ ի գլուխ Ձեր զվեղար և արկանելոյ զձեօք զփիլոն և չորրորդ՝ խստիւ պատուիրեմք Ձեզ ելանել, գնալ ի վանս Սեվանայ առանց մտանելոյ ի Ս. Էջմիածին և անդ կալ մնալ զամիսս վեց:

Մ(կրտիչ) Կ(աթողիկոս) Ա(մենայն) Հայոց
ի 23-ն փետրուարի 1906 ամի
և ըստ Տոմարիս ՌՃԾԸ.
ի Հայրապետութեան մերում ԺԳ ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածին
ի Վաղարշապատ
Թ. 223

№ 281

ԿՈՆԴԱԿ

Թերթերը՝ 1:—**Պրակները՝** 1:—**Մեծությունը՝** 35.4×22.2 սմ.:—**Նյութը՝** մաքուր հաստ դեղնավուն թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթեր՝** 1բ:—**Տողերը՝** 4 տպագիր և 20 ձեռագիր: **Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** շղագիր:—**Զարդագրությունը՝** չունի: Կոնդակի վերևում կա միայն Հայրապետական կարմիր կնիքը, ինչպես նկարագրված է նախորդ կոնդակում:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյան Հայրիկ:—**Ժամանակը՝** 11 մարտի 1906 թ.:—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** 1965 թ. փետրվարի 27-ին ստացված է հոգևոր ճեմարանի գրադարանից հոգեշնորհ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Նույն տպագիր չորս տողը, ինչպես նախորդում).

(Ձեռագիր) հոգեշնորհ տ. Արսէն վարդապետի Ղլտճեան ծանուցանեմք:

Ընկալեալ Մեր զհեռագրական միջնորդութիւնս խորհրդոյ միացեալ հոգաբարձութեան եկեղեցականաց ինչական դպրոցաց տեղւոյդ, որովք խորհուրդն խընդրէ ի Մէնջ թեթ(և)ացուցանել զպատիժսն՝ զնդեալսն ի վերայ Ձեր Հայրապետական կոնդակաւ մերով ի 28-ն փետրուարի տարւոյս թ. 223, այլ և ի նկատ առեալ Մեր զհայցուած Ձեր վասն ներման, զարտայայտեալ ի հեռագրի Ձերում ի 10-ն այսր Մարտի, այսու Հայրապետական Կոնդակաւ մերով ոչ եթէ թեթևացուցանեմք զպատիժսն, զնդեալսն ի վերայ Ձեր կոնդակաւ մերով թ. 223, այլ ի սպառ բառնամք զայնոսիկ ի Ձէնջ, վերստին հաստատելով զՁեզ ի պաշտման փոխադրութեան վիճակին Հայոց Աղէքսանդրապոլու մինչ ցառանձին տնօրէնութիւն Մեր:

Մ(կրտիչ) Կ(աթողիկոս) Ա(մենայն) Հայոց
ի 11-ն Մարտի 1906 ամի
և ըստ Տոմարիս ՌՃԾԸ
ի Հայրապետութեան մերում ԺԳ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 280:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Բուլղարիայի Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքին՝ նրա ընտրության և գահակալության առթիվ 3

Վեհափառ Հայրապետը Ժնևում 4

Էթովպիայի քույր եկեղեցու Նորին Սրբություն Աբունա Թեոֆիլոսի ընտրությունն ու գահակալությունը 6

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Նորին Սրբություն Տ Մաքսիմ Սրբազան Պատրիարքի ընտրությունն ու գահակալությունը 9

Հովվական այցելություն 12

ԱՐՏԱՇԵՍ ՍԲԿ. ՄՈՒՇԵՂՅԱՆ—Ամերիկայի Միացյալ Նահանգաց հայոց եկեղեցու երիտասարդաց կազմակերպության անդամները Մայր Աթոռում . . . 15

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ—Ներբող սուրբ Աստվածածնի 18

Տաղ սուրբ Աստվածածնի 21

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ԳՈՒՇԱԿՅԱՆ—Սուրբ Աստվածածնի տոները 23

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ 26

ԲԱՐԳԵՆ ԵՊՍ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ—Հուշեր Գարեգին Ա Կիլիկիո կաթողիկոսեն . . 28

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հիմնադրության հարյուրմիսունամյակի առիթով 31

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ—Հայոց Հայրապետների շիրիմների մասին . . 42

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ—Հայկական շարականների աղբյուրները . . . 47

Հ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Ներքին Թալին գյուղի ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները . . . 52

Հուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 65

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 10/VIII 1971 թ., Ստորագրված է տպագրության 14/IX 1971 թ.
Տպագրական 4,5 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 561

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1971 թ.